

# ՊԵՏՐՈՍԻ ԵՎԱՆԿԻ<sup>Հ</sup> ԲՐԱՄԱՐ

№ 46 - 47

№ 46 - 47

ՃԻՐՎԱՐԱԳԵ

ՎԱՐԴԱՆ ԱԶՐԱԽՄՅԱՆ

ՊԵՏՐՈՍԻ ՀՐԱՄԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ

891.99  
Ը-66

1934

-5 NOV 2011

- 5 NOV 2011

ՊԵՏԱԿԱՆ ԽՖԱՆԱԳԻՐՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 46—47

№ 46—47

891.99

Հ-66

ՇԻՐՎԱՆԶԱԴԵ

ԱՐ

# ՎԱՐԹԱՆ ԱՀՐՈՒՄՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԱԶՐՈՒՄՅԱՆ

1

Մի ականատես պառավ, վոր ապրեց մինչև տասնուիններորդ դարի վերջին տարին, պատմում եր, թե այն որը սոսկալի որ եր, յերբ աշխարհ յեկավ Վարդան Ահրումյանը։ Իբրև թե յերկինքը շարունակ վորոտում եր, յերբեմն մոնչում ամենի գազանի պէս. մթին ամպերը, զեկը կորցրած նավերի նման, տատանվում եյին, չիմանալով ուր գնալ։ Բայց անձրև չեր գալիս, և չեկավ ամբողջ որը։ Յերկիրը խավարվել եր, կատաղի հողմից բարձրացող փոշին վոլոր-մոլոր պտույտներ եր գործում փողոցներում և քաղաքին տալիս վիթխարի աղորիքի տեսք։

Աշխարհագրական մեծ քարտեզում այս քաղաքը, հարկավ, ունի յուր վորոշ տեղն ու վորոշ անունը։ Գոնե զնդասեղի գլխիկից շատ փոքր մի կետ ցույց է տալիս, թե նա գտնվում է Սև ու կասաղից ծովերի մեջտեղում, կողկասյան լեռնաշղթայի ստորոտում։ Յուր արտաքին տեսքով, մանավանդ ներքին կենցաղով, վարքով, ու բարքերով, անցյալ ու ներկա-

57

38

Պատ. խմբ.՝ Ա. Հայրյան, տեխ. խմբ.՝ Տ.  
[redacted], սրբագրիչ՝ Հ. Մանավագյան  
Քլավիտ 8411 (թ), պատվեր 159. հրատ.  
2835, Տիրամ 5000;  
Գետհրատի տպարան՝ Յերեկան։

Հանձնված եւ առտադրության 24 I 1934 թ  
Ստորագրված եւ տպադրության 5 V 1934 թ.



յով, խելոք ու հիմար ավանդություններով ու սովորույթներով նա այնքան նման է կովկասի մյուս քաղաքներին, վոր հարկ չկա նրա իսկական անունն այստեղ հիշելու: Թող ուրեմն, նա կրի մի անգործ կատակարանի հնարած կեղծանունը—Զիլզիլ: Յես չատ չնորհակալ եմ այդ կատակարանից, վորովհետեւ նա ինձ ապառում ե ընթերցողի հետաքրքրություն առված անողոք հալածանքից, վոր յերբեմն խեղճ վիպասաններին յենթարկում ե ինկվիդիցիայի:

Վարդան Ահրումյանի ծնունդը կատարվում եր Զիլզիլ քաղաքի միջին մասում, վորքրիստոնյաների թաղը բաժանում եր մահմեդականների թաղից, մի տափակ կտուրով միհարկանի քարաշեն տան մեջ: Դրսի կողմից այս տունն ուներ միայն մի զուսամուտ, քողավորված յերկաթե ամուր ցանցով, յերկու խուլ պատուհաններ և մի ահապին դարպաս, վորմիշտ փակ եր յերկու հաստ նիզերով: Զորոշարք յերկաթե զամեր, վորոնց գլուխներն ունեյին սունկերի մեծություն, այս դարպասին տալիս եյին միջնադարյան շուք իրանց ժանգով: Մայլությունը կրկնապատկվում եր լուսամտի յերկաթե ցանցի թանձր փոշով ու սարդի խիտ վոստայններով, վորոնց մեջ հանդչում եյին անթիվ ճանճեր: Նայողն ակամա կարծում եր, թե ահա, ահա տան քի-

ժայրից կերեա պահապան զինվորը հրացանն ուսին, և լուսամտից կնայե թշվառ բանտարկյալի կանաչ—դեղնագույն ուռած դեմքը:

Եատ քչերն եյին ներս մտնում այդ դարպասի մեջ բացված փոքրիկ կամարաձև դռնով, կանխապես զարկելով նրա վրա քաշ արած հաստ ու կեռ յերկաթե զարկոցը, վոր նույնպես ժանգումվել եր քիչ գործածվելուց: Յեվ նրանք, վորոնք մտնում եյին, դուրս եյին դալիս վոչ ուրախ դեմքով:

Այստեղ եր բնակվում Զիլզիլ քաղաքի հայտնի վաճառական Բաղդասարը, Պարսից վերջին խանի ախոռապետ Ահրումի թոռը: Հայտնի՝ վոչ այնքան յուր հարստությունով կամ ծաղումով, վորքան անմատչելի, ժանտ, նույնիսկ մարդատյաց բնույթով: Այս մարդը խույս եր տալիս հարեաններից, ատում եր ազգականներին (և իրավունք ուներ, վորովհետեւ չատերը ձրիակերներ եյին), իսկ բարեկամներ գրեթե չուներ և չեր ել կամենում ունենալ: Սափրիչ Պողոսը, վոր կիրակի առավոտները գնում եր Բաղդասարի յերեսը թրաշելու, հավատացնում եր, թե անհյուրընկալ մարդը նույնիսկ յուր «ուստային» ընդունում է տհաճությամբ: Ավագ քահանա տեր-Աարգիսը, վոր միայն զատիկ ու ջրորհնեք որերն եր այցելում մոայլ տունը, պնդում եր, թե նույնիսկ այդ ուրախ որերին Բաղդասարը չի կամմանում հյուր ընդունել, բացի մի մար-

դուց—քաղաքի առաջին վաճառական Աբրա-  
համ աղայից:

Ահա թե ինչպիսի մարդ եր Բաղդասարը և  
ահա ինչու այն տագնապալի պահին, յերբ նրա  
կինը գտնվում էր ծանր յերկունքի մեջ, վոչ  
վոք չկար այդ մարդու մոտ: Նա անցնում եր  
սենյակից (սենյակ, հառաչում, ինքն իրան  
բարկանում և մերժ ընդ մերժ ականջ զնում  
դեպի ննջարան, ուսկից լսվում եյին Գյուլ-  
յումի ճշերն ու աղաղակները: Գյուլյումը  
ծնում եր թվով յերրորդ զավակը յուր ամուս-  
նության ութերորդ տարում: Առաջինը մեռել  
եր մի տարեկան համակում: Այս առիթով  
հասարակության մեջ պտտում եյին զանազան  
չար շշուկներ Բաղդասարի հայրական զգաց-  
ման մասին: Պատմում եյին, որինակ, թե մի  
որ, սաստիկ բարկանալով կնոջ վրա, այնքան  
ինքն իրան կորցնում ե, վոր բռնում ե մի տա-  
րեկան աղջկանը թևերից և նրանով զարկում:  
մոր գլխին: Թշվառ յերեխան իսկույն ավան-  
դում ե հոգին: Յեվ պատմողները Բաղդա-  
սարի այս վայրենությունը վերադրում եյին  
նրա ատելությանը դեպի յուր զավակի սեռը:  
Սակայն շատերը բողոքում եյին այս մեղա-  
դրանքի դեմ. յեթե Բաղդասարի համար այդ-  
չափ ատելի յե աղջիկ-զավակը, ապա ինչո՞ւ չի  
սպանում յուր մյուս աղջկան, Մարիամին,  
վոր այժմ արդեն հինդ տարեկան ե:

Թե վորն եր ճիշտ այս կարծիքներից—

դժվար եր ասել: Մի բան միայն անհերքելի  
յեր— Բաղդասարի ջերմ փափազը՝ ունենալ,  
վերջապես, մի արու զավակ: Յեթե ծնվողն  
այս անգամ տղա կըլի— վկա յե աստված—  
Բաղդասարը Գյուլյումի համար կդնի մի կտոր  
թանգագին թավիչ: Իսկ յեթե, տերը մի ա-  
րասցե, աղջիկ կծնի—կթքի անամոթ կնոջ յե-  
րեսին, այնուհետև հաց Քլ չի տալ ուտելու  
արգանդը անիծվածին:

Հանկարծ մի յերկարատե ճիշ ընդհատեց  
Բաղդասարի մտածմունքները: Ճետո լավեց մի  
ուրիշ, բոլորովին տարբեր ճիշ, իսկ և իսկ տոպ-  
րակ գցած խոզի ճտի ճվճվոց: Բաղդասարը  
հասկացավ բանի եյությունը, յերեսին իսաչա-  
կնեց: Նույն ըոպեցին ներս մտավ նրա զոքան-  
չը, մեկը Զիլզիլ քաղաքի այն պառավներից,  
փորոնց մեջքն այնքան վաղաժամ կորանում ե  
ասիական կյանքի բոնության ներքո:

— Աչքու լույս, փե՛սա ջան, կնիկդ ազատ-  
վեց...

— Ազատվելը գլխիդ տված, տղա՞յ յե, թե՞  
աղջիկ...

— Տղա...

— Լավ: Գնա՛ բանիդ...

Պառավը չքացավ: Բաղդասարը շարունա-  
կեց անցուղարձ անել պարսկական գորգերով  
ծածկված հատակի վրա այնպիսի անկանոն  
քայլերով, վոր նրա յերկայն գդակի սուր ծայրն  
ողի մեջ գծում եր ամենատարորինակ զիգզագ-

ներ: Վերջապես, աստված լսեց նրա յոիկ ա-  
ղոթքները, գաղտնի հառաչանքները և պար-  
զեց նրան արու ժառանդ: Այժմ թող թշնամի-  
ների (Բաղդասարն ամբողջ մարդկությունը  
համարում էր յուր թշնամի) աչքը դուրս դա:  
Հե՛, անիծվածներ, կարծում եյիք Բաղդասարն  
անժառանգ կմնա ու նրա տուն ու տեղը քարու-  
քա՞նդ կլինի մահից հետո...

Քառորդ ժամ անցած՝ լուր յեկավ, թե  
Բաղդասարը կարող է տեսնել յուր ժառանդին,  
յեթե կամ ենում ե: Նա անմիջապես անցավ  
ննջարան: Այստեղ նրա աչքին ներկայացավ Հե-  
տեյալ տեսարանը.—սենյակի մի անկյունում  
պառկած եր Գյուլյումը, թույլ, անզոր, գու-  
նատ վորպես դիակ, աչքերը փակ, սակայն մի  
յերջանիկ ժպիտ սեղմված շրթունքների վրա:  
Նրա գլխի աջ ու ձախ կողմերում նստած եյին  
յերկու քույրերը՝ Զավահիրն ու Զառիկը և լա-  
լիս եյին... ուրախությունից: Ուրախ եյին,  
վոր իրենց քույրը ծնել եր տղա և մի անդամ  
ընդ միշտ աղատվել Բառդասարի դառն կշտամ-  
րանքներից: Մյուս անկյունում, բայց հատակի  
վրա, յերեսում եր մի կլոր միոս, նրան կից՝ տաք  
ջրով լի մի պղնձի տաշտ, վորից բարձրացող  
չողին սքողել եր մի քայլ հեռու դրած յերեխա-  
յին, ինչպես նոսր ամպը նորածին լուսնին:  
Մանկաբարձուհու դերը կատարում եր Հերիք-  
նազը: Արխալուղի թևերը մինչև արմ ունդները  
քաշած՝ նա պատրաստվում էր նորածնին լո-

դացնելու: Իսկ նորածինը բարձրացրել էր այն-  
պիսի բողոք, վոր, կարծես, ուզում եյին նրան  
խորովել, և նա զգում էր այս:

Արդարեւ, այն գործողությունը, վոր կա-  
տարեց Հերիքնազը, հավասար էր խորովելուն:  
Նա դրեց մանկանը տաք ջրի մեջ և սկսեց նրա  
նուրբ մարմինը լվանալ այնպիսի ուժով, վոր,  
կարծես, կեղտոտ լաթ էր լվանում: Հետո հա-  
նեց նրան ջրից ու սկսեց վրեն աղ շաղ տալ, ա-  
ռանձին ուշք դարձնելով կոնատակերի և այլ  
ծածուկ տեղերի վրա: Հարկավ նորածինը  
բարձրացրեց անսակելի գոռոց:

— Զայնդ փո'րդ քաշիր, հարամզադա,—  
ասաց նրա տատը՝ ուրախ կատակով, — քեզ աղ  
են անում վոր չուտես:

— Համ ել վոր կաշիր պնդի, չքրտնես,—  
ավելացրեց Զավահիրը:

— Համ ել վոր անհամ մարդ չդառնաս,—  
լրացրեց Զառիկը:

Անհանգիստ նորածնին, որինավոր աղելուց  
հետո, Հերիքնազը դրեց խանձարուքի մեջ, վտ-  
թաթեց ու սկսեց ձեռներն ու վոտները մետաք-  
սյա լայն ժապավենով ամուր կապկապել: Կա-  
րելի յեր կարծել, վոր փոստային փաթեթ էր  
պատրաստում ուրիշ քաղաք ուղարկելու հա-  
մար: Շատ տարիներ հետո, յերբ մանուկը  
ցույց տվեց յուր արտակարդ ձիրքերը, պա-  
ռապներն ասում եյին, «Կապողն ե այնպես կա-  
պել»: Նույն պառապները հավատացնում եյին

թե մանուկը, մոր արգանդից դուրս գալով, իսկույն աղաղակել ե. «ուզում եմ, ուզում եմ»։ Պնդում եյին նաև, թե ներկա յեղողները ջրից դուրս բերելիս նրա կրծքի վրա նշմարել են մի կլոր դեղնագույն բիծ, իսկ և իսկ նման վոսկի իմպերիալի։ Վոմանք հավատացնում եյին, թե այդ բիծն այժմ ել գրոշմված ե այնտեղ, և թե նա Վարդանի անզուգական բաղդի նշանն ե։

Բաղդասարը մոտեցավ յուր ժառանգին, նայեց նրա կապտակարմրագույն դեմքին, ժպտաց, յեթե միայն կարող եր ժպտալ այդ դաժան դեմքը, և արտասանեց հետեւյալ փաղչական դարձվածքը։

— Շան լակոտը յեփած ճղունդուրի յե նման։

Հետո արխալուղի գրպանից հանեց յերկու արծաթյա դրամներ և գրեց նորածնի փորե վրա։ Նրա որինակին հետեւյցին զոքանչն ու քենիները։ Հերիքնազը մոտեցավ, վերցրեց այդ դրամները և գրեց գրպանը, իբրև վարձ յուր տշխատանքի։

— Դե՛հ, հիմա հա՛յդա, — դարձավ Բաղդասարը զոքանչին ու քենիներին, ազատվողն ազատվեց, դուք ել ինձ ազատեցեք։ Հա՛յդա, բարի ճանապարհ։ Ամմա չե՛, սպասեցե՞ք, չար կիսմեք։ Ափսոս վոր չկա։ Շաքարս թրջել ե ծովում, չայի հունձը Զինու-Մաշինում չեն սկսել դեռ, սամովարս զողացել են, (Չուր չկա, ածուխ չկա։ Հա՛յդա, դլխիս տերերը, հա՛յդա,

հավաքեցեք փաստիուսաներդ։ Մեծ ոգնություն արիք կնկաս, տեսա, շատ ու շատ չնորհակալ եմ . . . Հա՛յդա, Ահրումանց Բաղդասարըն աչքով աչք չունի կանանց տեսնելու . . . Բըը՝, յես ձեզ մարդ ասողին . . .

Հյուրերը, լավ ճանաչելով տանտիրոջ կոպիտ բնույթը, շտապեցին հեռանալ։

Այսպես աշխարհ յեկավ Վարդան Ահրումյանը։ Նա, վոր ապագայում այնպես հռչակեց յուր անունը և դարձավ, գրեթե, համայն հայության նախանձի առարկաներից մեկը . . .

## II

Ուզիղ յոթերորդ որր Բաղդասարը հրավիրեց տեր-Համբարձումին՝ նորածնին՝ «Հալալելու», այսինքն՝ մկրտելու։ Կնքահայրը՝ Աբրահամ աղա Դալբաշյանն եր, քաղաքի առաջին վաճառականը և ամենից հարզված քաղաքացին։ Միակ մարդն ամբողջ Զիլզիլում, վորի հետ Բաղդասարը քիչ թե շատ բարեկամական հարաբերություն ուներ, վորին հավատում եր անպայման, վորից նույնիսկ ակնածում եր։

Առավոտը կնքահայրը յուր սանիկի ծնողներին ուղարկեց մի գլուխ շաքար, մի ֆունտ թեյ և կես փութ չորացրած միրդ։ Իսկ ինքը բարեհաճեց գնալ ուղղակի յեկեղեցի, ուր արդեն սպասում եր Հերիքնազը՝ նորածնին թեգերի վրա պահած։

Տեր-Համբարձումը մահկանը տվեց Վար-

դան անունը, խորապես համոզված, վոր ավելի հարմար և պատվավոր անուն չեր ել կարող դանել Աբրահամ աղայի սանիկի և ամեն բանից գժգոհ Բաղդասարի զավակի համար։ Թող սուրբ զորավարի խաչն ու սուրբ պաշտպանեն նրան։

Վարդանին տուն բերեցին հետեւյալ հանդիսով.—առջեկց գնում եր տիրացուն խաչվառը բարձր պահած, հետո տեր-Համբարձումը շուրջառն ուսերին, խաչը ձեռին, յերդելով հանդիսին պատշաճ յերգ։ այնուհետև ընթանում եր Աբրահամ աղան թեսերի վրա պահած յուր սանիկին և ձեռներին բանած մի զույգ վառ ձոմեր՝ զույգը քառասուն կոպեկանոց։ Նրանց հետեւում եյին Հերիքնազը՝ կոնստանտին բռնած մի կապոց և ժամհարը՝ մի ձեռում հանդած բռւռվարը, մյուսում՝ տեր հոր զավազանն ու Աբրահամ աղայի փափազը։ Աջ ու ձախ կողմերից հանդեսին ուղեկցում եյին մի խումբ կիսամերկ վոտաբորիկ մանուկներ, աշխատելով մի քայլ անգամ յետ չմնազ Աբրահամ աղայից և միշտ նայելով նրա յերեսին այնպես, վոր կարծես, նա անհայտ աշխարհից յեկած մի տարորինակ եյակ լիներ։ Այն ինչ՝ Աբրահամ աղայի կոնսերն այնքան հոգնել եյին սանիկին պահելուց, վոր պատրաստ եր նրան ձգել կետին։ Յուր սրտի մաղձը նա թափում եր անկոչ թիկնապահների վրա, գոռալով, վոտները գետնին զարկելով ու հայհոյելով նրանց հան-

դիսին միանգամայն անվայել հիշոցներով։ Նրա ձայնն ազդու յեր, քայլվածքը գոռող, դեր դեմքի արտահայտությունն սպառնալի, հաստ բեղերի և թափ հոնքերի շնորհով։ Մանուկները մի վայրկյան սարսափելով, ցրվում եյին դես ու դեն և նորից կամաց կամաց մոտենում։ Վերջապես հանդեսը հասավ տուն, մոռայլ դարպանը փակվեց փողոցային մանուկների քթի առջե։

Հյուրերի համար պատրաստել եյին թերխաշ ձվեր, կարաղ, մեղր, ալյուրի հալվա, ուր և քաղցր թեյի ու սոմի խառնուրդ—մի ըմպելիք, վոր տեղական բարբառով կոչվում եր «փունչ»։ Բաղդասարը հագել եր յուր մետաքսյա արխալուզը, մեջքին կապել կապտագույն մետաքսյա լայն գոտին։ Ինչե՛ր չեր յերեակայում յերջանիկ մարդը յուր յոթնորյա ժառանգի համար։ Վարդանը կմեծանա, կդառնա հոր ողնականն ու ընկերը՝ առետրի մեջ։ ինքն անձամբ ամեն տարի կերթա «Մակարիա» ապրանք բերելու, հազարներ կվաստակի, տներ ու քարվանսարաներ կշինի, կդառնա Զիլզիլ քաղաքի առաջին մարդը, ամենի նախանձի առարկան։ Այ այն ժամանակ Բաղդասարը յուր թշնամիների աչքը կհանի։

— Ա՛ մարդ, ի՞նչ ես քթիդ տակ փնթփընթում, — ասաց Գյուլյումը, վոր հազնված, նստած անկողնում, սպասում եր զավակի վերադարձին, — կանգ առ, ա՛ մարդ, հենց մի գլուխ չափչփում ես սենյակը։ Այդ ո՞ւմ ես

Հայհոյում... բա՛, ինչո՞ւ յես ձեռքի բարձրացնում, ո՞ւմ ես ուզում խփել։ Հիմա ծիծառում ես, փի՛ե, ի՞նչ ե պատահել...  
— Նա պիտի մեծ մարդ լինի, շատ մեծ,

հասկանո՞ւմ ես...  
— Ո՞վ...

— Յեթե մեծ մարդ չլինի, ամենից առաջ յե՞ս կթքեմ նրա յերեսին։  
— Ո՞ւմ յերեսին, ի՞նչ ես ասում։  
— Չայնդ կարիր, շուն շան...

Լսվեց տեր-Համբարձումի զիլ ձայնը։  
Բաղդասարը վազեց դեպի դուռը։ Հարևան կտուրները լցվեցին հետաքրքիր կանանցավ ու մանուկներով։ Սակայն բակում կար մի ահա-դին թթենի, վորի խիտ ճյուղերը խանգարում եյին նրանց տեսնել ինչ ե կատարվում «իոդ» Բաղդասարի տանը։

Հյուրերը նստեցին նախաճաշի։ Տեր-Համ-բարձումը կերակ վեց հատ թերիսաչ ձու, տաե-լով թե խիստ ոգտակար ե ձայնի համար։ Բայց թե ինչ ոգուա ուներ յերեք բաժակ փունջը և յերկու բաժակ ողին, այս մասին լոեց, բարվոք համարելով վոչնչացնել մեղրն ու կաբագը։

Աբրահամ աղան յերկու բաժակ փունջից հետո բավական զվարթացավ ե, խոռօք բաց անելով առևտուրի անկման մասին, անցավ քա-դաքական դեպքերին։ Հայտնեց հեղինակավոր յեղանակով, թե «ոռուսը» մտադիր ե լեզդի-ների հետ հաշիվները վերջացնել, ամեն բան

պատրաստ ե, այսոր-եգուց Շամիլին կրոնեն ու Դաղստանում նրա տեղը կնշանակեն Արզութո-վին։ Հետո անցնելով ուրիշ նյութերի, վեր-ջապես, հասավ յուր սանիկի ապակային։

— Գիտես ինչ, Բաղդասար, — ասաց նա, դատարկելով փունջի յերրորդ բաժակը, — այն որից, վոր ոռուսը վոտ դրեց մեր կողմերը, ա-մեն ինչ փոխվեց։ Հին կարգերը տակն ու վրա յեղան, նոր կարգեր առաջ յեկան։ Հիմա ուսում ե հարկավոր։ Լսի՛ր, վորդուդ անուսում չթող-նես հա՛, ես ե ասում եմ, թե չե, շատ կփոշ-մանես։ Հիմիկլա ժամանակն անուսում մարդը կես մարդ ե, այն ել չե—չեթվերտ մարդ ե։

— Եհ, տեսնենք զալիբից ինչ դուրս կգա, — արտասանեց Բաղդասարը և սաստիկ փափագեց մի թունդ խոսք ավելացնել, բայց հիշելով, վոր դիմացինն Աբրահամ աղան ե, բեղերի մեկը ծալեց դրեց ատամների տակ։

— Ինչ ել վոր դուրս գա, Վարդանը, զա-կոնը պիտի իմանա, վոր զակոն չիմացավ, հե՛չ...

— Իհարկե, — մեջ մտավ տեր-Համբար-ձումը, — առանց զակոնի ի՞նչպես կարելի յե։ Աղա Աբրահամ, — իփոխեց նա խոսքը, մի նեն-գամիտ հայացք ձգելով կնքահոր ուղարկած շաքարի վրա, վոր ցցվել եր սենյակի անկյու-նում իրքե տնտեսական ապահովության նշան, — այս տարի շաքարի մաղանդան վո՞նց ե։

— Շատ թանգ։

— Բա՛հ, բաս ասա ինձ նման անճարներն  
եւ չայ չպիտի խմեն ե՛լի:

Բաղդասարը հասկացավ տեր-հոր խորա-  
մանկ ակնարկը և մտքում ասաց. «վերկենաս,  
աներեսի միրուքը քանդե՞ս»:

Տեր հայրը մկրտվածին մաղթեց յերկար  
կյանք, առողջություն, մեծ անուն, պատիվ  
տոպղակներով վոսկի-արծաթ և այլ շատ ու  
շատ բարիքներ, և «աջահամբույրը» դնելով  
դրանը, դուրս գնաց. նրան հետեւեց Արքահամ  
աղան, կրկնելով.

— Անուսում չթողնես հա՛, ես ե ասում  
եմ:

Դիտողների ասելով՝ Վարդանը վոչ մորն  
եր նման, այդ բարի աչքերով նիհար կնոջը,  
վոչ հորը, այդ ամրակազմ, խոժոռ դեմքով,  
մեծ քթով, հաստ կարմիր պարանոցով, առողջ  
մարդուն: Իրը թե նա նման եր յուր մորյեղ-  
րայր Մարտիրոս Հախվերդյանին, վոր յերեք  
տարի յե բացակա յեր Զիլիլի քաղաքից: Ճիշտ  
եր այս թե վոչ-դժվար եր ստուգել, բայց մի  
բան խիստ աչքի յեր ընկնում—Վարդանի աչ-  
քերի գույնը: Իսկապես այդ գույն չեր. այլ  
գեղնի, կանաչի և կարմրի մի տարրինակ,  
չտեսնված խառնուրդ: Այտ աչքերը յերբեմն  
նայում եյին վերին աստիճանի սուր ու ազդու  
հայացքով: Թվում եր, վոր մանուկը պատ-  
րաստ ե Հարձակվել դիտողի վրա և կատաղած  
կատվի պես ճանկում նրա յերեսը:

Դ Յ Ո Յ Ո Յ Ո

Գյուլյումը, գոհունակ ժպիտը յերեսին,  
ասում եր, թե հազիվ աշխարհում մի մանուկ  
մոր կրծքից կաթն այնպիսի ազահությամբ  
ծծած լինի, վորպես վարդանը: Արդարեւ, յերւ  
նա կալչում եր մոր կրծքին, մի անհաղ, սոսկա-  
լի տզրուկ եր, սոսկալի՝ մանավանդ յուր խո-  
չորությամբ: Բիբերն ուղղելով մոր աչքերին,  
ծծում եր նրա կաթը մինչեւ վերջին կաթիլը:  
Իսկ յերբ կաթը վերջանում եր, յուր նղերքով  
կծում եր կերակրիչ ծիծն այնպես ամուր, վոր  
մայրը ցավից աղաղակում և շտապում եր  
կուրծքն ազատել նրա փոքրիկ, բայց խիստ ա-  
մուր ճանկերից: Ոո՛, այդ ճանկերը շատ ան-  
գամ եյին իրվում մայրական կրծքի մեջ և այն-  
տեղ թողնում արյունային հետքեր: Մինչեւ  
վագրի աչքերը շարունակ նայում եյին մոր յե-  
րեսին հանգիստ, անշարժ, սառցային հա-  
յացքով:


Տասնումեկ ամսական հասակում Վարդա-  
նին ծծից կտրեցին: Մայրն ասաց.

— Փառք աստծո, հիմա մի քիչ ուժի  
կդամ: Այս տղան կաթիս հետ արյունս ել  
ծծեց:

— Տա աստված, այնպիսի տղա լինի, վոր  
աշխարհի արյունը ծծի, աֆերիմ կասեմ,—  
արտասանեց Բաղդասարը:

— Մի՛ ասա, ա մարդ, մի՛ ասա, մարդիկ  
աչքով աչք չեն ունենա նրան տեսնելու:

— Թքել եմ մարդկանց վրա: Ի՞նչ են նրանք,



հա՛, ի՞նչ: Խլեզներ, հապա, հապա, խլեզնե՛ր: Ով զոչաղ ե, պիտի նրանց ջարդի յուր կրունդ-ներով:

— Ա՛յ, այդպես ես խոսում, վոր բոլորը քեզ խոզ են անվանում ե՛, — համարձակվեց նկատել Գյուլյումը, գուցե առաջին անդամ յուր կյանքում:

— Զայնդ կտրի՛ր, աներե՛ս, — կատաղեց Բաղդասարը. — տեսնում եմ, այն որից, վոր ինձ համար տղա յես ցնգնել, լեզուդ բացվել ե: Խոզ եմ, բաս. վոչխար չեմ, վոր ինձ խուզեն ուրիշները: Թողի իմ վորդին ել խոզ լինի, միայն ամենքը վախենան նրանից. ամենքը գլուխ խո-նարհեցնեն նրա առաջ...

Եերեք տարեկան հասակում Վարդանը կարմրազեմ, կայտառ մանուկ եր, հաստիկ, Հյութալի շրթունքներով, վորոնց միջից յերե-վում եյին նրա առաջին մանկական ատամները: Նրան թույլ եյին տալիս տնից դուրս գալ յուր քրոջ հսկողությամբ: Մարիամը, հինգ տարով յեղրորից մեծ լինելով, կարող եր նրան հո-վանավորել: Նա շալակում եր Վարդանին, տա-նում փողոց և այնտեղ հետք խաղում, չթողնե-լով նրան միանալ փողոցի յերեխաներին, հոր պատվերի համաձայն: Սակայն, ինչպես յերե-վում եր, Վարդանը Բաղդասարի մարդատյաց բարքը չեր ժառանդել: Ընդհակառակը, նա ձգտում եր խառնվել հաստիկիցների իմ բին և նրանց հետ խաղալ: Նա սիրում եր խաղալիք-

ներ. Հենց վոր մի յերեխայի ձեռքում տեսնում եր վորեւե զրավիչ բան, վազում եր ու աշխա-տում խլել նրանից: Այն ինչ՝ ինքը յերբեք վոչ մի բան չեր տալիս ուրիշներին, թեկուզ մի քա-նի վայրկյանով:

Մի որ Բաղդասարը նրա համար շուկայից բերեց մի տափակ տուփ, վորի փակ կափարի-չի վրա կաը մի նեղ ծակ հինգ կոպեկոնոցի յեր-կայնությամբ և տալով վորդուն, ասաց.

— Ըհը՛, ա՛ռ, ինչ վոր ձեռքդ փող ընկնի, գցիր այս «դախլի» մեջ:

Այդ որից ինքը Բաղդասարը գրեթե ամեն յերեկո տուփի մեջ գցում եր վորեւ պղնձի կամ արծաթի դրամ, այսպիսով վորդու համար դրամագլուխ ժողովելով:

— Լսի՛ր, վորդի, — ասում եր նա ամեն ան-դամ, դրամը գրապանից հանելիս. — փո՛ղ, փո՛ղ, փող, վո՛չ բարեկամ, վո՛չ ազգական, վո՛չ յեղ-բայր, վո՛չ քույր, վո՛չ մարդկանց պատիլ, վո՛չ սեր, փո՛ղ: Նա յե աշխարհի ույժը, որհնվի նրա կտրողի ձեռքը:

Վարդանը լսում եր այս խոսքերը և կա-մաց կամաց ըմբռնում նրանց իմաստը:

### III

Շատ չանցած՝ մանուկը յուր տուփը սիրեց ավելի քան բոլոր խաղալիքները, քան բոլոր շրջապատողներին, քան նույնիսկ հարազատ ծնողներին: Նա սեղմում եր յուր գահնձը

կրծքին այնպիսի գգվանքով, վորպես միայն սիրավառ մայրը յուր զավակին։ Յերկու ձեռներով տուփիր մոտեցնում եր ականջին, շարժում եր, ականջ դնում մետաղի ախորժալուր հնչյուններին։

Այս պահերին նրա մանկական դեմքը զրկվում եր անմեղությունից, աչքերը վառվում եյին ագահության անախորժ հրով։ Վա՛յ ե, յեթե մեկն այդ միջոցներին փորձեր ձեռք տալ նրա գանձին։ առնետի պես ծվծվալով, հարձակվեր հանդուգն փորձողի վրա, վորպեսզի յեղունդներով հանի նրա աչքերը։

Նայելով այդ հազիվ հազ թոթովող մանկանը յուր գանձը կրծքին սեղմած, կարելի յեր կարծել, վոր նա խանձարարուրից արդեն ստացել և անխախտելի գաղափար դրամի մասին և դիտե, վոր նա յե աշխարհի առանցքը, նրան և միմիայն նրան պիտի կպչել ամուր, հոգու բոլոր ույթերով, սրտի բոլոր սիրով, ձեռների բոլոր զորությամբ։

Բաղդասարը հոգու խորքում ուրախանում եր, տեսնելով վորդու այդ բնազդական սերդ դեպի դրամը՝ այնչափ, վորչափ կարող և միայն ուրախանալ միջակ արտիստը, տեսնելով յուր ժառանգի մեջ հանճարի նշույլներ։ Նա խրախուսում եր վորդու մեջ այդ սերը և ավելի ու ավելի ամրացնում այնտեղ։ Յերբեմն դրամը տալիս եր վարդանին, վոր նա ինքը յուր ձեռքով գցի տուփի մեջ։ Յեվ մանուկը, մինչեւ

ցցելը, խաղում եր դրամի հետ, մի ձեռից յուսի մեջ բաց թողնելով, գլորելով հատակի վրա, ինչպես խաղում ե կատուն մկան հետ մինչև նրան խեղդելը։

Չե, այս տղան փուչ չի դուրս գա, —ասում եր Բաղդասարը Գյուլյումին վորդու ներկացությամբ։

Յերբ Մանուկը վեց տարեկան դարձավ, հայրը մի յերեկո վճռեց տուփը բանալ։ Դանակի ծայրով զգույշ պոկեց կափարիչը։ Հատակի վրա թափվեցին արծաթի ու պղնձի դրամները։ Վարդանի աչքերը վառվեցին հոգեկան անսահման հաճույքից, ինչպես կարող եյին վառվել մի ուրիշ մանկան աչքերը՝ սքանչելի հրավառություն տեսնելիս։ Նա ակամա աղաղակեց։

— Ի՞մս են, ի՞մս են։

Յեվ յերկու ձեռներով հարձակվեց դրամների վրա, ինչպես գիշակերը վորսի վրա։ Մի քանի դրամներ գլորվել եյին սենյակի անկյունը։ Մարիամն շտապեց նրանց գտնել և փորձեց գրպանը գնել։ Սակայն Վարդանը բռնեց նրա ձեռը և այնպես ամուր կծեց, վոր խեղճ աղջիկը ցավից ճշաց, արտասվեց, բաց թողնելով յուր ավարը։

Բաղդասարը համրեց վողերը, դուրս յեկավ, — յերեսուն իննը ոռուրի։

— ԵԵ՛, —ասաց նա, — միմա մտածենք, ինչպիտի անենք այս վողերը։ Արի, Վարդան, տուր ինձ տոկոսով, մանեթին տասը կոպեկ տարե-

կան: Հա, դու չգիտես ինչ ասել և տոկոս  
էսի՞ր. այս տարի դու ինձ տալիս ես, ասենք,  
տասը մանեթ...

Յեվ նա, մանրամասը բացատրելով տոկո-  
սի նշանակությունը, ավելացրեց.

— Հասկացա՞ր...

— Հասկացա, —պատասխանեց խելոք մա-  
նուկը, —յես իմ փողերը տոկոսով չեմ տա:  
Թափիր դախլի մեջ, տուր ինձ:

Բաղդասարը տուփի կափարիչն ամբացրեց  
և պատվիրեց Վարդանին շարունակել դրամ  
ժողովել:

Այժմ Վարդանը վազվզում եր փողոցնե-  
րում, բակերում ու կտուրներում: Մարիամն  
այլես չեր հսկում նրան և չեր ել կարող արդեն  
նա տանումեկ տարեկան աղջիկ եր, տեղական  
սովորությամբ պիտի փակվեր տանը:

Բաղդասարը վարձեց մի լեզզի ծառա, վոր  
պիտի հսկեր Վարդանին: Որվա մեծ մասը մա-  
նուկն անց եր կացնում այդ լեռնականի հետ՝  
խոհանոցում, թոնրատանը, բակում, փողոց-  
ներում: Ոսմանը—այսպես եր լեզզու անունը—  
հասարակ փայտից նրա համար շինում եր խա-  
ղալիքներ և յերբեմն պատմում նրան զանա-  
զան դիմումներ Դաղստանի կյանքից: Վար-  
դանը նստում եր նրա ուսերի վրա և պահան-  
ջում, վոր իրեն զրուեցնի: Նա վտաներով  
անխնա հարվածում եր Ոսմանի կողերին, փո-  
րին, փոքրիկ մտրակով զարկում ուսերին,

կըծքին, յերբեմն յերեսին, յերեակայելով,  
վոր ձիու վրա յեր նստած: Հպարտ լեռնականը,  
ներքուատ վրդովվելով, ժպիտը յերեսին լուս  
կրում եր այդ վիրավորանքները քրիստոնյացի  
զավակից: Յեթե չկրեր, պիտի զրկվեր պաշտո-  
նից, այսինքն՝ ամսական յերեք ոուրուց և մի  
փոքր հացից: Նա ինքն ել հայր եր, ուներ Վար-  
դանի հասակի մի տղա և յերկու աղջիկ, վո-  
րոնց թողել եր Դաղստանի լեռներում յուր  
կնոջ հետ: Հիշում եր զավակներին և հառաչե-  
լով շփում կոշտացած ճակատը, պիոր յուր  
ծննդավայրի ժայռերի խորշոմներն ուներ:  
Յերեմն, հոգնելով փոքրիկ բռնակալին ուսե-  
րի վրա զրոսեցնելուց, բաց եր թողնում նրան  
հարեան մանուկների շրջանը և ինքը հեռվից  
հետեւում նրան: Վարդանը մեծ մասամբ ընկե-  
րանում եր այնպիսի մանուկների հետ, վորոնք  
հեղ եյին և սիրով կատարում եյին նրա կամքը  
կամ թույլ եյին տալիս իրանց հարստահարել:  
Նրա վոսկեզոծ քամարը, սատինի արխալուղը,  
մանագանդ «ապոյկա» կոշիկները փայլուն ան-  
կարուրդներով ընկերներին ներշնչում եյին  
հարդանքի զգացում, միկնույն ժամանակ,  
շարժելով նրանց նախանձը: Նա շատ անդամ  
անպատճի խլում եր սրա ու նրա ձեռքից մի վո-  
րեւ զնդակ, թուոցիկ կամ վեդ, հայհոյում  
եր կամ ծեծում, իսկ յերբ հանդգնում եյին յուր  
վրա ձեռք բարձրացնել, աղաղակելով վազում  
եր Ոսմանի մոտ: Յեվ յեթե լեզզի ծառան բա-

բեսիրտ շիներ, կատարեր փոքրիկ բռնակալի հրամանները, բոլոր մանուկները վաղուց հաշմանդամ կդառնային, այնքան խիստ եր Վարդանը: Սակայն պատահում եր, վոր նրան պաշարում եր վեհանձնության զգացումը: Այսպիսի հազվադեպ բովեներին ընկերներին տալիս եր ծտի կտուցի չափ հալվա, մի քանի ժամանական կամ մի խնձոր տասը կտորների բաժանած:

Նա միշտ գրպանում փող եր պահում ու պարծանքով ցույց տալիս ընկերներին:

Ամառվա սկզբին Ոսմանը, չողերին չդիմանալով, գնաց յուր հայրենիքը՝ աշնանը վերադառնալու պայմանով: Վարդանը մնաց անպաշտպան, կրծատեց յուր հարաբերություներն ընկերների հետ, ամփոփվեց ինքը յուր մեջ և ավելի սիրեց յուր տուփը: Այժմ մտածում եր միայն յուր գանձն ավելացնելու մասին: Ճշմարիտ ե, հայրը գրեթե ամեն յերեկո գցում եր տուփի մեջ փորեն դրամ, բայց տարիներ պիտի անցնելին մինչև նրա լցվելը: Յեկան Վարդանը գտավ փող վաստակելու միջոց և սկսեց գործադրել ծնողներից թագուն:

Մի յերեկո Բաղդասարը տանը ինչ-վոր հաշիվներ եր անում, իսկ Գյուլյումը Վարդանի համար մետաքսյա շապիկ եր կարում, յերբ յուս սենյակից վազեց Մարիամը և շնչաց.

— Գնացեք տեսեք Վարդանն ինչ ե անում...

Մարդ ու կին մոտեցան դռներին: Նրանց աչքերին ներկայացավ հետեւյալ տեսարանը. մյուս սենյակի անկյունում Վարդանը, վառ մոմն առջեւ դրած, համարում եր մի բուռն արծաթե ու պղնձե դրամներ: Նա այնքան եր խորասուզված յուր զբաղմունքի մեջ, վոր ծնողների մերձավորությունը չզգաց: Նրա մանկական ճակատը խորչում եր, շրթունքները սեղմվել եյին, ձեռները հուզումից դողում եյին: Համբելով բոլոր դրամները, ձեռք գրեց ճակատին, նայեց առաստաղին—ինչ հիանալի նյութ նկարչի համար: Հետո նորից սկսեց համբել. նորից ձեռը գրեց ճակատին: Պարզ եր, վոր հաշիվն ուղիղ չեր գալիս: Յեկ փորքան ավելի յեր համրում փողը, այնքան ձեռների դողոցն ավելանում եր, ականջներն ու այտերը կարմրում եյին, շունչը սաստկանում: Այս յոթ-ութ տարեկան մանուկը սենյակի լուռթյան մեջ, աղոտ լուսո առջեւ, հիշեցնում եր այն ավանդական ագահին, վոր մեն մենակ խուլ գիշերներն ստուգում ե յուր գանձը, հրձվում վոսկու հնչյունով, լուռ խոսում նրա հետ, վորպես մենասեր փիլիսոփան յուր մտքերի հետ:

— Տրաշք ե, տղա չե, — անգիտակցաբար շնչաց Բաղդասարը, կնոջ թեկից քաշելով:

Նա կամացուկ մոտեցավ վորդուն: Վարդանը գլուխը բարձրացրեց և, իսկույն յերկու ձեռներով փողերը թագցնելով, գոչեց.

— Զեմ տա, չեմ տա, վոչ վոքի չեմ տա...  
 Նրա ձայնը, աչքերը, ամբողջ կերպարանքն  
 արտահայտում ելին յոթանասուն տարեկան  
 ժամանի վոսկեմոլություն։  
 — Վո՞րտեղից են այդ փողերը, — Հարց-  
 րեց Հայը։  
 — Զեմ ասի, կծեծես ինձ։  
 — Դախլի՞ց ես Հանել։  
 — Զե, աստված վկա, չե, յես եմ հավա-  
 քել. իմ աշխատած փողերն են։  
 — Քո աշխատա՞ծ։ Դու ի՞նչպես ես փող  
 աշխատում։ Ասա՛, թե չե-կծեծեմ...

Վարդանն ստիպվեց գաղտնիքը բացատ-  
 րել։ Բանն այն ե, վոր մայրը գրեթե ամեն որ  
 նրան ուղարկում ե մերձակա խանութները՝  
 զնելու զանազան մանր-մունք պարագաներ տան  
 համար. սապոն, մոմ, լեղակ, լուցկի, մածուն  
 և այլն։ Վարդանն ամեն անգամ աշխատում ե  
 մի-մի, յերկու-յերկու կոպեկ հետ զցել յուր  
 համար, և ահա գոյացել ե այս գումարը։

— Խելո՞ք տղա, խելո՞ք տղա, — գոչեց  
 Բաղդասարը հիացած։

— Ուրեմն, գողությո՞ւն ես արել, —  
 Հարցը Գյուլյումը, վոր միանդամայն հա-  
 մաձայն չեր ամուսնու հայացքին վորդու առ-  
 րարքի վերաբերմամբ։

— Իսկի ել գողություն չե, առուտուր ե, —  
 պատասխանեց Վարդանն ամենալուրջ յեղանա-

կով, — բախկալից առել եմ եժան, քեզ ծախել  
 եմ թանգ։ Առուտուրականներն ել այդպես են  
 փող աշխատում։

— Կերա՞ր, գոչեց Բաղդասարը, միանդա-  
 մայն հավատակվելով վորդու խելացի պա-  
 տասխանով։

Յել, Համբուրելով նրա ճակատը  
 կրկնեց...

— Խելո՞ք տղա, խելո՞ք տղա։

#### IV

Առաջիկա աշնան սկզբին Բաղդասարը վո-  
 րոշեց Վարդանին տալ ուսումնարան։ Մի ա-  
 ռավոտ մանկանց զարթեցրին կանուխ։ Մայրն  
 ամբապնդեց նրա վորովայնը մի գույզ ձվով,  
 կարագ ու մեղրով և, որհնելով, հանձնեց  
 Հորը։

Ճանապարհին Բաղդասարն ամբողջ ժա-  
 մանսակ լրատում եր Վարդանին, բացատրելով  
 ուսման նշանակությունը։

— Տես վորդի, — ճառաբանում եր նա, —  
 աշխարհն այ, որինակ, այս չինարի պես մի  
 ծառ ե։ Մարդիկ վորդներ են, նստած՝ ուտում  
 են ծառ ե։ Վորդ կա, վոր զոչաղ ե. նա համ  
 շատ շատ ե ուտում, համ շուտ շուտ։ Վորդ  
 կա, վոր տեղից չգիտե շարժվել. նա քաղցից  
 ուստիում ե։ Ուտելու համար ատամներ են հար-  
 կավոր։ Մարդուս խելքը նրա ատամներն են։  
 Ուսումը վոր կա մի սրոց ե, իմացիր համ։

ատամների սրոց։ Յեթե անուսում խելոքն արժե  
հինգ հիմարի, ուսում առած խելոքը տաման ա-  
նուսում խելոքի արժե։ Ուսում առած մարդուն  
խարելք շատ դժվար է. նա ինքն ուրիշներին  
կխարե։ Հիմա քեզ տանում եմ ուսումնարան,  
իող եմ ծախսելու համար, հեշտ չիմանաս։ Ա-  
ֆարիմ չեմ ասի, յեթե յերկու-յերեք տարուց  
հետո կոնսիստորի սեկրետար Ղահրաման-բեղի  
ոյես ուստերեն չկոտրատես ու նրա նման  
խնդիրներ չգրես։ Ասենք, Ղահրամանիդ ել  
հերը գոռքեղոո լինի, ի՞նչ մարդ է, այն որը  
չիթ առնելիս տասներեք կոպեկս կերավ, բայց  
ասում եմ ելի, մարդ ամեն բան պետք է իմա-  
նա։ Հենց վոր ուսումդ վերջացրիր, քեզ Աբրա-  
համ աղայի յեղրոր իսրայելի հետ սւղարկելու  
յեմ Մակարիտ, վոր ապրանք առնես համա՝  
լավ իմացիր։ Այ, այն ժամանակ ջուխտ ձեռ-  
ներովս կհանեմ թշնամիներիս աչքը։ Բը՛,  
յես նրանց հոր, պապերի, յոթ պորտի գե-  
րեզմանները տակն ու վրա անեմ . . .

Վարդանը գլուխը քաշ լսում եր հոր խոս-  
քերը, ամուր բռնած նրա ձեռը և մի քայլին  
յերկուսն անելով, հազիվ կարողանում եր հա-  
վասար ընթանալ նրա հետ։ Մերթ ընդ մերթ  
հաղղասարը, այս կամ այն խրատը վոր-  
դու մտքում ամուր գրոշմելու համար, այնպես  
պինդ եր սղմում նրա ձեռը, վոր մանուկը քիչ  
եր մնում ցավից գոռաւ։

— Ուսումնարանում — ը բունակեց հայ-

ըը, — վոչ վոքի հետ չկուլես, բայց վոչ վոքի  
հետ ել չընկերանաս։ Գլուխդ քաշ բանիդ կաց։  
Ընկերներից ոգուտ չկա, վնաս կարող ել լինել,  
ևս առավել աղքատ ընկերներից։ մեկը գրիչ  
կուզե, մյուսը թուղթ, թանաք, ել չգիտեմ  
ինչ։ Ասեղ չտաս, վոր աչքները կոխեն, իմա-  
նո՞ւմ ես, ասեղ չտաս շան վորդիներին։ Դեհ,  
հասանք ուսումնարան, տեսնենք վերջդ ինչ ե  
լինելու . . .

Ճիշտ այս պահին Վարդանը յերկու անգամ  
փոշտաց։ Վորովհետև գիտեր, վոր զույգ  
փոշտոցը իսեր է, իսկ կենտը՝ շառ, չըթունք-  
ները սեղմեց, քթի ծակերը մատներով փակեց և  
յերրորդ փոշտոցը զապեց։

— Փառք աստծու, — զոհ յեղավ Բաղդա-  
սարը։

Ուսումնարանը գտնվում եր քաղաքի վերին  
կողմում, ուստաց թաղում։ Դա մի հասարակ  
մեկ ու կես հարկանի շինություն եր գրսից պա-  
տերը կավով սպիտակացրած։ Հարեան տներից  
նա տարբերվում եր նրանով միայն, վոր լու-  
սամուտները յերկաթե ցանցեր չունեյին,  
յերեկի, այն պատճառով, վոր ներսում գողերի  
համար հրապուրիչ բան չկար։

Դոների առջե Բաղդասարը յուր գույնը՝  
զույն մեծ թաշկինակով սրբեց Վարդանի քի-  
թը, վորի ծայրն, ի դեպս ասած, այն ժամա-  
նակ հյութավորելու վատ սովորությունն ու-  
ներ։ Հայր ու վորդի մտան մի ընդարձակ քայլ,

վորի յերկու կողմերը ներկայացնում եյին բաց տարածություն տախտակյա պարսպով լը շապատված։ Դասերը գեռ չեյին սկսվել, աշակերտները վազվզում եյին բակում։ Տեսչի խոհանոցի առջև զբունում եյին յերեք-չորս զույզ սազեր ու յերկու հնդկահավ, գլուխները հպարտ-հպարտ վեր ցցած, ինչպես դավառական չինովնիկներ։ Նրանց վոտները թաց գետնի վրա թողնում եյին յեռանկյունի հետքեր, կարծես բլիթ եյին նախշում։ Մի քանի բաղեր զվարճանում եյին գետնի մեջ փորած ավազանում, կտցահարելով կեղտոտ ջրի մակերեւույթում լողացող փթած վարունգն ու սեխի կձեպները։ Տեսնելով անծանոթ դեմքեր, մի հնդկահավ, կտուցը ցցած, վազեց առաջ, կարծես, հաշիկ պահանջելու։ Բազդասարը չուխայի յերկայն թեերով փախցրեց անհյուրընկալ թռչնին, մտքում մի ազդու հիշոց ուզդելով նրա տիրոջ հասցեյին։

Աշակերտներն իսկույն լը ջապատեցին նորելին։ Այստեղ կային մի քանի ազգերի, կրոնների ու աղանդների մանուկներ, յուրաքանչյուրը հագնված եր յուր ծնողների քեփով ու նրանց կարողության համեմատ, ուստի խումբը ներկայացնում եր տարագների մի նկարչական խառնուրդ։

— Մյարթին Բազդանքը չայ ե խմում, — ասաց մի թուրք աշակերտ։

— Քեզ հարցնող չկա, — բարկացավ Բազ-

դասարը և, չուխայի թեերն ուսերին գցելով, նստեց ուսումնարանի առջև դրած նստարանի մրա։

Աշակերտները նրա առջև կազմեցին կիսաշրջան և սկսեցին վոտից մինչև գլուխ դիտել վարդանին։ Հանկարծ Բազդասարը, գլուխը ցած թեքելով, շրջանի արանքով նայեց հեռու հանդնած մի մանկան։

— Պզտի՛կ, ա՛ պզտիկ, — ասաց, — մին առաջ յե՛կ, ոեխդ տեսնեմ։

Մանուկը մոտեցավ, արխալուղի թեն ատամներով կոծոտելով։

— Աղա դու փալան կարող Ոհանի թոռը չե՞ս, յերկաթ ծախող Աստառը տղան։

— Այո՛, — պատասխանեց մանուկն ամաչելով։

— Աղա, մեջքիդ արծաթի քամա՞ր ես կապել։ Փա՛հ, փա՛հ, ախար հայրդ սովորքյար ե, ըըը, յես նրա հոր վոսկորները... Դո՞ւ ել ես ուսում առնում... Փա՛հ, փա՛հ, աշխարհը լուսավորվեց, պրծավ։ Անունդ ի՞նչ ե։

— Լեռն...

— Ոհո՛, բաս ասա Լեռն թագավորի քթի ծակիցն ես ընկել, ըըը, յես քո պապի փալանը...

Աշակերտները հըռ-հըռ ծիծաղեցին միահամուռ։

Վերջապես ուսումնարանի պահապան Անդրեասն ազդարարեց, թե Մարտին Բազդանիչը

գալիս ե: Մի քանի վայրկյանում բակը դատարկվեց, աշակերտները վագեցին դասարանները: Բաղդասարը վոտքի կանգնեց, չուխայի թերը ցած գցելով ի նշան հարգանքի և խոնարհության:

Յերկդասյան ուսումնարանի տեսուչ Մարտին Բաղդանիչը միջին հասակից քիչ բարձր մի մարդ եր, յերեսը չեչոտ, կոտած բեղերով ու կարճ միրուքով, վոր ծնոտի վրա յերեք մատնաչափ սափրած եր: Նրա աջ այտի վրա կարինչ վոր բուժված վերքի հետք հինգ կոպեկանոցի մեծությամբ, վոր նրա դեմքին տալիս եր դատանություն: Իրոք դժվար եր վորոշել այդ մարդու տարիքը, վորովհետև թեև միրուքն ալեխառն եր, բայց գլխի մազերը տակավին սև յին, թեև ատամները փթած ու սեացած եյին, բայց քայլվածքն ուներ պատանեկական աշխույժ, ձայնը՝ յերիտասարդական հնչյուն, իսկ կոտած բեղերը թամբաքուի գույն ունեյին, յերեի, այն պատճառով վոր ծխախոտը ծխում եր առանց մունդշտուկի: Այս վերջին հանգամանքն ապացուցվում եր նաև նրա աջ ձեռի միջին մատի ու ցուցամատի դեղնությունով:

Նա մտավ դասարան գլուխն առաջ թեքած: Կարելի յեր կարծել, վոր մի աներեւյթ ձեռ կմշտում ե նրա պարանոցը:

— Վզին դյումբալ ունի, — շշնջաց Վարդանը հոր ականջին:

— Սուս, — սաստեց Բաղդասարը, — գլուխ տուր, հարամզադա:

Հայր ու վորդի անմիջապես հետևեցին տեսչին: Սկզբում Բաղդասարը մի քիչ շփոթվեց նրա դեղին կոճակներից, բայց, հիշելով, վոր յերկու տարի առաջ նրան ծախել ե մունդիրի համար յերեք արշին կապույտ մահուդ, հազար ու մտքում ասաց. «քո հերն ել անիծեմ»:

— Բարով ես յեկել, — ասաց տեսուչը, — ի՞նչ կհրամայես: Վորդո՞ւդ ես բերել: Հա, լավ, շտտ լավ, ուսում ե, կտանք ելի: Սուս, զարշելիներ: Խոնարհ տղայի յեւ նման: Իսկի գրել կարդալ չգիտե՞՞: Վոչինչ շուտով կսովորեցնենք...

Մինչ բանակցությունը շարունակվում եր, աշակերտներն սկսեցին թագուն-թագուն չարություններ անել: Նրանք զանազան միմուռություններով աշխատում եյին միմյանց ծիծաղեցնել, բոթում եյին իրարու, խղտղում, թղթի գնակներ արձակում միմյանց վրա: Առանձնապես աչքի յեր ընկնում թուխ դեմքով ու ծուռ քթով մի աշակերտ: Նա այնքան ճարպիկ եր, վոր ձեռնասուն կապկի պես կկզում եր սրա ու նրա ուսերին կամ գլուխը զնում նստարանի վրա, վոտները ցցում ողի մեջ, հենց վոր տեսուչը յերեսը մի կողմ եր դարձնում:

Բանակցությունը Վարդանի մասին վաղուց վերջացած կլիներ, յեթե Մարտին Բայ-

դանիչը բարեկամաբար չհետաքրքրվեր Բաղդասարի մասարի մասնավոր գործերով։ Այս ել վերդասարի ջացնելով, նա սկսեց գանգատվել պարանոցի խոցից։

— Աղքեր, մի շաբաթ ե քունս կտրվել ե, անիրավն ասեղի պես ե ծակում վիզու։ Սուս գարշելիներ։ Գլուխը վերև բարձրացնել չեմ կարողանում։

— Յես ճարը դիտեմ, —ասաց Բաղդասարը, —վերցրու մի գլուխ սոխ, միջից կես արա, վրեն դիր այծի փիյ, կրակի վրա լավ սիրուն խորովիր, հետո տաք-տաք դիր դյումբալիդ վրա ու կապիր։ Համ ցավը կկտրի, համ ել չիրքը կքաշի…

Այդ պահին քիթը ծուռ աշակերտն ինչ վոր բարդ սարտոմորտայլ եր ուղում անել։ Հավասարակշությունը կորցրեց ու նստարանից ընկալ հատակը, բարձրացնելով ահազին դղրդոց ու թանձր վուշի։

Աշակերտները միաձայն քրքջացին։

— Այդ ո՞վ եր, —գոչեց Մարտին Բաղդանիչը, —եհե, ելի դո՞ւ, գարշելիներից գարշելի Մկիչ Զախմախչյան։ Դեհ առաջ յեկ, տեսնեմ, առաջ յեկ, ասում եմ, իժ, ոճի զալակի…

Քիթը ծուռ Մկիչը, կրակուտ աչքերը տեսչի յերեսին հառած, անշարժ եր։ Գիտեր ինչու համար են իրան կանչում։ Մարտին Բաղդանիչը, մի ձեռը վզին դրած, մյուսով քանոնը քարձրացրած, մոտեցավ նրան։ Է՛կիչը փա-

խավ։ Տեսուչը վազեց նրա յետելից, վիզը թեք պահած։ Մանուկը բարձրացավ նստարանների վրա։ Տեսուչն աջողեց բռնել նրա արխալուզի փեշը։ Սակայն Մկիչը դուրս սլկվեց, արխալուզը թողնելով տեսչի ձեռքում, և տկլոր թռավ զուսմտով փողոց։

— Տղերք, բռնեցեք այդ գարշելուն, —հրամայեց տեսուչը։

Մի խումբ աշակերտներ, մեծ մասամբ մարականներ, վազեցին նրա հրամանը կատարելու։

— Այ, տեսնո՞ւմ եք, պարոն Բաղդասար, ինչ սատանաներ են, զանգատվեց Մարտին Բաղդանիչը, վզի ցավից չկարողանալով յսուր հայցքը Բաղդասարի գոտիից ավելի վերև բարձրացնել, —ոզիս են հանում գարշելիները, հոգիս։ Մեր պահապան Անդրեասի վորդին ե, յերեք անդամ վռնղել եմ, ելի ընդունել։ Ի՞նչ անեմ, հայրը խեղճ մարդ ե, գալիս ե, վոտներս ընկնում, աղաչում, լաց լինում։ Գազանին հազար կրթիր, հեչ մարդ կդառնա՞։ Ի՞նչպես հրամայեցիք։ Սոխը խորովել, այծի փիյը, պինդ կապել։ Շնորհակալ եմ։ Սուս, անիրավագույն ալվանակներ…

Ներս բերեցին Մկիչին՝ մի կողմից աշակերտները բռնած, մյուս կողմից՝ Անդրեասը։

— Մարտին Բաղդանիչ, —ասաց հայրը, —գրա աստվածը ուզգին ե, տուր թե կտան փափուկ տեղերին, հոգիս բողազս բերավ։

Այն ժամանակներն արքունական դպրոցներում ծեծն արգելված չէր, և Մարտին Բաղդանիչն ամենայն հաճույքով գործադրում եր յուր իրավունքը հաստատ համոզված, վոր ծեծից ավելի զորեղ կրթության միջոց չկա։ Նա Մկիչի ձեռների ափերին տվեց տասներկու հարված, արտասանելով. «Պարշելի՝ մեկ, Պարշելի՝ յերկու, Պարշելի՝ յերեք, ավանակ՝ չորս, շամ, ձագ՝ հինգ և այլն...»

Մանուկը գոռալով գնաց յուր տեղը, ձեռ ները ծոցը դրած։ Սակայն յերկու բոպե չանցած, արխալուղը հագավ և, դեռ աչքերի արտասուցը չցամաքած, սկսեց ծամածություններ անել տեսչի, Բաղդասարի, նույնիսկ յուր հոր յետեկից։

Ծեծի աեսարանը Վարդանի վրա խոր տպավորություն գործեց։ Նա մտքում յերդվեց՝ յերբեք տեսչի բարկությունը յուր դեմ չպրզուել։

## V

Առաջին տարին Վարդանն ուսման մեջ ցույց տվեց բավական շնորք։ Սովորեց կարգար ուսւերեն ու հայերեն, նաև մի փոքր գրել։ Նու ամեն յերեկո դասերը կրկնում եր հոր մոտ և արժանանում նրա գովասանքին։ Սակայն հանկարծ նրա բանականությունը կանգ առագ, վորպես կամակոր ել զետի մեջտեղում և, կարծես, ալլես չեր ուզում առաջ յերթալ։ Բայց եւ

այնպես ունուկն իբնե աշխատասեր եր. առնելով ձեռն ամենակարող համբերության մտրակը, սկսեց առաջ քշել բանականությունը, անինա հարվածելով նրան։ Յել այն, ինչ վոր ընդունակ աշակերտները յուրացնում եյին առանց գժվարության, Վարդանը ձեռք եր բերում քրտինքով, բառի բուն մտքով։ Միայն մի առարկայում նա ընդունակություն ցույց տվեց—թվաբանության մեջ։ Արդեն տանը, անդադար համբելով յուր փողերը, նա ընտելացել եր թվաբանության չորս կանոններին։

Վարդանի դասարանական հարեւանը ձախ կողմից գինագործ Կարապետի վորդի Մինասն եր։ Շեկ մաղերով, հեղ, նիհար, հիվանդոտ դեմքով մի բարեսիրտ և ընդունակ մանուկ։ Հագնվում եր նա շատ աղքատ, կապույտ կտավից կարած արխալուղը կրծքի կողմում կարեատած եր մի քանի տեղ, իսկ նույն գույնի վարտիկն այնքան կարճ եր, վոր ասույա կոչա դուլպանների վերեկից յերեսում եյին նրա նիհարիկ սրունդները։ Նա մեջքին կապում եր հաստ ասույա գոտիի. միակ բանը, վոր պաշտպանում եր նրան ցըտից։ Սակայն յուր ցնցոտիների մեջ նա միշտ մաքուր եր մարմնով ավելի քան ով և եւ աշակերտներից։ Նրան անխտիր սիրում եյին բոլոր աշակերտները, վորովհետեւ յերբեք վոչ վոքի անախորժություն չեր պատճառում, վոչ վոքի չեր նախանձում և վոչ վոքի չեր մերժում յուր ողնությունը, յեթե կարող եր մի վորեն

բանով ոգտակար լինել: Յուր համեստ նախաւ-  
ձաշը, վոր մեծ մասամբ բաղկանում եր հաց ու  
պանրից, յերբեք մենակ չեր ուսում: Հենց ա-  
ռաջին որը նա սկսեց ոգնել Վարդանին դասերի  
մեջ: Ահա ինչու Վարդանն ընկերացավ նրա  
հետ և սիրեց նրան, իհարկե, այնչափ, վոր-  
չափ ընդունակ եր սիրելու:

Մինասի կատարյալ հակապատկերն եր  
ներկայացնում Վարդանի աջ կողմի հարեանը:  
Դա զգակ կարող Աթանասի վորդի Մարտի-  
րոսն եր: Նրա հակարելի բերանը, նեղ ճակա-  
տի տակից միշտ գողնովի նայող աչքերը, աղ-  
ռավի կտուցի նման սուր քիթն արտահայտում  
եցին քսու, նախանձոտ և կրքոտ հոգի: Նրա  
ամենասիրելի զվարձությունն եր՝ միշտ  
կմշտել յուր ընկերներին, միշտ դավաճանել  
նրանց, միշտ նրանց մանկական չարություննե-  
րի մասին զեկուցանել ուսուցիչներին կամ տես-  
չին: Հենց առաջին որը նա մի յերկու անգամ  
Վարդանին կմշտեց, կարծես, փորձելու հա-  
մար, արդյոք, նորեկի մարմինը յուր հարեվա-  
նությանը դիմանալու չափ ամո՞ւր է: Վարդա-  
նը վոչինչ չասաց, բայց մտքումը վորոշեց  
դգույշ լինել նրա հետ:

Այժմ Բաղդասարը հրամայել եր վորդուն  
ամեն որ ճաշից հետո գալ խանութ: Նա ուզում  
եր Վարդանին փոքր առ փոքր ծանոթացնել  
առետրական գործերին:

Խանութը գտնվում եր Զիլդիլ քաղաքի

ստորին մասում, մի ծածկված քարավանսա-  
րայում: Այդ մի վոչ այնքան մեծ սենյակ եր  
յերկու մասերի բաժանված: Յետեկի մասը բռնը  
ված եր դեռ չբացված ապրանքների հակերով,  
առջեկի մասը ներկայացնում եր բռն խանութը:  
Այստեղ ապրանքը գարսված եր հատակի վրա,  
պատերի տակ, վորովհետեւ այն յերանելի ժա-  
մանակը Զիլդիլ քաղաքում այժմ յան մագաղին-  
ների գարանների մասին գաղափար չունեցին:  
Բաղդասարը սովորաբար նստում եր խանութի  
մեջ տեղում, մինդարի վրա կամ պարսկի պես  
չորում, առջեն ունենալով պարսկական կես  
զազն ու մի կեղանա համարակալ, վոր տեղ-  
տեղ հիշեցնում եր պառավի ատամներ յուր  
հատիկների պակասով: Վարդանը նստում եր  
դռների առջև, սաքուի վրա: Մուշտարին գալիս  
խորոյն վոռքի յեր կանգնում, ձեռները դնում  
կըծքին ու սպասում հոր հրամաններին: Նա  
ողնում եր Բաղդասարին չթի կառըները բաց  
անելում ու ծալելում, ծախած ապրանքը փա-  
թթելում: Նա ավելում եր խանութը, մուշ-  
տարիներին խմելու ջուր եր տալիս, կրակ եր  
դնում նրանց ծխաֆարշի վրա և այլ այսպիսի  
մանը ծառայություններ մատուցանում:

Շուտով Բաղդասարը հանձնարարեց նրան՝  
վաճառել ապրանքի հակերից մնացած խսիր-  
ներն ու պարանները: Գոյացած փողերի կեսը  
պիտի պար հորը, իսկ մյուս կեսը գցեր յուր  
տուփի մեջ: Այս առաջին գործում Վարդանը

շույց տվեց զարմանալի առևտրական ձիբք։ Հենց վոր հեռվից տեսնում եր մուշտարուն, շոտառում եր դուրս թռչել, ցցվել նրա առջեն, դեմքից արդեն գուշակելով յեկողին ինչ ապրանք է հարկավոր։ Նա յուր խսիրներն ու պարանները, նաև կոտրափած արկղերը գովարանում եր այնպիսի ջերմեռանդությամբ, վորովես պարսիկ գարվիշներն ամեն որ խանութների առջեւ փառաբանում եյին Ռուստեմի Զալի ասպազենը։

Յերեկոները, յերբ առևտուրը վերջանում եր, Վարդանը կողպում եր խանութի գոները և, բանալիները վերցնելով, հոր հետ տուն վերադառնում։ Այդ միջոցներին կարելի յեր նրա դեմքի վրա նշմարել առանձին լրջություն, վորով խիստ տարբերվում եր փողոցներում վաղվրզող անհոգ մանուկներից։ Նա ինքն զգում եր յուր առավելությունը, և այս զգացումը նա արտահայում եր բանալիների միջոցով, վորոնց զրնացնում եր կատաղի կերպով, ընկերներին տեսնելիս։ Տանը նա հորը յենթարկում եր մանրամասը հարց ու փորձի այս կամ այն ապրանքի մասին։ Իսկ հայրը հրճվում եր, տեսնելով վորոնուն այդ չետաքրքիր և հարցասեր։

Կարճ միջոցում Վարդանն այնքան սիրեց վաճառականությունը, վոր ուսումնաբանն ել դարձրեց յուր համար մի տեսակ շուկա։ Սկսեց աշակերտներին վաճառել ամեն ինչ, վոր կարող

եր վաճառել՝ ընկույզ, շաղանակ, աղանձ, հալիք, յեփած սիսեռ, փոխինձ և այլն։ Յերեմին պաքսիմատը փաթաթում եր թղթի մեջ, քարով ծեծում մանրացնում, խառնում շաքարի հետ ու պտղուցը մի կոսկեկով ծախում։ Առեփտուրը նրան ավելի յեր զբաղեցնում, քան նույնիսկ ընկերական խաղերը։ Այս առիթով քիթը ծուռ Մկիչը նրան յենթարկում եր ամենակծու հեղնության, իհարկե, ավելի գործով, քան խոսքով։ Անդուլ չարաձձին Վարդանի համար դարձավ կատարյալ յերկնային պատիժ։ Ինչ ասես անում եր փոքրիկ վաճառականին կատաղեցնելու համար։ Խլում եր ձեռքից «տոլքանքը», վազում, բարձրանում ուսումնաբանի կտուրը, նստում յեղին, վոտները ցած գցելով, և նրա աչքի առջեւ անուշ անում հալիքան, աղանձը, փոխինձը։ Յերեմին հավաքում եր յուր շուրջն ընկերներին և ավարը բաժանում նրաց։ Հետո յուրաքանչյուրին տալիս եր մի-մի թղթյա կոպեկանոց և պատվիրում վճարել Վարդանին։ Աշակերտները, ծիծաղելով ու վոստոստալով, մոտենում եյին վաճառականին ու ասում։

— Սո՞վորաքյար, ա՞ռ ապրանքիդ գինը։

Սակայն այս բոլորը Վարդանին չեր վհառեցնում։ Հակառակ յուր հոր սկզբունքին, նա քնազդաբար հասկանում եր, վոր միայն մարդկանց բարեկամությունը կարելի յե չագործել, իսկ մարդատեցությունից ոդուտ չկու։

Ուստի աշխատում եր վոչ վոքի հետ չկտրել յուր  
հարաբերությունը: Միևնույն ժամանակ, վոչ  
վոքի վատությունը չեր մոռանում և հարմար  
միջոցին վրեժն առնում եր յուրովի: Այսպես,  
որինակ. մի անդամ գանգրահեր Լևոնը, փալան  
կարողի թոռը, վոր մոռացել եր տնից նախա-  
ճաշ բերելու, սաստիկ քաղց զդալով, խնդրեց  
նրանից մի կտոր հաց ու պանիր: Վարդանը մի-  
որ նրանից ծաղրվել եր և այդ որից վոխ եր պա-  
հում նրա դեմ: Նա յուր հացի կտորը բաժանեց  
յերկու մասերի, մի մասի վրա դրեց համեղ  
պանիրն ու ասաց. «առ կեր»: Հազիվ Լևոնը ձե-  
ռը մեկնել եր, Վարդանը հացը ձգեց կեղտուա-  
տվազանի մեջ, ասելով. «վերցրու, կեր»: Հետո  
սկսեց յուր բաժինը խոլշուել, քաղցած ընկերոց  
ախորժակը բորբոքելով անողոք սառնարտու-  
թյամբ:

Մի որ նա ուսումնարան բերեց ծախելու-  
տասը հատ փայտյա գդալներ: Ոսմանը չնոր-  
քով մարդ եր. նա յեր շինել այդ գդալները:  
Վորպեսզի քիթը ծուռ Մկիչը չխանգարի իրան,  
Վարդանը մի գդալ նվիրեց նրան—առաջին  
նվերը յուր կյանքում: Այն ժամանակ Մկիչն  
ինքը հանձն առավ ծախել «ապրանքը»:

— Մածուն ուտելու գդալ, մածուն ուտե-  
լու գդալ, —վազվելով բակում, գոռում եր  
նա, —ո՞վ ե ուղում, հատը յերկու կոպեկ:

Կես ժամում բոլոր գդալները վաճառեց ու  
փողերը հանձնեց Վարդանին:

Զատիկ որը Բաղդասարը Մարտին Բաղ-  
դանիչի համար ուղարկեց մտքում խոստացած-  
մի գլուխ շաքարը և մի Փունտ թեյը, ավելաց-  
նելով կես դյուժին կոլենկորի թաշկինակ:  
Հետո ինքը բարեհաճեց գնալ անձամբ տեսչի  
մոտ՝ տոնը չնորհավորելու—միակ այցելու-  
թյունը, վոր այդ որն արավ, բացի, իհարկե,  
Աբրահամ աղայից: Մարտին Բաղդանիչն ըն-  
դունեց նրան խորին հարգանքով և բարեկամա-  
բար հանդիմանեց: Ասոված վկա, նա չեր ըն-  
դունի այդ նվերը, յեթե իմանար, վոր աղա-  
Բաղդասարը չի վիրավորվել:

Խոսեցին Վարդանի մասին:

— Աչքիս լուսի պես եմ սիրում: Շատ խո-  
նարհ տղա յե, արարքներից յերեսում ե, վոր  
լավ ոջախի վորդի յե: Մինչև որս մի անգամ  
ել չեմ ծեծել: Իսկ յես, ինչու մեղքս թագցնեմ,  
սիրում եմ յերեմն փոքրիկներին ծվծվացնել,  
մեծերին կարցեր նստացնել: Շատ ել աշխա-  
տասեր ե, Պողոս-Պետրոսը վկա: Պատալստա,  
ծխեցեք, յերեւլի թյություն ե, Սամսոնի  
իսկական դյուքեկ ե: Աշակերտներիցս մե-  
կի հայրն ե ուղարկում ինձ: Զե, ասու-  
ված պահի, լավ վորդի ունիք: Իսկի  
ընկերների հետ չի կովում: Ուրիշներն ել կովե-  
լիս քաշվում ե մի կողմ, մտիկ անում. վոր  
միմ յանց մորթեն ել, մատ մատի չի խփի: Իսկ  
յերբ իրան են ձեռք տալիս, գալիս ե ու ինձ

գանգատվում։ Հավանո՞ւմ եք թյությունը։ Շատ լավն ե։ Հա, չմոռանամ ասել, այումբարս ախար լավացավ, Վարդանն ասած կլինի, ձեր ճարհ ողնեց յերեք որում։ Չե, յերեւելի տղա յե Վարդանը։ Դիտեք ի՞նչ, հա, լավ միտս յեկայ, այժմյանից սկսել ե առուտուր անել։ Հապա՛։ Նա աշակերտներին ծախում ե տեսակ տեսակ ուտելիքներ, փող ե աշխատում։ Իմ արելը, յես կյանքումս մորդուդ պես զոչաղ տղա չեմ տեսել։

Դոների մոտ տեսուչն անփույթ յեղանակով հարցեց։

— Լաջվերդի գույնի կաստոր ունի՞ք։  
— Կճարվի։

— Պաժալստա, մի բրյուկացու կտրեցեք, տվեք Վարդանին, բերի։ Փողն, իհարկե, նազդ կտամ։ Բրյուկիս քամակը մաշվել ե, ա՛յ, տեսե՛ք, ամոթ չլինի…

Յեզ Մարտին Բաղդանիչը, յերեսը չուռ տալով, հետ արագ մունդիրի փեշը և ցույց տվեց վարտիկի մաշված տեղերը։

— Աչքիս վըա, ասաց Բաղդասարը, իսկ մտքում ավելացրեց. «Քո՛ ել, կաստոր ծախո՞ղիդ ել, շալվար կարո՞ղիդ ել յոթը պորտը»…

## VI

Մի որ բարի Մինասը դասամիջոցին զարձակ Վարդանին։

— Ի՞նչու մեր տուն չես գալիս։

Վարդանը տատանվեց ձիչտ պատասխան տալու։ Ամաչում եր ասել, վոր հայրը պատվիրել ե վոչ վոքի հետ մոտիկ ընկերություն չունենալ, մանավանդ մի ինչ վոր զինագործի վորդու հետ։

— Եզուց յե՛կ, — հասպիրեց նա, — կդա՞ս։  
— Վոր զամ ի՞նչ կտաս։

— Ինչ կտա՞մ — արտասանեց Մինասը, չիմանալով ինչով կարող ե գրավել Վարդանին, — մածուն սիրո՞ւմ ես։ Մենք մի զավ կով ունինք, մայրս ե կթում։ Ամեն որ մենք ուտում ենք մածուն, թանով, կաթնով։ Սիրո՞ւմ ես։

— Յես սեր եմ սիրում։  
— Մե՞ր։ Մայրս մեզ սեր չի տալիս։ Յուդ ե պատրաստում նրանից ու ծախում։ Բայց կասեմ, վոր քեզ համար սեր պահի։ Կդա՞ս։

Վարդանն այլևս չկարողացավ իրեն զսպել ու ասաց։

— Ախր յես քո ընկերը չե՞մ։  
— Ի՞նչու։

— Դո՞ւ ով, յե՞ս ով։ Հայրս ասում ե. սովորաբարի վորդին չի կարող արհեստավորի վորդու հետ ընկերանալ։

— Հատ՝ — արտասանեց Մինասը միամբար ե, անգիտակցորեն նայելով ընկերոջ վոսկեզոծ քամարին ու փայլուն կոշիկներին, կարմրեց, — յես չեցի իմանում։ Այդ մասին ավետարանում գրա՞ծ ե։

— Ավետարանն ի՞նչ գործ ունի այստեղ։

— Ինչպես չե, իմ հայրն ամեն յերեկու կարդում ե ու ասում՝ ամեն հրաման ավետարանից կամ աստվածաշնչից ե գալիս։ Ուրեմն մեր տուն չե՞ս կարող գալ, ամո՞թ ե։ Ափսօ՞ս։

Սակայն Վարդանը չեր ուզում վիրավորել բարեսիրտ ընկերոջը, վոր ամեն որ նրան դասեր եր սովորեցնում, ուստի հարցրեց։

— Ձեր կողը հորթ ունի՞։

— Իհարկե, ունի։ Շատ սիրուն ու չաղ հորթ ե։ Ամեն որ ճաշից հետո տանում եմ նրան քաղաքից զուրս արածացնելու։ Այնքան յոնջա ու կաթնուկ ե ուտում, այնքան ե ուտում, վոր փորն ուռչում ե յերկու կողմից տկնորի պես։

— Ասում ես եգուց կիրակի՞ յե։

— Կիրակի յե։

— Մեր դուքանը փակ ե լինելու եգուց, տեսնենք, կարելի յե գամ։

— Հաա՞, բաս մայրիկիս ասեմ քեզ համար սեր պատրաստի։

— Ինձ չե՞ս կանչում, — մեջ մտավ նախանձոտ Մարտիրոսը, վոր ներկա յեր այս խոսակցությանը։

— Դու առանց կանչելու ել գալիս ես, — ասաց Մինասը։

— Թող եգուց չգա, — շշնջաց Մինասի ականջին Վարդանը, վոր ամրող հոգով ատում եր Մարտիրոսին։

— Ի՞նչ ես վնթիվնթում, — զոչեց նախանձոտ մանուկը բութ մատի հողով բոթելով

Վարդանի կողը, — աա' հասկացա։ Յես սովորաբյարի վորդի չեմ, հաա՞։ Իմ հայրը գգակ կարող ե, բայց քո հորից ել, պապից պապիցն ել մեծ մարդ ե։ Գիտե՞ս, ինչ մեծամեծներ են գալիս մեր դուքանը։ Յերեկ ակոլողոչնին ինքն եր յեկել, հասկանում ես։

Վարդանը բարձրածայն ծիծաղեց։

Զինագործ Կարապետի տնակը գտնվում էր թաղի վերջում, վորից գենը կային միայն մի քանի խրճիթներ, այնուհետև քաղաքը վերջանում եր։ Այս տնակը բաղկացած եր ընդամենը յերկու փոքրիկ սենյակներից, սրանց կից գոմից ու թոնրատնից, վորը, միևնույն ժամանակ, և խոհանոց եր։

Վարդանին այնտեղ ընդունեցին մեծ հարգանքով։

Կարապետը, վոր նաժդակով սրբում եր մի յերկայն հրացանի փող, իսկույն մի կողմ դրեց սոսկալի զենքը և վոտքի կանգնեց, կոչաձեռը պարզելով հյուրին։ Իսկ նրա ամուսինը — թագուհին գրկեց ու համբուրեց նրան, ասելով. «աստված քեզ ջուխտ ձեւներով պահի մորդ համար, քալա»։ Դա սիրուն դեմքով, Հազիվ քանուիննը տարեկան, զեղեցիկ աչքերով, սև ունքերով, բացգույնի մաղերով մի կին եր։ Հարեան կանայք միշտ նրան նախատում եյին, վոր չի ուզում գլխի մազերը հինայով ներկել իրանց պես։ Յեվ այս իսկ պատճառով նրան անվանում եյին «մատուշկա»։

Թեև այս բառն այն ժամկնակվա տեղական հայ կանանց բերանում ուներ վատ իմաստ, բայց թագուհին չեր վիրավորվում: Ծաղրողներին նու, ներողամտաբար ժպտալով, պատասխանում եր. «Ավելի լավ ե՝ հայ քրիստոնյայի կնիկը մատուշկայի նմանի, քան մի թուրք ֆաթմայի կամ Խաճճայի»: Ով գիտե, դուցե ընական ճաշակը նրան թելադրում եր, վոր բաց գույնի մազերը խիստ ներդաշնակում են յուր խոշոր աչքերի մուգ գույնին և սե ունեքերին:

Կարապետը վերցրեց մի յերկայն դաշույն և սկսեց սրբել նրան այնպիսի յեռանդով, վորպես Ռիգուետոս ոպերայում ավագակ ՍպարաՓուչիլեն և սրբում յուր սուրբ:

— Բազզասար աղան մեր քաղաքի սյուներից մեկն ե', — ասաց նա, դաշույնը պահելով լուսու գեմ, վոր տեսնի, չկա, արդյոք, նրա վրա մի վորեե բիծ, — մեր պարտքն և նրան պատիվ տալ: Այ կնիկ, յերեխային մի բան տուր ուտելու:

Այդ մարդու սիրած զբաղմունքներից մեկն եր միշտ մի վորեե բանով հյուրասիրել յուր վորդու հասակակիցներին: Գրեթե ամեն յերեկո, խանութից տուն վերապառնալիս, փողոցում մանուկներին բաժանում եր զանազան մրգեղեն: Յեվ մանուկները սիրում եյին այդ կլորիկ գեմքով, մի փոքր ցցված այտերով, մեծ ու բարեհամբույր բերանով մարդուն,

վորի աչքերը, չնայելով քառասնամյա հասուկին, արտահայտում եյին մանկական անմեղություն: Նա վո՛չ միայն բարի յեր, այլ համբերողամիտ: Կնոջ հետ վարվում եր մեղմ, զավակներին պաշտում եր, յերբեք Մինասին չեր ծեծում: Նա գիտեր գրել-կարդալ, վորովհետեւ քահանայի վորդի յեր: Յերեկոներն ազատ ժամերին բարձրածայն կարդում եր ավետարան կամ աստվածաշունչ վանկ-վանկ, յուրաքանչյուր բառն առանձին չեշտելով յերբեմն յերկար բառերի կիսում, նաև տողավերջերում, վերջակետ դնելով:

Ներս մտագ Մարտիրոսը և իսկույն փափագ զգաց Վարդանին կմշտեղու, տեսնելով նրան կարապետի մոտ նստած: Թագուհին մեջտեղ բերեց սերի գավաթը և սկուտեղի վրա մի ամբողջ թարմ հաց ձեռով կտրտած (դանակով կտրտելը մեղք եր համարում):

— Յես ել եմ դայմաղ ուզում, — զուաց նրա գուստրը, յերեք տարեկան Հերիքնազը, սենյակի մյուս անկյունից:

Վարդանը նայեց այն կողմ և բարձրածայն ծիծաղեց: Մինասի քույրը մի տարի ու յերկու ամսական յեղբոր՝ Սամսոնի հետ միևնույն ափսեյից մածուն եր ուտում: Սամսոնի ձեռները տակալիին լավ ուտումնասիրված չլինելով ստամբուի ճանապարհը, մածունը, նախան բերանին հասցնելը, քսում եյին քթին, ծնոտին, ականջներին, ճակատին, կոկորդին

Այժմ նա այնքան շաղախել եր ինքն իրան, վոր ամբողջ դեմքից յերևում եյին միայն սաթի պես ու աչքերը:

— Ա' կնիվ, այն մայմունիդ ել մտի՛կ տրա, — ասաց Կարապետը, մեղմ ծիծաղելով:

— Փչա՞նաս դու, Սի՛մոն տղա, — դոչեց թագուհին և, մոտենալով, մի թույլ հարված տվեց փոքրիկի փափուկ տեղին:

Նա վերցրեց մածունի ակսեն: Սամսոնն անասելի վայնասուն բարձրացրեց: Թափալվեց մեջքի վրա ու սկսեց ձեռներն ու մերկ վոտներն ուժգին թափով զարնել հատակին: Կարելի յեր կարծեց, վոր նրան ձգեցին յեռացրած ջրի մեջ: Կատարելով այս սովորական գործողությունը, վոտքի կանգնեց, հարձակվեց քրոջ վրա և սկսեց կծոտել նրա վիզը, յերեսը, ուսերը: Այս ել վերջացնելով, չորքոտանի կանգնեց, գլուխը գրեց հատակին և, մերկ վոտների արանքով նայելով հոր յերեսին, սկսեց բղավել կոկորդի ամբողջ ուժով: Աստված գիտե այլևս ինչ ոյիններ ցույց կտար պստիկ անարխիստը հյուրերին, յեթե մայրը չվերցներ նրան և չտաներ մյուս սենյակ, ճանապարհին նրա փափուկ տեղերին տալով քանի մի խրատիչ հարվածներ:

Այս հաղիվ վերջացել եր այս տեսարանը, յերբ, գնդակի պես, ներս սլացավ Մկիչը: — Բարի լույս, ուստա Կարապետ, հայրս քեզ մի ջվալ բարով և ուղարկում, —

գոչեց նա վերին յաստիճանի համարձակ, — քեֆդ լա՞վ ե: Մի՛նաս, ինձ համար մածուն պահե՞լ ես: Ուսո՞՛, վաճառական Վարդանն ե՞լ այստեղ: Բա՛րով, աղա, հազար բարով. ապրա՞նք ես բերել ծախելու, թե՞ փող ես բերել շահով տալու: Ա' քթի մազ, դու ե՞լ ես ա՛յս տեղ՝ դարձավ նա Մարտիրոսին, վորն արդեն աջողել եր տասնումեկ անդամ կմշտել և իննը անգամ բոթել Վարդանին:

— Քո բանը չե, փնթիվնթաց Մարտիրոսը:

— Ինչ ասացի՞ր, իմ բա՞նը չե, — գոչեց Մկիչն ու նույն վայրկյանին Մարտիրոսի գլխի վրայով մի վոստում գործեց, — քթի մազ, անիներ թոմաս, յարամազ: Աղա, այստեղ ոեխիդ մտիկ անել չեն ուզում, ի՞նչ ես յեկել աներես շան պես թազնել: Ուսո՞՛ք, տեսե՛ք, սեր և ուտում... Հե՛ռու կանգնիր, թաղուհի բաջի, հե՛ռու, — բացականչեց չարաճին, վերցնելով հրացանը և ուղղելով Մարտիրոսի կըրծ-քին:

Մարտիրոսը գոռաց, գունատվեց և փախավ թագնվեց Կարապետի քամակում:

— Մի՛ վախենար, վորդի, հրացանը դատարկ ե, — ասաց զինագործը և շտապեց սոսկալի զենքը խլել Մկիչից: — Կրակի կտոր ե, խոմ յերեխա չե՛: Քո հոր վիզը չկոտրվի, Մկիչ աղա:

Մկիչը բռնեց Մարտիրոսի տեղը և սկսեց

արագ-արագ վոչնչացնել սերը։ Վերջացնելով  
նախաճաշը, նա կարապետին թախանձեց  
պատմել ավազակապետ Մոլլա-Ղանիի մասին,  
վորն այն ժամանակներն ամբողջ Զիլզիլ դա-  
վառը սարսափի մեջ եր գցել։ Կարապետը սի-  
րում եր պատմել այդ ավազակապետի սիրա-  
գործությունները, յերբեմն այնպիսի թանձր  
գույններով, վոր ահ ու սարսափ եր ազդում  
ունկնդիրների վրա...

Մի վայրկյանում նրա շուրջը կազմվեց  
հետաքրքրիների մի խումբ, պատրաստ նրա  
յուրաքանչյուր բառը կլանելու նույն ախոր-  
ժակով, վորպես կլանեցին սերը։

## VII

— Մոլլա-Ղանին, վո'րդի, աստված նրա  
տունը քանդի, վոր քանդեց սազ աշխարհի տու-  
նը, պրծավ,— այսպես սկսեց զինագործը,  
բեղերը շփելով։ — Նա մա'րդ չե, հոգեհան ե:  
Եղի նորերս յոթանասուն հոգու գլուխ ե կտրել  
սոխի պես։

Այս առաջաբանից ամբողջ առողիտորիա-  
յի մարմնով սարսուռ անցավ։ Բոլորը լարեցին  
իրանց խելիքը, մանավանդ Մկիչը։

— Արդուրահմանի քարվանը, որը մթնած  
չմթնած, կանգնում ե Ղըզըլ-դաղ սարի տակ,  
մի աղբյուրի մոտ, — շարունակեց կարապետը,  
բռնելով բեղերից մեկը և նայելով նրա ծայ-  
րին։ — Քսանուհինդ ուղտի, յերեսուն ձիու և

իննը անդամ իննը եշի մեջքից բեռները վերց-  
նում են։ Բեռները վերցնում են, հեյվաններին  
բաց են թողնում արտծելու։ Բաց են թողնում  
արածելու, Արդուրահմանը ծառաներին հրա-  
մայում ե վղավ յեփել։ Բրինձը լվացած, չլվա-  
ցած, հեռվից յերեսում ե մի ձիավոր։ Արդու-  
րահմանը մատը կծում ե, թուֆանդը վերց-  
նում։ Թուֆանդը վերցնում ե, առաջ գնում։  
Առաջ ե գնում ու գոռում։ «ա'զա, ո՞վ ե յեկո-  
ղը»։ — Աստծու հյուրը, պատասխան ե, լրս-  
վում։ «Աստծու հյուրն աչքիս վրա տեղ ունի,  
համե'ցեք»։ — Սալամ Ալեքիմ։ Ալեքիմի Սա-  
լամ։ Յեկողն ասում ե. «Ա'բդուրահման, քաղ-  
ցած եմ, մի բան տուր ուտելու»։ Արդուրահ-  
մանը, գուք եք աղաներս, հրամայում ե՝  
փլավ բերել։ Ձիավորը ցած ե գալիս ձիուց։  
Դե'ս-դե'ն, իմացվում ե, վոր սովորացյար ե,  
գնում ե Ղարբիստան վոչխար գնելու։ Փլավն  
անուշ են անում, պառկում են քնելու։ Քարվա-  
նում յերեսունուհինդ մարդ ե լինում։ Վո'չ ա-  
վելի, վո'չ պակաս։ Քնած-չքնած, Արդուրահ-  
մանը մի թմիոց է լսում։ Թմիոցը լսում ե,  
վոտքի յե կանգնում, ծառաներին ել զարթեց-  
նում։ Հա՛յ դես, հա՛յ դե՛ն, ձիավորը չկա՛ ու  
չկա՛. տափոխն ե անցել, յերկինքն ե թոել չկա՛  
ու չկա՛.. Հիմա՝ յեթե հարիֆ եք, իմացե՛ք.  
ո՞վ եր ձիավորը։

— Դկը—պատասխանեց Մարտիրոսը։  
— Չե՛:

— Սուրբ Սարգիսը, —պատասխանեց Մինասը, յերեսին խաչակնքելով:

— Ախմատիս, սուրբ Սարգիսը թուրքի փըլավ կուտե՞ր, —նկատեց Կարապետը:

— Յես ասեմ՝ ով եր. Մոլլա-Ղանին, —մեջ մտավ Մկիչը:

— Աֆարի՛մ տղա, լա՛վ խմացար: Նա ինքն ե լինում:

Մանուկները միաժամանակ սարսափելի ճշացին: Մկիչը յուր դուռչը բոլորովին մոտեցրեց զինագործի քթին, արմունգները հենած ծնկներին և ձեռներով ծնոտը բռնած:

— Դուք եք աղաներս, —շարունակեց Կարապետը, թամբաքուի չոր տերեն ափերի մեջ տրորելով, վոր չիրուխը լեցնի, —ինքը Մոլլա Ղանին ե լինում: Դու՛ մի ասա, յեկած ե լինում իմանալու՝ քարվանում քա՛նի թուֆանիգավոր կա, ի՞նչքան տպրանք և այլն:

— Ա՛յ սիրտ, —գոչեցին մանուկները միաբերան, բացի Մկիչից:

— Ա՛սլան ե, խոմ մարդ չե: Հա. հենց վորիմանում ե քարվանում մի քանի հազար թումանի ապրանք կա, գիշերվա կիսին ձի յե նըստում, գնում անտառը, ընկերներին հավաքում, հետ գալիս...

— Հետո՞ հետո՞...

— Առաջ-առաջ՝ Արդուրահմանին կապում ե ծառին, հետո՝ ծառաների վիզը մեկ-մեկ կտրում, հետո յել ընկնում մյուսների վրա—

տո՛ւր-հա կտաս: Դե՛ս կտորում, դե՛ն կտորում մի ժամում տասնուհնգի գլուխն ե թոցնում, տասնումեկի փորերը պատռում, ջիգարները հանում, յերեսունուհնգին գյուլախորով ե անում, յերեքին միջից կես անում, չներին տալիս, յերկուսին չորս-չորս կտոր ե անում, մի քսան-յերեսնին ել կիսամահ անում, վորի ականջը կտրելով, վորի քիթը, վորի լեզուն...

— Ինչո՞վ. Թրո՞վ, թե՞ խանչայով, —հետաքրքրվեց Մկիչը:

— Ղինջով:

Տասնուհնգ, տասնումեկ, յերեսունուհնգ, յերեք, յերկու, քսան, յերեսուն, Արդուրահմանը, ծառաները, —արտասանեց Վարդանը, —Կարապե՛տ ապեր, դա հարյուրից անցավ: Դու ասացիր, քարվանում, վոչ ավելի վոչ պակաս, յերեսունուհնգ մարդ ե լինում:

— Յա՛նդլը ես, շա՛տ ե լինում, բա՛լա, —ասաց Կարապետը, մազու չափ չշփոթվելով, վասն զի, յերք վոզեռորդում եր, ամենից առաջ ինքն եր հավատում յուր յերեակայության ստեղծագործությանը:

— Հետո՞ հետո՞, —կրկնեց Մկիչն անհամբերությամբ:

— Հետո ամենին թալանում ե, տկլոր բաց թողնում: Ապրանքը բարձում ե ձիերի վրա ու, գարշապարին թքելով, հա՛յդա, փախչում...

— Բայ քարվանում մի հատ տղամարդ ել

և չի՞ լինում — գոչեց Մկիչը վրդովված, — այ  
վախկոտնե՞ր...

Նրա աչքերը հուզումից վառվել եյին, այ-  
տերը կարմրել, շունչը սաստկացել սարսափեցի  
պատմվածքի աղջեցությունից:

— Յես լինեցի Արդուրահմանի տեղը, —  
մեջ մտավ Մարտիրոսը, — փլազի մեջ մկնդեղ  
կածեցի, կտայի Մոլլա-Ղանիին, կուտեր ու  
տեղն ու տեղը կսատկեր:

— Քանի՞ հազար թումանի ապրանք է թա-  
լանում, — հետաքրքրվեց Վարդանը:

— Հա շա՛տ, վորդի, հա շա՛տ: Ասում են՝  
Միայն յոթը տոպրակ վոսկի յել լինում:

— Ի՞՞Փ, ա՛փսոս, — արտասանեց Վարդանը  
Հոգու խորքից, — գոնե մի տոպրակ իմ ձեռքն  
ընկներ:

— Խե՛ղճ մարդիկ, խե՛ղճ մարդիկ, — գո-  
չեց Մինասն արտասվալի ձայնով, — ինչո՞ւ  
«Հրաժարիմք» չեն ասել: Յեթե «Հրաժարիմք»  
ասեյին, գիշերը քարվանի չորս կողմը յոթը  
շարք յերկաթե պարիսպներ կկանգնեյին. ավա-  
գակները չեյին կարող մոտենալ:

Մի փոքր անցած, մանուկները դուրս յե-  
կան սենյակից խաղալու: Մինասն առաջարկեց  
զնալ մերձակա բլուրը: Նրանք իրանց հետ տա-  
րան հորթին: Փողոց դուրս գալիս Մկիչը ցան-  
կապատի միջից դուրս քաշեց չորս ցից յուր և  
ընկերների համար, առեղով.

— Հարկավոր կզա:

Յեվ, իրավ, շուտով փայտերը հարկավոր  
յեղան: Հենց վոր մանուկները բարձրացան մեր-  
ծակա բլուրի գագաթը, հանդիպեցին մի խումը լո-  
թուրք պատանիների: Հակառակի պես՝ հենց  
այդ պահին գրդովեց հորթի աղատասիրության  
բնագդը: Նա խլեց կապը Մինասի ձեռքից և  
փախավ, պոչը ցցելով ողի մեջ վորպես թե-  
թևամտության զրոց: Նա վազում եր գեպի մի  
դեղնագույն կով, յերկի, յուր մոր տեղն բն-  
դունելով նրան: Թուրքերն իսկույն բռնեցին  
նրան:

— Բա՛ց թողեք, — աղաղակեց Մինասը հեռ-  
պից:

— Յեթե կարող ես, ինքու յե՛կ, տա՛ր, —  
իրոխտացին թուրքերը:

Նրանք սկսեցին հորթին չարչարել: Մեկը  
նստեց նրա մեջքին, մյօւսն ականջներից բռնած  
առաջ եր քշում, իսկ մնացյալները փայտերով  
բղբզում եյին: Դրությունը տագնապալի յեր-  
պետք եր — կամ ուժով հորթին աղատել, վոր  
անկարելի յեր առանց կովի, կամ թույլ տալ,  
վոր թուրքերը տանեն նրան: Մարտիրոսն սկսեց  
հեռվից թուրքերեն հայհոյել այնպիսի կեղտոտ  
հիշոցներով, վոր գիտչում եյին հակառակորդ-  
ների հավատին: Թուրքերից մեկը քար արձա-  
կեց և դիմցրեց Մինասի վոտին: Խեղճ մա-  
նուկը ցավից աղաղակեց, բայց վորովհետև  
յերկչոտ չեր, չփախավ:

— Տղե՛րք, շա՛տովոր են, բայց չվախենա՛ք,

—զոչեց քիթը ծուռ Մկիչը, —դուք այստեղից  
առաջները պահեցեք, յես այս ըոպելին կզամ...

Ասաց և խկույն վազեց անհետացալ բլրի  
յետեռում: Վարդանն ահից դողում եր և արդեն  
մտածում եր փախչելու մասին: Մարտիրոսը  
շարունակ հայհոյում եր:

Հանձնելով հորթին ընկերներից մեկին,  
թուրքերը միահամուռ վազեցին Մինասի վրա և  
մի ըոպեյում շրջապատեցին նրան հովի չների  
պես: Բոլորը զինված եյին թոնրում խանձած,  
ապակիով հղկած և յուղած փայտերով: Մի-  
քանիսը չուխաները հանել եյին և վահանի ձեռվ  
թեներին փաթաթել: Զնայելով վտանգին, Մի-  
նասը չեր փախչում: Նա այնքան եր սիրում յուր  
հորթին, վոր պատրաստ եր մինչև մահ կովել  
նրա համար: Նա գունատ եր, աչքերը պսպղում  
եյին, նիհար կուրծքն ուռել եր:

Նրա մեջքին և ուսերին տեղացին փայտե-  
րի հարվածներ, իսկ ինքը մեկին շարքից դուրս  
դցեց մի աջող հարվածով:

Թշնամիները կատաղեցին նրա անվեհերու-  
թյունից: Այն ինչ՝ Վարդանն ու Մարտիրոսն  
ավելի հեռացան, բռնեցին ապահով դիրք, վոր-  
ուեսզի հարկ յեղած միջոցին տմարդաբար փախ-  
չեն անվտանգ: Մինասը բոլորովին մենակ եր,  
թշնամիներից շղթայված, վորպես մի յեղջե-  
րու, չների վոհմակից: Բայց նա չեր ել մտա-  
ծում, թե առանց յուր սիրելի հորթի կարող ե-  
տուն վերադառնալ: Նա ոգնության կանչեց

ընկերներին, բայց անոգուտ: Նա դարձյալ մի  
քանի հարվածներ ստացավ, ձեռը թուրացավ,  
բայց փայտը բաց չթողեց: Հարմար վայրկյան  
վորսալով, նա հարվածեց մեկի գլխին և ջար-  
ուեց: Այն ժամանակ թուրքերը բռնեցին նրան և  
սկսեցին խեղդել: Հետո դլորեցին գետին և  
սկսեցին վոտնակոխ անել: Խեղճ մանուկը հու-  
սահատությունից սարսափելի ճշում եր:

Հանկարծ բլրի յետեկից հայտնից Մկիչը  
յերկու հասակակիցների հետ:

— Աղա, հուռոա՛, Մոլլա-Ղանին յեկավ,  
—աղաղակեց նա թուրքերեն և հարձակվեց  
թշնամիների վրա:

Թուրքերը շփոթվեցին, Մինասին թողեցին  
գետնի վրա կիսաշունչ: Մկիչն ոկսեց հարված  
հարվածի յետեկից թափել նրանց գլխին: Մա-  
նյովըն անսպասելի յեր: Թուրքերն ոկսեցին  
հետ նահանջել: Սակայն, վոր կողմ դիմում  
եյին, հանդիպում եյին արագաշարժ Մկիչի և  
նրա ողնականների հարվածներին: Վարդանն  
ու Մարտիրոսը սիրու արին առաջ վաղելու: Այդ  
միջոցին Մինասն ել վոտքի յեր կանգնել: Թուր-  
քերը, յելք գտնելով, փախան: Բայց հորթը  
դեռ նրանց ձեռքումն եր:

— Աղա, մի՛ վախենար, հորթին ել կա-  
զատենք այդ քաջախերի ձեռքից, —զոչեց  
Մկիչը, վազելով թուրքերի յետեկից:

Բարեբաղդաբար, հորթը մի զորեղ ցնցու-  
մով գլուխն աղատեց, փախավ, դարձյալ պո-

չը վեր ցցելով. այս անգամ, կարծես, իր հաղթության դրոշ։ Կյանքում նա յերբեք այսպիսի խելոք բան չեր արել։ Մկիչը վաղեց ուստեց նրա վզին կապած պարանի ծայրի վրա, գոռալով։

— Աղա, հուռուա՞...

Վոնդելով թշնամիներին, ազատելով հորթին, փոքրիկ Սուվորովը հոգնած, հևալով, պառկեց մեջքի վրա կանաչազարդ զետնին։ Այժմ միայն Վարդանն ուշ դարձրեց նրա յերկու ողնականների վրա։ Մեկը գանգրահեր լեվոնն եր, նա, վորին Բաղդասարը ծաղրեց ուսումնաբանում առաջին որը։ Մյուսը մի փոտաբորիկ, կիսամերկ մանուկ եր Սահակ անունով, մեկը փողոցային շրջմոլիկներից, վորոնց հետ Վարդանին խստիվ արգելված եր վորեե հարաբերություն ունենալ։

— Յես տուն եմ գնում—ասաց Վարդանը։

— Միասին կգնանք, սպասի՛ր, մի քիչ խաղանք, հետո.—ասաց Մկիչը։

Սակայն Վարդանը յուրը պնդեց։ Վերջապես, ընկերները հասկացան, վոր նա չի ուզում Սահակի հետ մի խմբում մնալ։ Մկիչը վրդովվեց։ Վաղուց արդեն նա հոգու խորքում ատում եր Վարդանի գոռոզությունը։

— Զե՛ս սիրում, հաա՞, — զոչեց նա, վոտքի կանգնելով և փայտը ձեռում ամուր սեղմելով, — ադա՛, սովորաբարի տղա, Սահակը քեզ

պես տասին արժե։ Տեսա՛ր ինչպես ձեզ ազատեց թուրքերի ձեռքից։ Նրա նման փայտ խփող չկա։ Եե՛, փայտ խփելու ինչ ե, մի յերգել գիտե՛, վոր քո տեր-Սահակը նրա մոտ հե՛չ բան։ Ա՛ղա, Սահակ, մի «Առավոտ լուսո» կլկացրու, թող նամարդը լսի...

Առանց յերկար սպասել տալու, Սահակը հենվեց հովվի պես յուր փայտի վրա և յերգեց «Առավոտ լուսո»—կիսամանկական-կիսապատանեկական դուրեկան ձայնով։

— Շո՛ւր տուր շիքաստի, — պատվիրեց Մկիչը շուտով։

Սահակը յեղանակը փոխեց։

— Հը. դրա՞ն ինչ կասես։ Ը՛ըը, յես քո սովորաբար գլուխող կնողեմ։ Լավ յերգելը փող աշխատելուց հազար անգամ լավ ե։ Դե՛հ, ձե՛ռ տուր Սահակին, թե չե՝ փայտը գլխիդ հասցը իա, ինձի քիթը ծուռ Մկիչ կասեն։ Լա՛վ ընկեր յեղիբ, լա՛վ ընկեր. ինչի՞ս ե հարկավոր փոզդ։ Սահակը տկլո՞ր ե. ի՞նչ անենք, հայրը ջրկիր մարդ ե, փող չունի քո հոր պես։ Բայց ընկերոջ համար կյանքը չի խնայի։ Աղա, հուռուա՞..., Մոլլա-Ղանին յեկա՞վ...

Նա, փայտը բարձրացնելով, վաղեց բլրից ցած։ Խումբը հետեւեց նրան։

### VIII •

Մի գլուխ շաքարը, մի ֆունտ թեյը և կես դյուժին կոլենկորի թաշկինակներն անոգուտ

Հանցան Բաղդասարի համար։ Մարտին Բաղդանիչը Վարդանին տեղափոխեց բաժանմունք առանց քննության։

Հաջորդ սեզոնին Բաղդասարը, թեև անթիվ հայՀոյանքներով, կրկնեց յուր տուրքը նոր տարի որը, և Հաջորդ տարվա քննություններին Վարդանը հոչակվեց վո՛չ միայն առաջադեմ, այլև որինակելի աշակերտ։ Այն որը, յերբ Վարդանին հայտնի յեղալ այս, յերջանիկ եր նրա համարը։ Ուսումնարանից նա ուղղակի վագեց խանութ՝ ուրախ լուրը նախ և առաջ հորը հաղորդելու։ Բաղդասարը մի թեթև ապտակ տվեց նրան. այս եր նրա ամենաջերմ հայրական փաղաքշանքը։

— Ի՞նչ ես բաշխելու յինձ, — հարցրեց Վարդանը, վոր յերբեք վոչ մի հայրական փաղաքշանք առանց եյական կաշառքի չեր ընդունում։

— Իրիկունը կիմանաս։

Կեսորից մինչև յերեկո—ահա հավիտենականություն մեր հերոսի համար այդ որը։ Կերջապես, Բաղդասարը տուն վերադարձավ, թեյ խմեց և կնոջն ու վորդուն կանչեց յուր մոտ։ Հանեց գրպանից մի կաշվե փողաման և, տալով Վարդանին, ասաց։

— Ա՛յ ինչ եմ բաշխում քեզ։

Ի՞նչ հիասթափումն—միայն այսքա՞նը, մի փողամա՞ն։ Վարդանը քիչ մնաց արտասվեր բարկությունից։

— Զե՞ս հավանում։ Բաց արա, տեսնենք։ Այն, ինչ վոր Վարդանը տեսավ փողամանի մեջ, կարող եր նրան խելքից հանել— մի հատ նոր հարյուրանոց թղթադրամ։

— Ի՞մս ե այս, — գոչեց նա խելագարի պես։

— Քո՞նն ե։ Հիմա դախըլըդ բեր, տեսնենք նա ինչ ե ասում։

Այս անգամ տուփի մեջ հայտնվեց ութառն ոռութիւնի։

— Այս ել քոնն ե, — ասաց Բաղդասարը, — գումարն ե հարյուր ութսուն ոռութիւնի։

Ա՛յս մի այնպիսի խոշոր դրամագլուխ եր, վոր հազիվ թե Զելզիլ քաղաքում Վարդանին հասակակից մի ուրիշ մանուկ ունենար։ Հասկանալի յե, ուրեմն, ինչու նա վեց անգամ թռչուտեց վեր և մի այնքան անգամ եղ վագեց անկյունից անկյուն, վոստոստալով ու ծափ տալով։

— Այդ փողերով պիտի Մարիամին պսակենք, — ասաց Բաղդասարը։

Վարդանը քարացավ տեղն ու տեղը, կրծքի խորքից մի սուր ճիչ արձակելով։ Արդարե, Մարիամին արդեն նշանել եյին և մի ամսից Հետո պիտի ամուսնացնեյին մի յերիտասարդ վաճառականի հետ։

— Հա՛, վո՛րդի, Մարիամի համար պատրաստություն տես, — մեջ մտավ Գյուլյութը, — թող ուրիշները զարմանան, վոր դու յես

քո փողերով պսակում քրոջդ: Ամենքը քեզ կդու-  
վեն:

Յեթե Վարդանը լոեց հոր առջև, այս չեր  
նշանակում, թե պիտի լուռ ընդուներ մոր հար-  
վածը: Նա կատաղած գոչեց.

— Հազար քույր ել շան պես սատկի, յես  
մի կոպեկ չեմ ծախսի:

— Վո՛րդի, վախեցի՛ր աստծուց, այդ  
ի՞նչ ես ասում, — գոչեց Գյուլյումը, սարսա-  
փելով վորդու անսրտությունից:

— Հա՛, թող Մարիամը շան պես սատկի,  
փողերս ինձ տվեք:

Բաղդասարը հոգու խորքում անշափ հա-  
վանեց վորդու այս տրամադրությունը: Մի  
մանդուկ, վորայդքան պինդ ե կպչում փողին,  
իսկի քաղցած չի մնա, փողը նրա մոտ ե վա-  
զում, ով սիրում ե նրան ու տչքի լուսի պես  
պահպանում:

— Մի՛ վախենար, — շտապեց նա հան-  
գըստացնել Վարդանին, — յես հանաք եյի ա-  
նում: Վո՛չ վոք փողերիդ ձեռ չի տա: Այդ փո-  
ղերով այս տարի քեզ համար պիտի մի հակ  
ապրանք բերել տամ Մակարիայից:

Մարիամի հարսանիքին Վարդանը վո՛չ  
միայն կոպեկ անգամ չծախսեց, այլև հնարա-  
գետ գտնվեց ինքը վաստակելու: Յերբ խնա-  
միները յեկան հարթին տանելու, պարեց նրանց  
առջև: Հանդիսականները դրամական պար-  
դիներ տվեցին նրան, վոմանք թղթադրամը

թքով նրա ճակատին կպցնելով: Այս նվերնե-  
րը, ըստ տեղական սովորության, պարից հե-  
տո պիտի տար սազանդարներին, իսկ նա հան-  
գիստ խղճով դրեց յուր գրականը:

Եերկու ամիս անցած՝ մեռավ նրա տա-  
րը — Գյուլյումի մայրը: Հնարագետ Վար-  
դանն այս տխուր դեպքից անգամ շահվելու  
միջոց գտավ: Այսպես, որինակ, թաղման որը  
Գյուլյումն ամուսնուց թագուն տվեց նրան  
յերկու ոռուրի և պատվիրեց մի մասով յեկե-  
ղեցում մոմ վառել, մյուս մասը բաժանել մու-  
րացկաններին հանգուցյալի հիշատակին:  
Վարդանը վո՛չ այս արա՛վ, վո՛չ այն. յերկու  
ոռուրին ցցեց յուր տուփի մեջ ու փոխարենն  
ինքն աղթոք արավ տատի հոգու փրկության  
համար:

Որից որ ավելացնելով յուր դրամագլու-  
խը, Վարդանն որից որ դառնում եր համար-  
ձակ, ինքնավտահ փող վաստակելում: Նրա  
փոքրիկ զգուխը շարունակ խորհում եր միայն  
և միմիայն յեկամտի նոր աղբյուրներ գտնելու  
մասին և միշտ գտնում եր: Միևնույն ժամա-  
նակ, նա յերբեք ձեռք բերածով գոհ չեր և միշտ  
ձգտում եր դեպի ավելին: Այժմ նա ուներ մի  
հակ սեփական ապրանք, հաշվում եր, հաշվում  
ե, վորքան վաճառումն աջող եր յերեակա-  
յում, դարձյալ գոհ չեր մնում շահից: Հե-  
տրդհետե նույն իսկ հոր առևտուրն ու ամբողջ

կարողությունն սկսեցին թվալ աննշան։ Յերբեմն զնում եր Արքահամ աղայի մաղագիան և այնտեղ աշկարա տեսնում վորքան յուր հայրը հետ ե մնացել։ Մինչ Բաղդասարը չիթուկտորը վաճառում ե կտորներով, Արքահամ աղան հակերով ե վաճառում։

— Հա՛յրիկ, աշխարհի յերեսին ամենից մեծ վաճառականը ո՞վ ե, — հարցրեց նա մի որ։

— Մարոզովը։

— Ել նրանից հարուստ մարդ չկա՞։

— Կա։

— Ո՞վ ե։

— Մի ջհուդ։ Նա այնքան հարուստ ե, վոր թաղավորներին ել ե պարտք տալիս . . .

— Բաա՛։ Քանի՞ ջվալ վոսկի ունի։

— Ի՞նչ ջվալ, ի՞նչ խուրջին. նրա հարսությունը ծով ե։

— Հա՛յրիկ, ի՞նչ ե այդ ջհուդի անունը։

— Ուռշիդ։

— Վարդանը լուց և ընկավ մտածության մեջ։ Տասը բոսք անցած, սթափվեց։

— Հա՛յրիկ. Ուռշիդն ի՞նչպես ե այդքան փող աշխատել։

— Խարթութով ու թթուխմորի ջրով։

— Բաա՛։

— Ուռշիդի պապը Նապոլեոն թաղավորի միկիտանչին ե յեղել։ Կովի թունդ ժամանակ

ո՞վ ե մաիկ անողը. նա սալզաթներին գինու տեղ տվել է խարթութով ներկած ջուր, արաղի տեղ ել տվել ե թթուխմորի ջուր։ Մարդը խելք ե ունեցել, համ փող ե աշխատել, հա՛մ ել աւղաթներին հարբեցողությունից պահպանել, վոր լավ կովեն։

— Վո՞րտեղ ե ապրում Ուռշիդը, հա՛յրիկ։

— Ֆուանդստանում։

— Մարդ իմանա, նրա կերածն ինչ ե։

— Կերակո՞ւրը։ Տապակած գորտ։

— Գո՞րտ, — գոչեց Վարդանը, յուր ականջներին չհավատալով, — յե՛ղկ։

— Ֆուանդստանում բոլոր մեծամեծնեցը տապակած գորտ են ուտում։ Դրա համար ել այնտեղ գորտը ծախվում ե հատը տասը վոսկով։

— Տասը վոսկո՞վ, ի՞Փ, ի՞Փ . . .

Վարդանը զարձյալ մտածության մեջ ընկավ։

— Հա՛յրիկ, — սթափվեց նա հանկարծ, — այստեղից ֆուանդստան քանի՞ որվա ճանապարհ ե։

— Ո՞վ գիտե. քառասուն, յոթանասուն կամ հարյուր հիսուն որվա։ Ինչո՞ւ յես հարցնում։

— Ուզում եմ իմանալ. կարելի՞ յե այստեղից այնտեղ ապրանք տանել։

— Ի՞նչ ապրանք։

— Գորտ :

— Փի՛ե...

— Մեր լճերում ու գետերում այնքան զորտ կա, վոր ինչքան ուզում ես— հավաքի՞ր : Կարելի յէ մի քանի բեռ ուղարկով տանել ֆուանգստան ծախելու :

— Ճանապարհին կհօտի :

— Յես ել հենց դրանից եմ վախենում : Բայց կարելի յէ մեծ մեծ տակտոներ շինել ու չըի մեջ տանել :

— Թո՛ղ, աստված ուրեմ, զարդմաղալի մեջ կզցես մեզ...

## IX

Այդ որից «Ուռշիդի» հարստությունը Վարդանին հանգստություն չեր տալիս : Հոր պատմած առասպելներին ավելացնելով մի շարք ուրիշները, սկսեց պատմել զասրնկերներին իրր իրականություն : Մի անգամ Ուռշիդի աղամանդյա հագուստները և վոսկեպատ պաշտաները նկարագրելիս, պատահարար ներկա յեր յերկրորդ դասատան աշակերտ Դանիել Դալրաշյանը— Արքահամ աղայի վորդին, լայն յերեսով, մեծ բերանով և հաստ քթով մի տգեղ եյակ, սակայն բարեսիրտ և զվարձաւեր պատանի :

— Ա՛ղա, Վա՛րդան, — նկատեց նու ծիծաղելով, Ուռշիդ չե այդ մարդու անունը, Բողջիւթ :

Մի ուրիշ անգամ՝ յերբ Վարդանը դարձրալ խոսում եր յուր իդեալի մասին, Մկիչը հարցրեց :

— Քո Ուռշիդն ե մեծ մարդ, թե՞ պկովնիկը :

— Իհարկե, Ուռշիդը :

— Քի՛չ, քի՛չ : Պկովնիկը, վոր սալդաթներին հրամայի Ուռշիդիդ թափան-թրիքը կթափեն :

— Ուռշիդից ել, պկովնիկից ել մեծը յեկիսպակոսն ե, — մեջ մտավ Մինասը :

— Ոհո՛, դո՛ւ յել բան ասացիր, — ծիծաղեց Վարդանը, — յեկիսպակոսի Փերաջեյի կտորը մենք յերեք ուուրլով ենք ծախում : Նա ինչ մեծ ե :

— Ե՛յ, յերիսկարոսի մասին այդպես մի խոսիր, Մարտին Բաղդանիչին կասեմ, — մեջ մտավ Մարտիրոսը, վոր տակավին զերազանելու վոչ մի իդեալ չուներ, բացի քությունից :

Վեճը զուցե սուր կերպարանք ստանար և հարկագրելը Մկիչին բունցքի միջոցով բոլորին համոզել՝ թե պոկովնիկից ավելի մեծ մարդ չկա աշխարհում, յեթե նրանց ուշադրությունը չըրացեր մի հանգամանք : Գանգարահեր Լեռնը մի ինքնահնար յերաժշտական գործիքի վրա նվազեց մի անուշ յեղանակ : Այդ գործիքն ուրիշ վոչինչ եր, յեթե վոչ դղումի չորացրած կեղեւ, վորի վրեն կապել եր ձիու

մազեր լարերի ձեռվ։ Նա նվագում եր այնքան արվեստորեն, վոր ընկերները կարծեցին սապ և նվագում։ Բոլորը շրջապատեցին նրան։ Մկիչը իսկույն գրպանից հանեց մի փայտյա սանր, վորի բերանին փաթաթեց մի կտոր թուղթ և սկսեց, շրթունքների մեջ սահեցնելով, նվագել նույն յեղանակը։ Հետո հրամայեց Լեռնին նվագել պարերգ և ինքը մեջտեղ ընկավ պարելու։ Մեկը ներդաշնակորեն ձեռներով դարկում եր նստարանին, մյուսները ծափ ելին տալիս։ Շուտով պարը փոխվեց կատաղի վոստումների։ Մկիչը բարձրացրեց անասելի աղմուկ, դղրդոց ու փոշի։

Հանդիսի ամենատաք միջոցին ներս մտավ կարմիր միրուքով, կոկորդն ու գլուխը սափրած մի թուրք։ Դա թուրքերեն լեզվի դաստուու Մոլլա-նուուլլան եր, մի ուսուցիչ, վորի դասերը գրեթե վոչ վոք չեր այցելում և վորն աշակերտների անվերջ կատակների առարկան եր։

— Ե՛վալլա, Ե՛վալլա, — մըթմըթաց մոլլան, ձեռները կողքերին դնելով, — դա ումի՞ հարսանիքն ե, փա՛հ փա՛հ, մաշալլա՛, մաշալլա՛...

Սակայն Մկիչը շարունակում եր վոստոստալ։ Մոլլայի աչքերը բարկությունից կայծեր էին արձակում։ Այդ փոքրիկները բնավ նրանից չեն վախենում։

— Այ յես քո հոր... գոչեց նա և վազեց Մկիչին բռնելու։

Մկիչը մի վոստումով փախավ, ազատվեց։ Նրան հետևեցին մյուսները։ Գիրության պատճառով մոլլայի ձեռքն ընկավ մի մալական աշակերտ, և մոլլան սկսեց վրեժը նրանից առնել։ Մյուս աշակերտները դռների արանքից և լուսամուտներից դեմքերի ծամածություններով ավելի կատաղեցրին նրան։ Բռնելով մի ձեռով աշակերտի ձեռները, մյուսով անխնա հարվածում եր թշվափ ուսերին ու գլխին։

— Տղեք, յեկեք Միտուշլային աղատենք, — գոչեց Մկիչն ու մենակ ներս վազեց։

Կամացուկ մոտենալով մոլլայի յետեից, բռնեց նրա չուխայի փեշը և բոլոր ուժով քաշեց։ Մոլլան, հետ ու հետ գնալով, ընկավ մեջքի վրա։ Ընկավ նաև Մկիչը։ Մալական աշակերտն ազատվեց, բայց Մկիչի գրությունը վտանգավոր եր, վորովհետեւ պատկառելի դաստուն այսպիս եր կատաղել, վոր ընդունակ եր նրան խեղդելու։ Նա վաղուց վոխ ուներ Մկիչի դեմ։ Բռնեց նրա ականջներից և քաշը, ծնկերով խիելով փորին ու կրկնելով։

— Ա՛ յես քո հոր... ա՛յ յես քո պապի... Բարեբախտաբար, նույն բոսկեյին ներս մտավ տեսուչը, աղմուկից գրավված։ Տեսարանը նրա համար սովորական եր. գրեթե ամեն որ մոլլան աշակերտների հետ այդ տեսակ ընդհարումներ եր ունենում և դրա համար արքու-

Նական դանձարանից ստանում տարեկան յերեք  
հարյուր ռուբլի:

— Մո՛լլա, ուշքի՛ յեկեք, մո՛լլա, չե՛րիք  
և, — գոչեց տեսուչը և հաղիվ կարողացավ Մկի-  
շին ազատել:

Բայց թողնելով գոհին, մոլլան մի քանի  
վայրկյան շունչը հետ բերեց: Նա գլխաբաց ու  
վոտարաց եր. գդակն ընկել եր մի կողմ, ա-  
րտիսչնը մի ուրիշ կողմ, քոշերը մի այլ տեղ:

— Մյարթին Բաղդանը, վա՛լլահ, բի՛լ-  
րոհ, — ասաց նա կրծքին զարկելով, — զօ՛ւր եք  
մեր քաղաքում շկոլա բաց արել: Այստեղ բոլո-  
րը եշեր են, եշերի զավակներ են. ի՞նչ ուսում,  
ի՞նչ դավթար, նրանց ախոռ և հարկավոր:

Նա վերցրեց գդակը և սկսեց թափ տալ ու-  
ղիղ տեսչի քթի տակ: Աշակերտները մեկ մեկ  
վերադարձան դասարան, խաղաղությունը վե-  
րականգնվեց:

Տեղը նստելիս՝ Վարդանը սեղանի տակ  
նշմարեց ինչ-վոր փայլուն իր: Վերցրեց, գրեց  
դրաբանը:

Մի ժամ հետո Միտուշկան վալիս եր, թե  
ծեծվելու պահին յուր քամարից պոկվել ու կո-  
րել և մի արծաթյա կոճակ (այն ժամանակ մա-  
րականներն ել արծաթե քամար եյին կապում):  
Բոլոր աշակերտները յերդվեցին, թե կոճակ չեն  
տեսել:

Յերդվեց և Վարդանը:

## X

Հաջորդ տարի ամառվա վերջերին Բաղդա-  
սարը հանկարծ ընկավ տարորինակ մելամաղ-  
ձության մեջ: Ասենք, առանց այն ել մի շատ  
դժարձալի մարդ չեր, իսկ այժմ միանգամայն  
անտանելի դարձավ: Յերեկոները տուն վերա-  
դառնալով, դարպասից մտած չմտած՝ կանչում  
եր լեզզի Ոսմանին և կոչշ ու կոպիտ հանդիմա-  
նում նրան առանց առիթի կամ ինքը հորինելով  
վորեե սուիթ:

Մտնելով սենյակ, նա հարձակվում եր կնոջ  
վրա, դարձյալ յերեակայական զանցառու-  
թյունների պատճառով: Հայհոյում եր նրան  
այնպես, վորպես յերեք չեր հայհոյել, յեր-  
շեմն մերձենալով նրա յոթերորդ աստիճանի  
ազգականների պատվին կամ քամուն տալով  
նրա նախահայրերի վոսկորների փոշին: Այսու-  
հետեւ՝ անսովոր շտապով, շրթունքներն ու  
մատներն այրելով, պնակից խմում եր մի քա-  
ժակ թեյ և իսկույն առանձնանում: Չորս սեն-  
յակներից մեկում, մի հատիկ մոմի աղոտ լույ-  
սի ներքո, համարակալի վրա ինչ-վոր հաշիվ-  
ներ եր անում, մտածում, փնթինթում, հառա-  
չում, ձեռով ճակատը տրորում, ատամներով  
րեղերը կրծոտում: Յերբեմն՝ հանկարծ վոտքի  
յեր կանգնում ու արագ-արագ խոշոր քայլերով  
անցուղարձ անում, գրգռված վողբերգակի  
պես, ձեռներով ողի մեջ ամենատարորինակ

շարժումներ անելով։ Այդ բովեներին նրա բերանից դուրս եյին թռչում այնպիսի ինքնատիով հիշոցներ, վորոնց նմանը հազիվ թե Զիլզիլ քաղաքի բնակիչները լսած լինելով իրանց կյանքում։ Թե ումներ այդպես մկրտում և ինչու—միայն ինքը գիտեր։ Նրա շանթակիր հայցքն անցնում եր մի պատից մյուսը, բարձրանում եր առաստաղը, իջնում եր հատակը կարծես, ամենուրեք վորոնելով դառն մտածումների ու կատաղության շարժառիթ անձին, վորը, սակայն, աներեւույթ դդակ եր հագել։

Գյուլյումը մտածում եր մտածում—ամուսնու փոփոխության պատճառը չեր գտնում։ Նա հարցնում եր Վարդանին, բայց պատանին ել վոչինչ չգիտեր։ Մի որ նա փորձեց հարցնել Բաղդասարին, սակայն, բերանը բաց արած չբաց արած, փոշմանեց։ Բաղդասարը, վոտները հատակին զարկելով, ստիպեց նրան լռել։ Այն ժամանակ Գյուլյումը գնաց յուր աղջկա մոտ և խնդրեց, վոր սա յուր ամուսնու միջոցով Բաղդասարի գործերի մասին վորեւե տեղեկություն իմանա։ Բայց այստեղից ել Գյուլյումը մի վորոշ բան չիմացավ։ Այն ինչ՝ Բաղդասարը քանի գնում այնքան անտանելի յեր գառնում։ Այժմ նրա հետ վոչ մի բանի մասին խոսել չեր կարելի։ Նա կատաղում եր նույնիսկ այն ժամանակ, յերբ կինն առավոտները հարցնում եր թե ինչ կերակուր պատրաստի ճաշի համար։ Բանն այնտեղ հասավ, վոր խեղճ կնոջ ամուր

քայլվածքը, հառաջանքը և շշնջյունն անգամ նրան գրգռում եյին։

Մի յերեկո Բաղդասարը նոր եր վերադարձել խանութից, յերբ շտապով ներս մտավ Աբրահամ աղան։ Այդ մարդը յերբեք առանց վորեւե զուրջ պատճառի չեր գալիս նրա մոտ։ Իսկ այս անգամ նա, վորքան նկատեց Գյուլյումը, հուզված եր։ Նա իսկույն Բաղդասարի հետ անցավ մյուս սենյակը և դռները յետևեց։ Պարզ եր, վոր այցելության նպատակն արտաքուրդի յեր։

Գյուլյումը չհամարձակվեց զոների յետևեց ականջ զնել, բայց Վարդանը չկարողացավ զապել յուր հետաքրքրությունը։ Այս տասներեք տարեկան պատանու գլուխն անհամեմտավելի յեր զրադված հոր գործերով, քան կարելի յեր յերեւակայել։

Սկզբում Բաղդասարն ու Աբրահամ՝ աղան խոսում եյին հանգարտ, այնպիս վոր Վարդանը հույսը կտրեց մի բան լսելու։ Բայց շուտով նրանց ձայները բարձրացան։ Այն ժամանակի փոքրիկ լրտեսոր լսեց հետևյալը.

— Յես քեզ ասում եմ՝ մանեթին յերկու արասին զավ փող ե, ստացիր ու ձայնդ քաշիր, — համոզում եր Աբրահամ աղան։

— Մանեթին չորս արասի, իմացա՞ր. մի կոպեկ ել պակաս չեմ վերցնի։

— Այ մարդ, չունիմ, չունիմ, չունիմ, լսո՞ւմ ես, թէ չե։

— Ունիսու ու շատ ել լա՛վ ունիս։  
 — Դե լավ, իննը շահի ստացիր; Ա՛ստված,  
 յերկինք, ավելի տալ չեմ կարող։  
 — Մանեթին չորս արասի, չորս արասի,  
 հասկանո՞ւմ ես։  
 — Լավ, վոր իսկի մի կոպեկ ել չտամ, ի՞նչ  
 ալիտի անես, — գոչեց Արբահամ աղան այնպիսի  
 դիվային ձայնով, վոր նույնիսկ Վարդանի  
 մարմնով սարսուռ անցով։  
 — Ինչ կանե՞մ, — կրկնեց Բաղդասարը  
 խուլ ձայնով, — ա՛յ, այս մատերովս առաջ քեզ  
 կիսեղեմ, հետո ինձ . . .  
 — Դեհ խեղդիր, պրծիր ելի. մի կոպեկ ել  
 չեմ տալու։  
 Քանի մի վայրկյան տիրեց լուսթյուն։  
 Վարդանին թվաց, վոր, իրավ, հայրը հարձակ-  
 մեց Արբահամ աղայի վրա և խեղդում է նրան։  
 Նա գողաց ամբողջ մարմնով։  
 — Արբահամ, — լսվեց, վերջապես, Բաղ-  
 դասարի ձայնը, — տունս մի՛ քանդիր։  
 — Իմ տունը վոր քանդվում ե, թող քոնն  
 ել քանդվի։  
 — Բաս վոր այդպես ե, քեզ բանոտ նստեց-  
 նելը մեղք չե։  
 — Նստեցրու, ձա՛րս ինչ, կնստեմ։  
 — Արբահամ, մի՛ արա այդ բանը, վերև  
 ստոված կա, կրակ կթափի գլխիդ . . .  
 — Յես վոչ տուածինն եմ, վոչ վերջինը, ինձ  
 նմանները շատ կան։

— Զկան, աստված վկա, չկան. սկսողը դու-  
 յես։  
 — Մի՛ յերկարացնի, ուզո՞ւմ ես մանեթին  
 իննը շահի։  
 — Չե՛, չե՛ ու չե՛։  
 — Մնաս բա՛րով,  
 — Արբահամ։  
 — Հետո գլխիդ կթակես ու վայ կկան-  
 չես . . .  
 — Արբահամ։  
 — Չե՛մ կարող, չե՛մ կարող, չե՛մ կարող։  
 — Դե գո՛ւրս, գո՛ւրս, անամոթ, աներես,  
 աննամուս, շան կաթ կերած, գո՛ւրս, քո հոր  
 վոսկորները . . . քո պապի միրուքը . . . քո բեղե-  
 րը, փափաղը, գո՛ւրս, քո յոթը պորտի գե-  
 րեղմանը . . .  
 Վարդանը մի վոստումով արգեն հեռացել  
 եր գոներից և կուչ յեկել սենյակի մի անկյու-  
 նում։  
 Դոները բացվեցին, Արբահամը դուրս  
 յեկավ։ Յեթե սենյակը լավ լուսավորված, լի-  
 ներ, Վարդանը կտեսներ, վոր յուր պատվելի՛ր  
 կնքահոր դեմքի վրա գույն ասված բանը չկա,  
 վոր նրա քթի պնչերը դողում են, իսկ աչքերն  
 արտահայտում սոսկալի վճիռ։  
 Դժբախտ յերեկո, ավելի դժբախտ գիշեր,  
 վոր Վարդանն անցկացրեց անքուն։ Նա շարու-  
 նակ արորվում եր անկողնում, հառաչում, ա-  
 կանջ զնում հոր սենյակի կողմը, ուսկից, սա-

կայն, ձայն չեր լսվում: Նա շա՛տ բան եր հաս-  
կացել Աբրահամ աղայի ասածներից: Պակասը  
լրացրել եր մայրը: Նրա հայրը կորցնում ե յուր  
ամբողջ զուտ գրամագլուխը, նա ինքը գրկվում  
ե սեփական փողերից և հավասարվում աղքատ  
ընկերներին: Այն ինչ, դեռ յերեկ իրան համա-  
րում եր հարուստ: Վորքա՞ն պիտի ծիծաղեն ու  
ծաղրեն ընկերները և ի՞նչպես պիտի ուրախու-  
նա այդ քոսոտ Մարտիրոսը:

Կուսադեմին միայն նա կարողացավ քնել:  
Բանալով աչքերը, նա յուր անկողնի մոտ տե-  
սավ հորը:

— Աբրահամ աղան մեր փողերը կտա՞—,  
յեղավ նրա առաջին խոսքը:

Բաղդասարը գունատ եր, աչքերի կոպերն  
ուռել ելին անքնությունից, դեմքն արտահայ-  
տում եր դառն տանջանք, կրծող վիշտ: Նա  
տարորինակ Հայացքով նայեց վորդու յերեսին  
և տարորինակ յեղանակով արտասանեց.

— Գա՛յլ յեղիր, գա՛յլ, վոր քեզ չուտեն:)  
Հետո բազմեց մինդարի վրա և, վոտները  
ձգելով, ավելացրեց.

— Աբրահամը վո՛չ աստված ունի, վո՛չ  
հավատ, վո՛չ որենիք, վո՛չ ամոթ, վո՛չ նամուռ:  
Նա չո՛ւն ե: Յեղայրը յեղրորն այնքան չեր  
հավատում, ինչքան յես եյի հավատում նրան:

Նա լոեց, գլուխը թեքեց կրծքին և շարու-  
նակեց, կարծես, ինքը յուր հետ իսուելով.

— Վեց հազար հինգ հարյուր մանեթի տեղ

յերկու հազար ութ հարյուր մանեթ: Ինչո՞ւ,  
ի՞նչ որենքով...

— Իմ փողե՞րն ել են կորչում, — հարցրեց  
Վարդանը:

— Քոնն ել, իմն ել, բոլոր ունեցած-չունե-  
ցածս: Աստված խելքս առավ, պրծավ: Յեթե  
չոր տափին չմնամ՝ մեծ բան ե. նա ինձ մանե-  
թին յերկու արասի յել չի տա, դիտեմ, չի  
տա...

Հանկարծ նա փոխվեց. խեղճությունը տե-  
ղի տվեց կատաղության: Գդակը վերցրեց գրւ-  
խից և, զարկելով հատակին, դուաց.

— Վա՛րդան, կո՛խ տուր գդակս, կո՛խ  
տուր: Յես մարդ չեմ վոր չեմ կարողանում այդ-  
անառակին խեղդել, շանսատակ անել...

Փոքր ինչ անցած, նա բավական հանդստա-  
ցավ և գնաց շուկա և վերագարձավ միայն ի-  
րիկնաղեմին: Աբրահամ աղան, այրված, խո-  
ցոտված նրա յերեկվա վիրավորանքից, մեր-  
ժել եր ոուբլուն քառասուն կոպեկն ել տայու:  
Նա վոչինչ չեր տալիս այժմ:

— Վա՛րդան, — գարձավ հայրը վոր-  
դուն, — Վա՛րդան, ականջ դիր ինձ: Աստծուն  
ե հայտնի, կտանեմ այս ցավը թե չե, բայց  
ոդու, յեթե իմ վորդին ես, պիտի մտքումդ լավ  
պահես յերեկվա լսածներզ: Աշխարհում վո՛չ  
վոքի չհավատաս, վո՛չ վոքի մի կոպեկ չտան  
առանց գրավի: Կմեծանաս, ունեցած-չունե-  
ցածս կհավաքես, քեզ համար գործ կսկսես:

Դու պիտի հարստանաս։ Գիտե՞ս ինչու. վոր վրեժ հանես այդ Արքահամի վորդիներից։ Թող նա ուտի փողերու, բայց թող նրա վորդիները չոր տափին մնան։ Լոռ՝ մ ես, դու պիտի նրանց թողնես չոր տափի վրա, մի կտոր հացի կարոտ, վոր գոնե զուռը ման գան, վորդորմություն հավաքեն, և դու, փողոցներում նրանց տեսնելիս, թքես յերեսներին. . . Լոռ՝ մ ես, դու պիտի կատարես հորդ ավանդը, յեթե չկատարես, իմացիր, վոսկորներու գերեզմանից կանիծեն քեզ։

Գյուլյումը ցնցվեց սարսափից։ Ամուսնու խոսքերի մեջ նա մութ կերպով նախատեսում եր վորդու ապագա ճակատագիրը, և նրա մեզմ, ներոզասեր հոգին բողոքում եր հայրական այդ անողոք ավանդի գեմ։ Այդ ավանդ չեր, այլ անսիրոտ բռնակալի դրած ծանր լուծ, զառն անեծք։ Նա նայեց վորդու յերեսին, վոր իմանա՝ ինչ տպավորություն են գործում նրա վրա հոր խոսքերը։ Տասնույթեք տարեկան պատանու գեմքը չեր կրում յուր հասակի անմեղության և վոչ մի նշույլն այդ պահին։ Նա լուռ, ուշադիր լսում եր, աչքերը հառած հոր բերանին։ Յեվ վո՛չ միայն լսում, այն յուրաքանչյուր բառն ամուր դրոշմում յուր հիշողության մեջ։

Փոքրիկ գլուխը ծնվելու որից այնպես չեր գործել, վորպես այժմ։ Նա ապագայի համար զարքնում եր վրիժառության սոսկալի մեքե-

նա։ Նրա սիրտը լցվել եր թունավոր կիրքով։ Հոր խոսքերը միայն սաստկացրին արդեն վառված կրակը. . . Նա չոքեց հոր առջև, բըռնեց նրա ձեռը, համբուրեց ու դրեց ճակատին։ Յեվ այս վորդիսկան հավատարմության միտքը բառերով այս եր. . .

Յես կիատարեմ քո ավանդը. . .

## XI

Սափրիչ Պողոսի խանութը գտնվում եր Զիլզիլ քաղաքի կենտրոնում, մի կիսախարեխուց անկյունում։ Այդ մի վոչ-այնքան մեծ աենյակ եր, պատերն անպաստառ, կիսավեր, ոճորքը թանձր մուխից սկացած, հատակի աղյուսները ծածկված ցեխի, մուրի և մուշտարիների մազերի զզվելի շաղախով։ Միակ լուսամտի ապակիները վաղուց եյին փշտովել, և այժմ նրանց փոխարինում եր յուղած թուղթը։ Զախշախված և ծայրեիծայր կարկատված դուռը հիշեցնում եր հետին մուրացկանի ցնցոտին։

Այցելուների համար յերեք պատերի յերկայնությամբ շինված եր միապաղաղ փայտյանստարան, վոր փոխարինում եր սափրատան համար ամբողջ կահկարասին, յեթե չհաշվենք մի հնագարյան բազկաթոռ յերկու փութ ծանրությամբ։ Այս յեռանկյունի կազմող նստարանի վրա թաղի անդործ կամ ծույլ բնակիչները վորը ծալապատիկ նստած, վորը վոտ-

ները ցած գցած, վորը կկզած, վորը, վերջապես, կողքի վրա պառկած, քննում ու քննադատում եյին քաղաքի խոչոր ու մանր դեպքերը ուստա Պողոսի մկրատի չխչսկոցի ներդաշնակությամբ։ Դա մի ինքնատիպ պարլամենտ եր, ուր շատ անդամ չոշափվում եյին բարձր նյութեր— քաղաքական, պատերազմական, ավելի հաճախ՝ կրոնական։ Իսկ յերբ խոսելու նյութը սպառվում եր, պարլամենտի անդամները զվարձանում եյին կատակներով, սրախոսություններով և փոխադարձ ծաղակոծությամբ, մանուկների պես միմյանց վրա ջուր թափելով, իրարու բոթելով ու կմշտելով և հըռ-հըռ բարձրածայն ծիծաղելով։

Որը կիրակի յեր, յեղանակը ցուրտ, խոնավ, անախորժ։ Սափրատան մեջտեղում, հատակի վրա դրած մանղալում միում եր ածուխը փայտի կտորների հետ, ծուխը զարնելով ներկա յեղողների դեմքերին։ Տիրում եր առանձին կենդանություն, բոլորը հուզված եյին։ Լուրը բերել եր ինքը՝ ուստա Պողոսը։ Այդ մի վերին աստիճանի խոչոր հետաքրքրական և, միւնույն ժամանակ, անսպասելի նորություն եր։

Արրահամ աղա Դալբաշյանը սնա՞նկ— քաղաքի առաջին վաճառականը, ամենի նախանձի առարկա՞ն, հարդանքի կենտրո՞նը, հասարակության ամենամեծ սյուներից մե՞-

կը։ Ի՞նչպես, այդ խելոք, և զգույշ մարդը չկարողաց՝ յուր գործերը տանել։ Վո՞չ, վո՞չ, անհավատալի յեւ անշուշտ մեջտեղ մի և կա։ Յեվ այդ և-ի մասին առաջին անգամ կասկած հայտնեց նախկին մանրավաճառ, այժմ անգործ Սաղաթելը, վորին «հարաշի տղա» եյին կոչում։

— Ուստա Պողոս, — դարձավ սափրիչին, խոսքդ թամամցրու, տեսնենք։

Նա խորամանկ եր, զգում եր, վոր ուստա Պողոսն ալելի գիտե, քան ցույց իւ տալիս, միայն չի կամենում բոլորը միանդամից ամել։ Ամբողջ ժողովարանը յուր հայացքը հառեց ուստա Պողոսի բերանին։ Իսկ ուստան, ունկնդիրների հետաքրքրությունն ավելի զրգուելու համար, նախ հազաց, սրբեց աչքերը, վորոնք ծխից արտասվում եյին, ապա հանեց գոտիից քաշ արած տոպրակից բազմաթիվ ածելիներից մեկն ու սկսեց սրել, քսելով մեջքին կապած կաշվե սրոցին։

— Աբրահամ աղան, — արտասանեց նա, վերջապես, կարելույն չափ յուր բութ դեմքին խորհրդագոր լլջություն տալով, — հիմա՝ չի խոմ կոտր։ Վեց ամիս են րա քամակը թույլ ե, միայն թագցնում եյին։

— Եե՛, շատ լավ։ ախար պատճա՞ռը։

— Պատճա՞ռը, հը՞մ, պատճա՞ռը։ Մարդ ելի, մեծ մարդ ե, ամեն մի մեծ մարդ յուր քերն ունի։

— Ի՞նչպես, ի՞նչպես:

— Ե՛հ, բան ե ելի, — պատասխանեց Պողոսը, աչքի տակով խորամանկորեն նայելով Սաղաթելի յերեսին, — ասում են, հիմա կոտր ընկնելն ել մոդա յե: Ղարաբաղի կողմերից և սկսվել: Գոհանամ զքեն, տեր, մարդ կա, վոր մարդկությունը փողից շատ ե սիրում, մարդ եւ կա, վոր աստծու տվածից չնորհակալ չե:

Արտահայտելով այս խորին փիլիսոփայական միտքը, ուստա Պողոսն ածելին դրեց տոպրակի մեջ, հանեց յերկրորդն ու սկսեց ավելի յեռանդով սրել:

— Ուստա՞ Պողոս, խոսքիդ ջովհարն եւ հասկանում, ասաց Սաղաթելը, — մենք ել վաճառական ենք յեղել, քչից-շատից իսելք ունենք: Ասա, տեսնե՞նք:

Նա վերցրեց յերկաթյա խառնիչն ու մանղալի կրակը ցըկեց: Ծուխը մի փոքր մեղմացավ, ուրախ կրակն ամենքին տրամադրեց զվարթ: Եերամապահ Անտոնն ամենից առաջ ըմբռնեց Պողոսի ու Սաղաթելի խոսքերի հետին իմաստը:

— Զինի՞ թե՞, — ասաց նա, դառն թամրաքուի չիրուխը բերանից հանելով և բեղերի ծլլոցը սրբելով, — չինի՞ թե Արքահամ աղանուրիչների կարողությունը տակովն ե անում: — Զը՞րթ, — թքեց նա ատամների արանքով մանղալի մեջ և չիրուխը նորից դրեց բերանը:

Ուստա Պողոսը վոչինչ չպատասխանեց, բայց և չբողոքեց ել չերամապահի համարձակ յենթագրության դեմ: Մյուսները, բացի Սաղաթելից, բողոքեցին, մանավանդ տիրացու նի կոլայը: Մուտ կո՞տը: Արքահամ աղան սուտ կո՞տը:

Չե՞, դա խելքի մոտիկ բան չե: Արքահամ աղան քաղաքի ամենաազնիվ վաճառտկանն ու ամենաազնիվ մարդն ե: Ահա տասներկու տարի յէ յեկեղեցու յերեցիփոխ ե և իննը տարի քաղաքի դեպուտատ, մինչև այսօր ո՞վ ե համարձակվել նրա անունին կեղտ կպցնել:

— Տի՞րացու, — նկատեց չերամապահ Անտոնը, վոր ատելով ատում եր նիկոլային, — ինչպես տեսնում եմ, Արքահամի գցովի չայը շատ ես հավանել: Բայց համը մի տանիր: Զը՞րթ...

— Իհարկե, — ասաց ուստա Պողոսը, — մեղանից ո՞վ չեր խարվի, յեթե տանն ունենար մի չար սատանա: Գիշեր-ցերեկ սատանան կփըսափըսա ականջիդ ու կողքիդ կրզբզի. «արա՛, արա՛» դու յել կանես ելի, ի՞նչ զարմանալուրան կա: — Զի՞շ-չը՛շ, չի՞շ-չը՛շ, — շարունակեց նա սրել ածելին:

Ամառը վորմնագիր, ձմեռն անգործ Հայրապետն իմաստուն յեղանակով նկատեց, թե բարեպաշտ քիստոնյային վոչ մի սատանա չի կարող խարել, յեթե նրա մեջ չարության սերմ չլինի:

— Սատանա ել կը, սատանա ել, — հակա-

ճառեց Սաղաթելը, —ուստա Պողոսը, վոր բերանը բաց արավ, իսկույն իմացա քամին վորաեղից ե փչում: Զը՞րթ...

— Աֆարիմ մարդ, —գովեց նրան Պողոսը, բաս դու Աբրահամի յեղբոր իսրայելին շատ զավ ես ճանաչում: Զի՞շ-չըշ...

Իսրայելի անունն ընդհանուր ատելություն շարժեց: Այդ տակավին յերիտասարդ վաճառականը քաղաքի պահպանողականների աչքում միշտ կասկածելի յեր յուր չափազանց նորամոլությամբ: Նա վո՛չ միայն ոսլայած շապիկ ու ճոճուան կոչիկներ ե հագնում, այլև յուր կնոջն ստիպում ե արխալուզի ու լայն փոխանի տեղ հազնել ինչ-վոր միջից ծակած տոպրակ ու յերեսը բաց փողոց գուրս դալ: Նա ամեն տարի Մոսկվայից վորեն նորություն ե բերում և քաղաքն ապականում: Այս անդամ ել այնտեղից վերադարձավ բեղերը կոտած ու ծնոտի վրա մի կտոր միրուք թողած, ի՞սկ և իսկ անցյալ տարվա Փուանդի պես, բուլվարում մի մեծ վրան եր դրել և տակը չներ եր պարացնում:

— Ա՛յ, տղաս դու յես, հենց այդ շուն պարացնող իսրայելն ե ամեն բան սալքողը, —վըստահացավ, վերջապես, ասել ուստա Պողոսը, թե չե՝ Աբրահամ աղան որինավոր մարդ ե: Զը՞շ-չիշ, չը՞շ-չիշ...

— Բերանդ որհնվի, ա՛ստ պրծիր ելի, —

գոչեց Անտոնը, —Զը՞րթ, ումի՞ փողերն ե տակովն անում:

— Մառազովի: Քիչ ու պակաս՝ յերեսուն հազար մանեթ: Զի՞շ-չըշ, չի՞շ-չըշ...

Ամբողջ ժողովարանը միաձայն արձակեց խորին զարմացման մի վայրենի հնչյուն, այնքա՞ն գումարը մեծ եր նրա համար:

— Ղոչա՛ղ մարդ՝ արտասանեց նախկին մանրավաճառ Սաղաթելն իբր հեղնաբար, բայց հոգու խորքում նախանձելով Աբրահամին:

— Դու ա՛յն ասա: մեր մարդկանցի՞ց ումի տակից ե փալասը քաշում, —Հարցը Անտոնը:

— Միայն մեկի, —պատասխանեց Պողոսը, բայց լավ, որինավոր ե քաշում: Զի՞շ-չըշ, չի՞շ-չըշ...

— Զը՞րթ: Ով լինի՞ այդ մեկը: Զը՞րթ...

— Բաղդասարը:

— Խո՞զը:

— Ամբողջ ժողովարանում չգտնվեց մեկը, վոր այդ մարդուն ցավակցեր: Բաղդասարը մի անոգուտ մարդ ե, ով ե մինչեւ որս նրա տանը մի կտոր հաց կերել: Ումի՞ն ե նա յուր կյանքում մի կոտեկի լավություն արել: Տնից իսանութ ե գնում, իսանութից՝ տուն: Վո՛չ մի տեղ չի յերեսում: Մինչեւ անդամ յեկեղեցի ել չի գնում: Միայն ուրիշներին հայհոյել գիտե: Նա խղճալու մարդ չե, նրան զրկելն իսկի մեղք չե, ափարիմ Աբրահամ աղա...

Ժողովարանը տրամադիր ե Բաղդասարին յերկար պարսավելու, սակայն հանկարծ ներս ժտավ Վարդանը հեալով ու չնչասպառ:

— Ուստա՞ Պողոս, հայրս քեզ կանչում ե:  
— Ի՞նչ ե պատահել, վորդի:  
— Հիվանդացել ե, արյուն պիտի առնես:  
— Բա՛հ, բա՛հ, խե՛ղճ մարդ, — գոչեց ամբողջ ժողովարանը կեղծ ցավակցությամբ:

Պողոսը շտապով կոնստակը դրեց պղնձեթասն ու Վարդանի հետ գուրս գնաց:

— Տի՛րացու Նիկոլայ, — ասաց Անտոնը, — քացախ խմիր, քեզ համար հողեճաշ ե պատրաստվում...

## XII

Ուստա Պողոսը Բաղդասարին գտավ անկողնի մեջ: Պատահել եր հետեւյալը: Մի ժամ առաջ թշվառ մարդը գնում ե Աբրահամ աղայի մոտ վերջնական խոսքն իմանալու և, շատ չանցած, տուն ե վերադառնում գժվածի պես: Վերցնում ե յուր ժանդոտ դաշույնը, ուղում ե գնալ Աբրահամին սպանելու: Գյուլյումը փորձում ե թույլ չտալ նրան գնալու: Բաղդասարը հրում ե նրան ու վազում դեպի գուրս: Դոների մոտ խեղճ մարդու ձեռները թուլանում են, գլուխը թեքում ե կրծքին, դաշույնը ձեռից ընկնում: Նա թավալվում ե հատակի վրա և սկսում ե խրխուալ ընկնավորի պես: Գյուլյումն շտապում ե պատուել նրա արխալողի ոձիքն ու

յերեսին ջուր սրսկել: Վոշինչ չի ոգնում: Մայրու վարդի մի կերպ հիվանդին պառկեցնում են անկողին, և ահա կես ժամ ե պառկած ե մեջքի վրա, անիմաստ աչքերն առաստաղին հառած, չի խոսում, չի շարժվում, չի հառաջում անդամ:

Ուստա Պողոսն անմիջապես սկսեց գործադրել յուր հնարագիտությունը: Նախ և առաջնա, Ոսմանի ոգնությամբ, հիվանդին շուռ տվեց յերեսի վրա և սկսեց մեջքից «արյուն առնել»: (Բամբակը թաթիւելով սպիրտի մեջ, վառեց և, պահելով հիվանդի թիկունքների մեջ տեղում, թեյի բաժակը դլխիվայր դրեց վրեն: Կատարելով այս գործողությունը մի քանի անգամ հիվանդի մեջքի զանազան կողմերում, վորպեսզի արյունը մղվի կաշվի տակ, նա վերցրեց ածելին և սկսեց անիմնա կտրատել ուռուցքները: Հետո հիվանդին շուռ տվեց կողքի վրա և թույլ տվեց, վոր ծծեն Բաղդասարի հիսունուչորս ամյա արյունը: Կես ժամում ազրուկներն այնքան կշտացան, վոր ուռան, կլորացան ու մեկ մեկ պոկվելով, հասուն մրգի պես, գլորվեցին հիվանդի թափամազ կրծքի վրա:

Հիվանդը յուր հայացքը դարձրեց դեպի կինը: Յեվ այդ հայացքն արտահայտեց այնպիսի խորը տանջանք, վոր Գյուլյումի սիրտն սկսեց մորմօքել: Պարզ եր, վոր թշվառն զգում եր յուր վիճակի վտանգավորությունն

ու ավելի տանջվում, վոր անկարող և զգացածն արտահայտելու: Ապագայում պարզվեց, վոր այդ որն Աբրահամ աղան Բաղդասարին ընդունում է շատ կոպիտ. չի յել ուզում հետը խոսել: Բաղդասարն անպատվում է նրան, թքում է յերեսին կնոջ և վորդիների ներկայությամբ. Աբրահամը յուր վորդիներին հրամայում իւղուրս վռնդել նրան, «վզակոթին տալով», իսկ Իսրայելն անամոթաբար ծիծաղում է յերեսին:

Գյուլյումը նայում է ամուսնուն դառը վշտակցությամբ և գլուխն անզոր յերերում: Քսան տարի կենակցել եր այդ մարդու հետ, քսան տարի շարունակ գտնվել եր նրա սորդպատյա բռնակալության տակ, վորպես զնված ստրուկ, ճանաչել եր միայն և միմիայն նրա կամքը, հպատակվել եր միայն և միմիայն նրա յեսին, միշտ խեղդելով յուր մեջ սեփականը: Յել ահա այժմ, յերբ հարկավոր եր փոքր իշտե ինքնուրույնություն, կորցրել եր ինքն իրան և շվարած նայում եր բռնակալի յերեսին, դարձյալ նրանից սպասելով հրամանների: Յերբեք նա բախտավոր չեր յեղել այդ մարդու հետ, բայց և յերբեք չեր յերեակայել, թե կարող ե բախտավոր լինել նրանից զրկվելով: Յերկար տարիների կենակցությամբ ամրացած սովորությունը փոխարինել եր նրա մեջ ամռանական սիրո զգացմանը, և նա, տանջվելով հանդերձ բռնակալի ձեռքում, զգում եր յուր

հոգին ու սիրալ նրա հոգու ու սրտի հետ ձուլած, միացած:

— Ի՞նչ ես ուզում, ա' մարդ ասա՛, — կրկնում եր նա կսկծալի յեղանակով:

Յեկ վո՛չ մի պատասխան: Բոնակալի շըրթունքները կապտել եյին, սեղմվել, փակվել յերկաթե զոնակների պես, և վոչ վոք չգիտեր ինչ և կատարվում նրա ներսում: Նա մտիկ եր անում անշարժ հայացքով կնոջը, վորդուն, և ուրիշ վոչինչ: Յեկ նրա համառ, քարացած հայացքի մեջ կար ինչ-վոր սոսկալի բան, վոր սառցնում եր Գյուլյումի արյունը յերակներում:

Ուստա Պողոսը գործադրեց յուր վերջին միջոցը. Հրամայեց Ոսմանին մորթել մի սև հավ, փորոտիքը թաղել հողում ու մարմինը բերել: Լեզգին խակույն կատարեց հրամանը: Ուստան հավը բաց արավ և միջի կողմով դրեց հիվանդի կրծքին: Սև հավը պիտի դուրս քաշեր անհայտ ցավը յուր խորհրդավոր զորությամբ, վոր պարզեց եր նրան գռեհիկ ժողովրդի սնահավատությունը:

Ներս մտավ Մարիամը յուր ամուսնու ուղեկցությամբ և, գլուխ շալը մի կողմ չպրտելով հարձակվեց հոր վրա: Արդեն զոներին չհասած նա սկսել եր բարձրածայն լալ և կըրծքին զարկել ձեռներով: Մի ծանր, յերկարատեկ զարկել ձեռներով: Այսպէս, ուրեմն, նա մեռնում է: Վող կրծքից: Այսպես, ուրեմն, նա մեռնում է:

Մի՞թե: Մեռնում ե, չկարողանալով մի խոսք անդամ արտասանել:

Նա արտասպազեց, խուլ, ընդհատվող հեծելուանքով:

Մարիամի ամուսինը— Ստեփան Փորսողյանը բողոքեց ուստի Պողոսի գործադրած միջոցների գեմ: Այն որից, յերբ նա դեն եր ձգել ասիական քոշերն ու հազել յելրոպական կոշիկներ, յուրացրել եր կիֆալուսավոր քաղաքացու այն հավակնությունը, վոր ավելի հակալըրելի յե քան լիսկատար գուհկությունը:

— Մարդուն գցել ես, տավարի պես կտըրտել, կարծում ես, գրանով կառողջացնե՞ս: Ժամանակ ե այդ ածելին-մածելին, տղրուկմզբուկը դեն շպրտել: Աչքներդ բաց արեք, խեղճեր, աշխարհ տեսեք: Բժիշկներ են դուրս յեկել, վոր գերեզմանից մեռելին հանում են, վոտքի կանգնեցնում, կյանք տալիս: Գիտություն ե հարկավոր, ուսում ե հարկավոր, թե չե... դալլաք: Հը՛, ի՞չ ես յերեսիս մտիկ անում, ուստա Պողոս, մարդուց յերկու վոչխարի արյուն ես հանել, տնաքանդ, ել նա վոտքի կկանգնի՞... Յես խկույն բժիշկ կրերեմ:

Ամբողջ որը Բաղդասարը մնաց միենույն գրության մեջ, զբեթե միենույն գիրքում-կողքի վրա անշարժ ձգված, ինչպես բնից կըտրված ծառ: Վոչի՞նչ փոփոխություն, վոչ դեպի լավը, վոչ դեպի վատը. նույն սեղմված շըր-

թունքները, նույն արյունալի աչքերը, նույն անսահման տանջանքները գեմքի վրա:

Իրիկնադեմին Ստեփանը ներս մտավ Զիւզիլ քաղաքի միակ բժշկի հետ: Դա մի ծեր և խուլ մարդ եր: Վաղեմի գիտության աղքատիկ պաշարը նրա ալեզարդ գլխում չորացել եր այնչափ, վորչափ արյունը պաղել յերակներում: Հարկավոր յեղավ բավական մեծ ջանք Բաղդասարի հանկարծակի հիվանդությունն ու գործադրված միջոցները նրան բացատրելու համար: Այս մահավանդ զժվար եր Ստեփանի համար, յորը գործ եր ածում այնպիսի բառեր, վորոնց զուր կլիներ վորոնել ոռուսաց բառարանում: Բժիշկը վոչինչ չհասկացավ, ուստի և գեղատում գրեց ու հեռացավ:

Հիվանդի գլխի մի կողմում նստած եր Գյուլյումը, մյուս կողմում Մարիամը, յերկուսն ել ձեռները ծոցներին դրած: Մերթ ընդմերթ Գյուլյումը հառաչում եր և շալի ծայրով արցունքը սրբում: Նա վոչինչ չգիտե անել, բացի հառաչելուց, արտասվելուց, տանջվուց, վորովհետեւ միայն այս բանում նրանից կամքի ուժ չի պահանջվում: Համեմատար, ավելի յեռանդ եր արտահայտում Մարիամը: Փոխում եր հիվանդի կրծքի կոմպրեսը, ամեն ժամ ճշտությամբ դեղը գդալով ածում նրա բերանը: Մերթ ուղղում եր հիվանդի բարձը, մերթ վերմակը, հենց այնպես, տանջվող հորն ոգնելու կիափագից դրդված:

Նա ձգտում եր թշվառի աչքերի մեջ կարդալ  
նրա ցանկությունը, և իզո՞ւր: Միևնույն ժա-  
մանակ, աշխատում եր հանգստացնել մորը-  
վո՛չինչ, կանցնի, տաքարյուն մարդ ե, բար-  
կությունից արյունը գլխին ե խփել, կհան-  
գըստանա ու կառողջանա: Գյուլյումը հուսա-  
հատությամբ շարժում եր գլուխը: Նա չգիտե՞  
Բաղդասարի ցավը. յերեխա՞յե, խելք չունի՞:  
«Մարդը դա՞մլա յե»:

Յերեկոյան, վերջապես, համարձակվե-  
ցին այցելության գալ Գյուլյումի քույրերն  
իրանց ամուսինների հետ, նաև հարևաններից  
վոմանք: Յեկ սրանք իրանց անողուա հարցե-  
րով, կեղծ ու անկեղծ ախուվախերով կրկնա-  
պատկեցին Գյուլյումի տառապանքը: Վոմանք,  
անքաղաքավարություն ունեցան մինչև ան-  
գամ հարցնելու. արդյոք, Բաղդասարը վոր-  
չափ ժառանգություն կթողնի մահից հետո  
վորբի համար: Տեր աստված, Գյուլյումը վո-  
չինչ չգիտե, թողեք լուռ արտասվի ու տանջ-  
վի, նա միայն այս կարող եր անել:

Հարևան կանանցից մեկը պնդում եր՝ թե  
Բաղդասարին սատանաներն են կապկապել,  
հարկավոր ե կանչել մի կախարդ, վոր նրանց  
փախցնի:

Այս խելոք առաջարկությունը շարժեց  
ներկա յեղողների միայն մեկի ծիծաղը: Դա  
Գյուլյումի կրտսեր քրոջ Զառիկի ամուսինն

եր—Դավիթ Դանիելյանը, մի վերին աստիճա-  
նի ջերմեռանդ լութերական:

— Քո՛ւյր Շուշան, —ասաց նա սատանա-  
ների մասին խոսողին, —մե՛ղք ես գործում,  
մեծ մե՛ղք: Մեր ամենքի փրկությունն ու կո-  
րուստը Հիսուսի ձեռքին ե: Աղո՛թք արա,  
քո՛ւյր Գյուլյում, մենք ամենքս միայն աղոթ-  
քով կարող ենք փրկվել: Տե՛ր, ոգնիր մեզ—  
աղոթեց նա ինքը, ձեռները կցելով միմյանց,  
գլուխը ծոելով դեպի ուսը և աչքերը, նորա-  
գարձի ջերմեռանդությամբ, ուղղելով վե՛ր, —  
տե՛ր, ների՛ր Բաղդասար յեղբոր մեղքերը: Ա-  
ղոթք արա մտքումդ, Բաղդասար յեղբայր,  
Յեհովան հայր Աբրահամի հավատը փորձեց,  
ոոհը ըընդունեց... Բա՛ղդասար յեղբայր, Իսա-  
Հակի և Հակովի աստվածը քեզ կողնի, աղոթք  
արա...

Զա՛րմանալի՛ բան: Հիվանդը, վոր մինչե-  
այդ վայրկյան լուռ եր, հանկարծ ցնցվեց, այ-  
լափոխվեց: Նա աչքերը դարձրեց դեպի մոշե-  
ռանդ բողոքականը, նայեց նրա յերեսին ոո՞ւր,  
յերկարատե հայացքով և արտասանեց.

— Զայնդ կտրի՛ր, փարիսեցի...

Վոչ մի ազգականի նա այնքան չեր ատում,  
վորքան Դավիթ Դանիելյանին: Նա միշտ կըրկ-  
նում եր՝ թե մի մարդ, վոր դավաճանել ե պա-  
պերի կրոնին, ընդունակ ե հարազատ յեղբորն  
անգամ փողով ծախելու: Բացի սրանից, նա  
առհասարակ բողոքականությունը համարում

Եր անհավատություն և չեր քաշվում նույնիսկ չուկայում յերես առ յերես հայհոյել կրոնափոխներին:

Հիվանդի լեզվի անսպասելի բացվիլն առաջացրեց իրարանցում: Մարիամն ուրախությունից ճշաց ու վոտքի թռավ: Գյուլյումը հետեւ նրա որինակին: Վարդանը սենյակի անկյունից վագեց, մոտեցավ հոր անկողնին և աչքերը հառեց նրա յերեսին: Հյուրերն ապշած նայեցին միմյանց: Միայն Դավիթ Դանիելյանը չփոթվեց: Նա շարունակ արտասանում եր. «Որհնյալ լինի քո զորությունը, Հիսուս, սիրելի Հիսուս»:

— Դո՛ւրս արեք անհավատին, դո՛ւրս, — դարձյալ արտասանեց հիվանդը, վորի աչքերը նմանվում եյին թեյով լի պնակների:

— Բա՛զգասար, յեղբայր, մե՛ղք ես դործում, — ասաց մոլեռանդ բողոքականը, — ա՛ղոթք ա՛րա, հիշի՛ր Հովք յերանելուն . . . Նրա յերես-մերեսը փթում եր, բերանը վորդներով լեցվել եյին, միսը թափվում եր մարմնի վրայից, բայց նա ելի աղո՛թք եր անում: Տահօֆի՛ր, բայց ա՛ղոթք արա. Հոգիդ դրախտ կգընած Յեհովայի գոգը, ա՛ղոթք արա . . .

Դարձյալ հրա՛չք, հիվանդը զարմանալի արագությամբ գլուխը բարձրացրեց, նստեց: Այժմ նրա այտերը կապտել եյին, կոկորդի յերակները դուրս ցցվել յերկաթի թելերի պես: Նրա լեզվի կապանքը խորտակվեց: Անեծքների

ու հայհոյանքների մի անզսպելի հոսանք դուրս ժայթքեց նրա բերանից: Յեվ ի՛նչ հայհոյանքներ: Ներկելով վոտից մինչև գլուխ ատելի կրոնափոխին, նա դարձավ մյուս հյուրերին, տվեց յուրաքանչյուրին պատշաճավոր ածական, հիշեց նրանց հայրերին, պապերին, չմոռացավ և նրանց աղջականներին: Կանգ առավ մի քանի վայրկյան և հետո յուր ամենակատաղի, ամենաինքնատիպ հիշոցներն ուղղեց Աբրահամ աղայի ընտանիքին ու ամբողջ տոհմին: Նրա գրգռումը հասավ յուր զենիթին, շունչն սպառվեց. կոկորդն սկսեց արձակել ինչ-վոր վայրենի հնչյուններ, բերանը փրփրեց, դեմքը կապուց լեզվակի պես, և նա վորպես գնդակաչար, ընկապ մեջքի վրա:

— Տե՛ր, ների՛ր այս մարդուն, — ասուց Դավիթ Դանիելյանը:

— Ա՛ կնիկ, մարդը մեռնում ե, տե՛րտեր կանչել տուր, — ասացին հարեւան կանայք:

Գդակը վերցնելով, Վարդանը վազեց փողոց:

### XIII

Գիշերը ցուրտ եր ու մթին: Ուրիշ ժամանակ Վարդանը յերբեք այս պահին մենակ չեր դուրս դա տնից. այս անզամ չվախեցավ: Ահա յոթ-ութ ժամ ե նրա հոգին հեծծում ե կատարվող անցքի ծանրության ներքո, սիրտը մորմոքվում:

Այդպես, ուրեմն նրա հայրը մեռնում է, նա մնում է վորբ, անտեր, անպաշտպան: Աբրահամ աղան սուտ բարեկամությամբ մոլորեցրեց ինեղճ մարդուն, առավ փողերն ու կլանեց: Կլանեց նաև Վարդանի փողերը: Ա՛խ, այդ սիրելի, պաշտելի փողերը, վորոնց վրա այնքան հույսեր եր գրել: Ա՛խ, վորպիսի յեռանդով ու սիրով եր նրանց ժողովել, կոպեկկոպեկ, այն որերից, յերբ աչք եր բաց արել, որը խնդրելով ու աղերսելով, վոր ամեն յերեկո մի քանի կոսկեկ գցի նրա տուփը, Ոսմանին գիշեր ցերեկ աշխատեցնելով, վոր գդարներ շինի, ընկերներին խարելով, իրան զրկելով, մուշտարիների առջև հաղար ու մի սուտ յերդումներ ուտելով յուր խսիրները, պարաններն ու կոտրած արկղները ծախելու համար:

Դեռ մի տասն որ առաջ՝ մտքումը տեսակտեսակ ծրագիրներ եր հորինում՝ յուր գումարը կրկնապատկելու, յեռապատկելու, տասնապատկելու համար: Այո՛, նա մինչև անգամ զգում եր ինչ-վոր հեռավոր, թույլ կապ յո՛ւր և յուր իդեալի, յուր յերազների վերջնակետ հրեայի մեջ: Վոչ վոքի չեր ասում, բայց զգում եր: Յեվ հանկարծ՝ բոլոր ցնորդները վոչնչանում են, բոլոր ծրագիրներն ուդն են ցնդում և, ի վերա այսր, նա վորբանում ե: Խսկ մայրը այդ թշվառ, անլեզու կինը յուր դառը հառաչնըներով, ախուվախով, արցունքներով ավելի զորացնում ե նրա վիշտը: Այդ կինն այ-

րիանալու յե և ընկնելու յե Վարդանի վզին իր-քե անտանելի ծանրություն: Արի՛ ու նրան կերակրիր : Յեվ ինչո՞ւ յեն հարկավոր այդ մայրերը վորդկերանց համար: Ծնեցին իրանց դավակներին, փոքր ինչ մեծացրին, թող մեռնեն: Ծխո՛ւր, մռայլ ապագա...

«Գա՞յլ յեղիր, գա՞յլ կե՛ր, վոր քեզ չուտեն», հնչում եյին նրա ականջին հօր խոսքերը, վորպես առավոտյան զանդերի դողանջյունը բարեպաշտի ականջին: Գա՞յլ: Վո՞չ, զայլ ինելը քիչ ե: Պետք ե լինել ոձ, վագր, շուն, կարիճ, խայթել, կծել, կեղեքել, միայն թե՛ վոխ հանել այլ անխիղճ, անաստված, զարշելի ու զազրելի Աբրահամից: Միա՞յն նրանից: Քիչ ե. նրա յեղբորից ել, վորդիներից ել, թոռներից ել. ամբողջ տոհմից: Ա՛խ, կպատրդյոք այն յերջանիկ որը, յերբ Վարդանը միշոց կունենա հոր ավանդը կատարելու—մեկ, յուր սրտի կրակը հանգցնելու—յերկու, փողի ուժով բոլորին տիրելու ու ստրկացնելու—յերեք: Կգա, անպատճառ կգա: Վարդանն ամեն ինչ կանի, վոր հարստանա և ամենքին ներշնչի սարսափ: Այն ժամանակ նա վոչ վոքի չի խնայի: Վո՞չ բարեկամի, վո՞չ ընկերոջ, վո՞չ աղգականի:

Դեռահաս կրծքի տակ բարձրացել եր անսովոր փոթորիկ, մանկական հոգին ալեկոծփում եր: Թոպե առ ըոպե վրիժառության ավյունն այնքա՞ն սաստկանում եր նրա մեջ, վոր յերկու

Ճեռներով բռնում եր գլխի սև մազերն ու ձրդ-  
ձըդում ամբողջ ուժով։ Կարծես, այդ խիս ու  
կոչտ մազերի մեջ եր նստած Աբրահամը յուր-  
բոլոր մերձավորներով, յուր նախնիքներով ու  
ապագա սերունդներով։

Հազիվ նա դուրս եր յեկել փողոց, յերր  
լսեց յուր անունը։ Դարպասի յետեից, ձմեռա-  
յին թանձր մառախուղի միջից, հայտնվեց մի  
նիհար կերպարանք։

— Յե՛ս եմ, մի վախենար, — արտասանեց  
մի մեղմ պատանեկական ձայն։

Չեռները ցրտից կռնատակերին դրած, ամ-  
րող մարմնով դողդողալով, Մինասը մոտեցաւ  
վարդանին։

— Հայրդ ի՞նչպես ե, — հարցրեց նա։

— Մեռնում ե։

Մինասը մի ցավակցական ճիչ արձակեցով,  
մի քայլ հետ դրեց։ Խավարի մեջ մահվան անու-  
նը նրան թվաց սարսափելի։ Նա անկեղծ սրտով  
կարեկցեց ընկերոջը։

— Ո՛ո, դու մենակ կվախենաս, — ասաց  
նա, — յես քեզ հետ կդամ տե՛րտերի մոտ։ Գի՛-  
տես, մի ժամ կլինի կանգնած եյի դարպասի-  
մոտ. սպասում եյի մի դուրս յեկողի, վոր հորդ  
հասին հարցնելի։ Հայրս ե ինձ ուղարկել։ Վա-  
խենում եյի ներս մտնել, Ոսմանն ինձ կծեծեր։  
Ախ, ինչի՞ց ե մեռնում խեղճ հայրդ։

— Սպանել են, — պատասխանեց Վար-  
դանն ատամները կրծտելով։

Մինասը ցնցվեց։ Չեռները դնելով ասույա-  
գոտիի մեջ, դողդողալուն ձայնով հարցրեց.  
— Ո՞վ։

— Աբրահամ աղան։

Յեկ Վարդանը պատմեց բոլորը։ ՀայՀոյեց-  
Հոր անդութ հարստահարչին ճիշտ այն հիշոց-  
ներով, վոր լսել եր հորից մի քանի բոպե տ-  
ռաջ։

— Մի՛, մի՛, — զսպեց նրան Մինասը, վոր  
յերբեք, վո՛չ վոքի չեր հայՀոյում, — հայՀոյելր  
մեղք ե։ Դո՛ւ սուս արա, Աստված ինքն Աբրա-  
համ աղային կպատժի։

— Դու յել թող ե՛, աստվա՛ծ, աստված-  
յեթե աստված պատժող ե, թող հենց հիմա,  
հենց այս բոպեյին պատժի, վոր սիրտս հովա-  
նա։

— Գողերը, մարդասպանները, ավազակ-  
ները, ուրիշներից կողոպտողները, բոլորը  
մյուս կյանքում են պատժվում, գեհենի մեջ։

— Տերտեր-Վարդապետի պես ես խոսում։  
Մյուս կյանքը վո՞րն ե։ Չե՛մ ուզում քո մյուս  
կյանքը։ Թող այս աշխարհում լավ ապրե՛մ,  
հետո ուր տանում են տանեն հոգիս։ Անխե՛-  
յեթե ուզում ես ճշմարիտ իմանալ, իսկի մյուս  
կյանք չկա ել։

— Բաա՛, — ապշեց Մինասը։

— Հապա՛։ Մյուս կյանքը, արքայություն  
ու դժոխք խեղճերն են հնարել իրանց այրվու-  
թիրոը հովացնելու համար։ Հասկացա՞ր։

— Վա՛րդան, Վա՛րդան, — զոչեց Մինասը, սարսափելով ընկերոջ աստվածաբնդղեմ խոսքերից, — այդ ինչե՞ր ես ասում, աստված քեզ կպատժի, մեղայեկ...

— Դու հիմար ես, — արտասանեց Վարդանը արհամարհանքով:

Այդ պահին նրանք անցնում եյին Արքահամ աղայի տան մոտով: Վարդանը մի քանի վայրկան կանգ առավ, նայեց լուսամուտներին, վորոնց միջով դեպի փողոց եր սփռվել լամպարների գեղնագույն լույսը: Դա մի յերկհարկանի շինություն եր բավական յեզրոպական ճաշակով: Ստորին հարկի լուսամուտները փոքր եյին, նեղ և յերկաթե ցանցերով պաշտպանված, վերին հարկի լուսամուտները մեծ եյին և առանց ցանցերի:

Արքահամ աղան յուր ընտանիքով ընակվում եր տան վերին հարկում, իսկ ստորին հարկը ծառայում եր իրքե ամբարանոց, ուր դարսված եյին զանազան ծախու ապրանքներ, մեծ մասամբ մահուղեղեն — յերեի Մորոզովի սեփականությունը:

Արքահամն ուներ յերեք վորդի և յերկու աղջիկ: Մեծ աղջիկն ամուսնացել եր մի տարի առաջ, փոքրը զեռ տանն եր: Մեծ վորդին՝ Արքակն արդեն ավարտել եր ուսումը քաղաքային ուսումնարանում և այժմ ծառայում եր Հոր խանությում: Յերկրորդը մեծ քթով, զայն բերանով Դաստիարակության մասին առաջարկությունը, մասնաւոր առաջարկությունը:

Նում նկատեց Վարդանին՝ թե յերջանիկ հրեայի անունն Ռոշիդ չե, այլ Ռոդշիլդ: Յերրորդ վորդին վեց տարեկան մանուկ եր Սամուել անունով:

Նայելով լուսամուտներին, Վարդանը յերկակայեց ամբողջ ընտանիքը նստած սեղանի շուրջը հանգիստ ընթրելիս: Նրա վոխը գըրգըռվեց, մանավանդ զեպի յուր հասակակիցները: Հանկարծ՝ նրա գլխում ծագեց մի չար միտք — վրիժառության մի սոսկալի միջոց: Գիշերվա կիսին կոտրել ներքին հարկի լուսամուտները, թափել ներս նավթ և վառել: Քանի մի բողեյում կրակը կդրավի ամբողջ ամբարանոցը, հետո կանցնի վերին հարկը տնեցիների քնած պահին: Յեզր Արքահամ աղան կայրվի յուր ամբողջ ընտանիքի ու ամբողջ հարստության հետ: Յեզր վո՛չ միայն նա, այլև Խօրայելը յուր ընտանիքով, վոր ընակվում ե տան մյուս մասում: Ի՞նչ հիանալի միտք: Բայց ո՞վ կիրադրծի նրան: Ինքը Վարդանը: Ո՞ո, վո՞չ վտանգավոր ե: Գուցե Ռոմանը: Վո՞չ, նա հիմար լեզդի յե, այսպիսի բաներ չի անի, նրա վրիժառության միակ վենքը դաշույնն ե:

— Ա՛խ, վո՞րտեղ ե Մկիչը, — չշնջաց Վարդանը, շարունակելով յուր միտքը լսելի ձայնով, — նա անվախ տղայ յե: Նա կարող ե անել:

— Ի՞նչ կարող ե անել, ի՞նչ ես խոսում, — զարմացավ Մինասը, — դնա՞նք, ի՞նչո՞ւ կանու-

Նեցիր այս տան առաջ: Հայրդ կմեռնի առանց  
սուրբ հաղորդության, մե՛զք ե:

— Կո՛րիր, դու լավ ընկեր չե՛ս, վախկու  
ես:

Նա շարունակեց ուղին: Մի քանի քայլ  
անցած՝ դարձյալ կանգ առավ: Վրիժառության  
փափազն արդեն այնքան զորեղ եր նրա մեջ,  
վոր սառնասիրտ անցնել ատելի տան մոտով  
անկարող եր:

— Մի՞նաս, մի քար գտիր, — պատվիրեց  
ընկերոջը:

Մինասը գետնից վերցրեց մի բռունցքա-  
չափ քար և տվեց նրան:

— Մինաս, դու ինձանից լավ քար գցող  
ես, հաղա՛, փորձի՛ր. իկարո՞ղ ես, ա՛յ այն  
մեջտեղի լուսամուտին խիել:

— Ինչո՞ւ խիեմ:

— Հենց այնպես, ի՞մ խաթրու:

— Վո՛չ, զավ չե. ներսում մարդիկ կան,  
քարը կդիպչի նրանց:

— Ը՞ը, յես քեզ մարդ ասողին ի՞նչ ասեմ,  
դոչեց վարդանը:

Նա ամբողջ ուժով քարը գցեց դեպի վե-  
րին լուսամուտներից մեկը: Լսվեցին փշրվող  
տպակինների հնչյուններ ամայի փողոցի մթու-  
թյան մեջ: Վարդանն ինքը յուր արածի հետե-  
վանքից սարսափելով, փախավ առանց հետ  
նայելու:

— Այդ ի՞նչ մրիր, ինչո՞ւ, — գոշեց Մինա-

սը, հաղիվ հասնելով նրան, — զե լավ, մի՛  
փախչիր, վո՛չ վոր չի վազում յետեիցդ:

Տեր-Համբարձումն ստիպված յեղավ սուրբ  
հաղորդությունը Բաղդասարի բերանն ուժնի  
մտցնել: Ժայթքելով կատաղի հիշոցների բու-  
ռն հոսանքը, հիփանդը նորից զրկվել եր խոսե-  
յու ընդունակությունից: Դա յերկրորդ հարվա-  
ծըն եր, վորին, յերկու որ անցած՝ հաջորդեց  
յերրորդը: Այնուամենայնիվ, Բաղդասարն ապ-  
րեց մի ամբողջ շարաթ, այլևս մինչեւ վերջին  
շունչը չկարողանալով մի բառ արտասանել:

#### XIV

Գյուլյումն այրի յե, Վարդանը վորը, խա-  
նութին անտեր: Այժմ, յերբ մարդն այլիս հա-  
շիվները վերջացրել ե այս աշխարհի հետ, վո-  
կորները հանգչում են գերեզմանում, բոլորը  
ցավակցում են նրա կնոջ ու վորդուն: Այժմ նու-  
նիսկ ինքը Բաղդասարը, վատ մարդ չի թվում:  
Անոգուտ մարդ եր, ճիշտ ե, բայց չե՛ վոր և  
անվնաս եր: Մի քիչ լեզուն անհանդիստ եր.  
ի՞նչ անենք, խոմ զուր տեղը չեր հայհոյում  
մարդկանց:

Այսպես եր դատում Զիլզիլ քաղաքի հասա-  
րակական կարծիքը, վորի գլխավոր բնը բանն եր  
ուստա Պողոսի սափրատունը: Այժմ այստեղ  
անխնա դատափետում եյին Արքահամ աղային  
ու նրա «աներես» յեղբորը: Անխի՛զ մարդիկ,  
կլանեցիք թշվառ մարդու արյուն-քրտինքով

վաստակած հարստությունը, իրան ել գերեզման մտցրիք, և այժմ ինքներդ ապրում եք Հանդիստ:

Սակայն այս վերջին մեղադրանքը շատ ել իրավացի չեր, Աբրահամը հանդիստ ապրելու բախտից հեռու յեր: Նա յուր հաշիվները դեռ չեր վերջացրել Մորոզովի հետ, վախենում եր, վոր պարտատերը դատ բանա Դալբաշյան յեղայրների դեմ: Դառը հանդիմանում եր Խորայիլին, վոր իրան մոլորեցրեց և զցեց վտանգի մեջ: Ի՞նչ կար, վոր ազահությունը կուրացրեց նրանց. գլուխները քաշ ուուրելուն քսան կոպել փող եյին վաստակում: Այժմ նրանց անունն արատավորվեց ամբողջ քաղաքում, խայտառակվեցին... Յեթե Մորոզովը դատ բաց անի. իսրող են նրանց մինչև անդամ բանտ նստացնել:

— Դատարկ բան ե, Մորոզովից իսկի՛ մի վախենար, — հանգստացնում եր յեղբորն Խորայելը, — Մոսկվան շատ հեռու յե այստեղից: Վոչ վոք ոխոկ չի՛ անի այստեղից այստեղ գալու ու մեր դեմ դատ սկսելու: Մոսկվացիները կովկասցիների խանչալից վախենում են: Մեկ ել վոր ի՞նչ բան ե Մորոզովի համար յերեսուն հազարը, վոր նրա պատճառով յուր գլուխը դարձաղալի մեջ զցի:

Ավելի ճնշում եր Աբրահամին Բաղդասարի մահը: Այս հանկարծակի մահը ծանրացել եր նրա սրտի վրա: Պատրաստ եր յուր պարտքը հա-

տուցանել հանգուցյալի ընտանիքին լիովին, միայն թե կարողանար լոեցնել վրդովված իսղձի ձայնը, բայց Խորայելը չեր թողնում:

— Եշի վրա նստելը մի ամոթ, իջնելն յերկու, — Կրկնում եր նորամոլ վաճառականը թուրքերեն առածը թուրքերեն լեզվով, — յեթե հիմա մեր պարտքը տանք Բաղդասարի ընտանիքին լիովին, կասկածողներն ել կհավատան, վոր սուտ ենք կոտր ընկել, Մորոզովն ել մանեթին մանեթ կուզի: Միհնույն ե, Բաղդասարը խոմ մեր փողերով հարուցյալուն չի՛ առնի: Ո՞վ եր նրան խնդրում մեռնել. ապրեր ինչքան ուզում եր: Քեֆը տվեց, մեռավ, աստված Հոգին լուսավորի: Աշխարհ ե, յեթե մեկը չնկնի, մյուսը չի բարձրանա: Ի՞նչ Հարկավոր ե Բաղդասարին շատ փող: Նա իսկի փող ծախսելու չնորք ել չուներ: Մի կնիկ ունի, մի հատ ել վորդի, ինչ վոր թողել ե՝ հերիք ե նրանց: Փողը քեզ ու ինձ ե Հարկավոր: Անուններս խայտառակել ինձել ենք, մի քանի շահի փող հետ չգցե՞նք մեր վորդիների համար: Վերկենանք ու թքածներս հետ լիզենք: Մանեթին քսա՞ն. մի՛ կոպեկ ավելի չեմ տա...

Պակաս չեր դիմադրում Աբրահամին և նրա ավագ վորդին՝ Արշակը: Այս քսանույերեք տարեկան, նիհար դեմքով, ներս ընկած փորով և զկեռի ձևով դուրս ցցված կոկորդով յերիտասարդը յուր բարոյական կազմով ու աշխարհացյալով յուր պատքամիքը Խորայելի կատարելատիպին

եր, ավելի մեծ ախորժակով և ավելի սուր ստամներով։ Ահա թե ինչու իսրայելը սիրում եր նրան վորպես հարազատ վորդուն, չեր թագյ նում նրանից վո՛չ մի առետրական գաղտնիք և միշտ կրկնում եր յեղբոր մոտ. «Արշակն ապագա ունե»։ Մինչդեռ նույն սերը չեր տածում դեպի յուր յերկրորդ յեղբորվորդին՝ Դանիիլը։ Սրտով բարի, թեև վոչ առերես զգայուն, Դանիիլը հասկանում եր, վոր յուր հոր ու հորդեղբոր արարքը զատապարտելի յե։

Մի որ նա ասաց Արշակին.

— Յես ամոթից կարմրում եմ Վարդանին, փողոցներում տեսնելիս։

— Ինչո՞ւ։

— Ինձ թվում ե, վոր նրա հորը մենք սպանեցինք։

— Հիշար ես, վոչինչ չես հասկանում։

— Հասկանում եմ, հա՛վատա, ամեն բան հասկանում եմ, վորքան ել ինձանից թագյանք։

— Թագյնելու բան չկա։ Վաճառականներ ենք, ապրանքներու փթում ե ամբարներում՝ սնանկացանք։

— Սուտ ես ասում Արշակ։ Մեր հայրն ու հորյեղբայրը շատ ստոր բան են արել։

— Վոր լեզուդ փորդ քաշես՝ վատ չի զինի։

— Հայրիկը վատ մարդ չե, մեր հորյեղբայրն ե նրան խելքից հանողը։ Միշտ ասել եմ,

ելի պիտի ասեմ։ աշխարհում միայն ազնվությամբ կարելի յե բախտավոր լինել։

— Ոհո՛, այդ վո՞ր վարժապետն ե քնզ այդ դասը տվել։

— Դրա համար վարժապետի դասեր հարկավոր չեն, բավական ե, վսր խիզճ ունենանք։

— Ինչպես տեսնում եմ, դու իմ գլխին աստծու պատիժ ես դառնալու։

— Կղառնամ։ Արշակ, յեթե ուրիշների փողերն ուտես։

— Ե՛հ, չե՛նք ուտի, — քաղցած կմնանք։ Դու վաճառականություն չես հասկանում։

Յերեխա չե՛ս, բայց հիմար ես ու հիմար ել կմնաս։ Մարդ պիտի մոր աբգանդից խելոք ծնվի, թե չե՛ ուսումն ու խրատը նրան ի՛նչ կողնեն։ Մինչեւ անգամ վեց տարեկան Սամուելը քեզանից աչքաբաց ե։ Այ, տե՛ս, Սամուել, գոչեց Արշակը յուր կրտսեր յեղբորը։

Վիճաբանությունը տեղի ուներ Դալբանյանների տան առջեւ ձգված բավական մեծ պարտիզում։ Սամուելը յուր փոքրիկ քրոջ՝ Մարթայի հետ խաղում եր, ձյունից գնդակներ չինելով ու միմյանց վրա դարսելով։ Մանուկն իսկույն վագեց, մոտեցավ կարմրած այտերով ու կապտած ձեռներով և կանգնեց յեղբայրների առջեւ։

— Սա՛մուել, դու բազե՞ն ես շատ սիրում իմ հավր, — հարցըց Արշակը։

— Բազե՞ն։

— Ինչո՞ւ:

— Հային ինչ ե, թռչել չի կարողանում: Բազեն ծիտ ե բռնում:

— Արշակը հանեց գրպանից յերկու թղթադրամ—մի կեղտոտ ու հնամաշ յերեք ոռութլանոց և մի նոր, մաքուր ոռութլանոց:

— Սա՛մուել, վո՞րն ես ուզում, — հարցրեց նա ցույց տալով թղթադրամները:

— Ա՛յ, ա՛յս եմ ուզում, — խլեց Սամուելը հնամաշ թղթադրամը:

— Սա՛մուել, վոր մեծանաս, ի՞նչ պիտի անես:

— Պիտի գնամ Մակարիա, Մոսկով:

— Ինչո՞ւ:

— Ապրանք բերելու, ծախելու, վոր փող աշխատեմ:

— Տեսնո՞ւմ ես, — զարձակ Արշակը Դաւիթին, — վեց տարեկան ե, բայց շատ բան ե հասկանում:

— Աշակերտ ե:

— Այո, յես եմ սովորեցնում նրան: Քեզ ել են խրատում, բայց աստված քեզ այնքան ինչք չի տվել, վոր լսածդ ու տեսածդ հասկանաս: «Ամոթից կարմրում եմ Վարդանին փողոցներում տեսնելիս»: Բա՛ն ասաց: Հարցնող լինի, ինքը Վարդանը կկարմրե՞ր քեզ տեսնելիս, յեթե դու նրա տեղն ունա քո տեղը լիներ: Խոկի՛: Մատդ բերանը չգնես, կուլ կտա: Մի քանի անդամ նա յեկել ե մեր մազազինը, հետը շատ եմ

խոսել, գիտեմ ինչ պտուղ ե: Դու տես, նա մեծանա՝ ինչե՞ր ե անելու, քանի քանիսին ե չորտափի վրա թողնելու: Վաճառականությունը մոր արդանդումն ե սովորել: Դու նրան մի խղճա: Քո մասին հոգս արա, ա՛ խեղճ, ա՛ վողորմելի...

## XV

Ստեփան Փորսողյանը յուր զոքանչին խորհուրդ եր տալիս համաձայնվել Դալբաշյաներից ոռութլուն քսան կոպեկ ստանալու: Սնանկ վաճառականին շատ ել պատին սեղմելը լավ բան չե: Մարդիկ մի անգամ արդեն իրանց վարկը կորցրել են. շատ բարկացնես, մի կոպեկ ել չեն տա:

Դժբախտությունն այնքան իսխտել եր Գյուլյումի հավատը դեպի մարդիկ, վոր նա յուր փեսայի անկեղծության մասին անգամ կասկածում եր: Միակ մարդը, վորին կարող եր անպայման հավատալ, հարազատ յեղբայրն եր—Մարտիրոս Հախվերդյանը: Բայց նա ել տասնութեց տարուց ավելի յեր, բացակա յեր Զիլզիլ քաղաքից, թափառում եր առետրական գործերով զանազան յերկրներում: Կերջին տարիները նրա նամակներն ստացվում ելին Անդրբասպյան յերկրից: Այստեղ նա քայլ առ քայլ ուղեկցում եր ոռուսաց զորքերի հաղթական արշավանքին, մի պատերազմող գնդի մատակարարելով զանազան մթերքներ:

Գյուլյումը Վարդանի ձեռքով գրեց յեղբորը, խնդրելով, վոր շուտով գա ու կարդի բերի հանգուցյալի գործերը: Մի ամիս անցած յեկավ Հախվերդյանը: Քույրերը հազիվ ճանաչեցին նրան: Զիլզիլ քաղաքից հեռանալիս Մարտիրոսը հազիվ քսան ու մեկ տարեկան յերիտասարդ եր բարակ, նորաբույս բեղերով, նիհար, թուլակազմ: Այժմ առողջ, կարմրես, զվարթ տղամարդ եր, արդեն բավական ձերմակացած քոնքերով և ճաղատ գլխով: Նրա ամբողջ եյությունից բուրում եր գործնական և ինքնավստահ մարդու այն աշխույժը, վոր ծույլ ու անվստահ մարդկանց ներշնչում և նախանձ և ատելություն: Թափառելով յերկրից յերկիր, պարապելով ամեն տեսակ տուրական գործերով, շվիվելով ամեն տեսակի մարդկանց հետ, կրելով հազար ու մի նեղություն, այժմ յերեսունույթ տարեկան հասակում, կյանքի փորձիչ բովով անցած մի տղամարդ եր, վորին խարելը գրեթե անհնարին եր:

Առանց ժամանակ կորցնելու Հախվերդյանը ձեռքն առավ քրոջ գործերը, մտավ Դալրացյանների հետ բանակցության մեջ և իսկուն հասկացավ ինչ տեսակ մարդկանց հետ գործունի, ուստի շտապեց հաշիվները վերջացնել մանեթին քսան կոպեկով: Այնուհետև խանութի ապրանքները բավական հաջող գնով վա-

ճառեց ուրիշի և հաշիվները բարեխղճաբար ներկայացրեց Գյուլյումին:

Այս բոլոր գործերի մեջ նրան ոգնում եր Վարդանը: Յեվ նա ցույց տվեց այնպիսի հաշվագիտություն ու մտքի արթնություն, վոր զարմացրեց Հախվերդյանի պես հմուտ մարդուն: Բաա՛, այդ մանուկն ինքն ըստ ինքյան կատարյալ գանձ է: Կարճ միջոցում փորձված մարդու ձեռքի տակ կարող ե դառնալ հազվագյուտ վաճառական: Մեղք ե նրան թողնել անուշադիր:

— Գյուլյում, — դարձավ մի յերեկո Հախվերդյանը յուր քրոջը, — թող Վարդանին հետև տանեմ Բագու:

— Ա՛խ, առանց նրան յես կարո՞ղ եմ ապրել: Աչքի ցույց մի հատիկ տղա ունիմ, նրան ել ոտարություն ուղարկեմ: Հերեք չե՞, վոր դուինք գնացիր ոտար յերկիրներ, մորդ թողնելով գառն արտասուքի մեջ: Խեղճ կնիկը հենց քո՞ հոգսից մեռավ:

— Ե՛ե, չե՞ , իմ հոգսից մեռավ: Պառավեց, մեռավ ելի: Այս մայրեն ել զարմանալի յեն, տիզի պես կպչում են իրանց վորդկերանց, պոկ չեն գալիս:

— Քեռի, ի՞նչ լավ ասացիր, դրուստ սըրտիցս ձայն տվեցիր, — գոչեց Վարդանը, վորի համար մայրն արդեն ձանձրալի յեր դարձել:

— Դե յավ, հին դարմանը քամուն չտանք: Քե՞զ ել Գյուլյում, Վարդանի հետ կտանեմ Բա-

գու: Վարդանը, փառք աստծու, հիմար տղա  
չե, մինչեւ անդամ խելոք ե, ի՞նչպես կարելի յե  
նրան թողնել այս հետ ընկած քաղաքում: Սկա-  
ժիտ պաժալստա, ի՞նչ կա Զիվիլում, հըմ՝  
փողրաթնե՞ր, մեծ մեծ առուտուրնե՞ր, թե՝  
հանքեր կամ գործարաններ: Յա վամ սկաժու,  
պարշիվիյ գորոդ, մարդ ել չկա, վորի հետ  
յերկու խոսք խոսես քաղաքավարի: Ա՛յ, Բա-  
գուն ուրիշ բան ե. Մայո պաշտենիյ: Հիմա՝  
ով գլխում մի հավի չափ խելք ունի, այնտեղ  
պիտի զնա: Հինգ տարի յեր չեյի տեսել, այս  
անդամ անցնելիս՝ յերեք որ մնացի, լավ տեսա.  
ձանաչեցի: Յա վամ սկաժու, գորոդ պրամիշ-  
լենիյ. շատ առաջ կդնա: Յե՛ս ել վճռել եմ  
այնտեղ գործ սկսել: Սկակոյ ստատի կմնամ  
Ասիսարադում: Ել այնտեղ պոլզա չկա: Աչքիս  
առաջ ոռուսները թուրքմենների չալմաները քա-  
մուն տվեցին—պրծագ, ել եքսպեդիս չկա, ար-  
միան հետ ե գալիս, առուտուրն ել ընկնում ե:  
Բա՛գու, Բա՛գու, ուրիշ վո՛չ մի տեղ: Ուզում  
եմ այնտեղ մի լավ մագաղին բացանել, սամիյ պերվիյ սորբ: Ուժե մագաղինի տեղն ել մըտ-  
քումս նշանակել եմ: Պրյամո ծովի ափին:

— Քե՛ռի ինչի՞ մագաղին ես ուզում բաց  
անել, չիթ ու կտորի՞,— հետաքրքրվեց Վար-  
դանը:

— Շոռ, չիթ ու կտորի՞: Աստված մի'  
արասցե: Սկաժիտ պաժալստա, չիթ ու կտորի  
առուտուրակմն ի՞նչ աշխատանք կա: Արշինին

քառորդ կամ շա՛տ շա՛տ կես կոպե՞կ: Նաչի-  
խայտ, յա վամ սկաժու, նաչիխայտ: Մանու-  
ֆակտուրան, բրատեց մոյ, ծույլ մարդկանց  
համար ե, վոր նստեն ու արշինով ճանձեր  
փախցնեն:

— Բաս վո՞ր առուտուրն ե լավ:

— Վո՞րը: Հե՛, բրատեց մոյ, մունիյ  
առուտուրը հիմա թանգագին խմիչքների և  
զակուսականների մագաղինն ե, վո՞տ շոռ...

— Այդ ի՞նչ բան ե. բաղկալի դուքքա՞ն:

— Բաղկալի, չե՛, չափկալի. հա՛, հա՛,  
հա՛: Տի, բրատեց մոյ, նիշեվո նեպանիմայշ:  
Խմ ասածն ե. «Մագաղին գաստրանամիչեսկիխ  
տավարով ի զագրանընիխ նապիտկով», վո՞տ  
շոռ: Մե՛ծ մագաղին կլինի, շա՛տ մեծ: Վի-  
վեսկի յերկայնությունը կլինի տասն արշին,  
լայնությունը յերկու արշին, տառերը վո՞-  
կեզոծ: Վիվեսկան մագաղինի համար  
մեծ բան ե, իհարկե ցիվիլիզովանի քա-  
ղաքում, վոչ թե այս քարուքանդ Զիվիլում:  
Այստեղ իսկի վիվեսկաներ ել չկան, յեթե կան  
ել՝ ժեստի կտորներ են կամ հին պաղենուներ  
կամ կոտրած վեղրոյի տակ: Դռների վրա կլի-  
նի ուրիշ վիվեսկա, պատկերով, պանրմայե՞շ:  
Պիտի նկարել տամ մի տղամարդ, հաստ փո-  
րով, մի ձեռին կալբաս, մյուս ձեռին՝ պիվոյի  
բաժակ: Նեմեցի պատկեր: Վորտեղ եմ տե-  
սել այսպիսի պատկե՞ր: Չորտ յեկո զնայետ-  
այնքան քաղաքներ եմ տեսել, վոր մտքից

ընկել ե: Հա՛, Ռոստովում, Սադովի փողոցում:

— Մադագինում ի՞նչ ապրանքներ կլինեն, քե՛ռի...

— Այնպիսի՝ ապրանքներ; Վոր տեսնողի բերանի ջուրը գնա: Ա՛յ, որինակ, մի կողմում՝ պոլկաներում գարսած կլինեն շիշեր կոնյակ, ոռմ, խերես, վերթուղ, մարսալա, մի խոսքով, զուբրովկայից ու բյարինովկայից սկսած մինչև շամպանսկիյ: Հասկացա՞ր: Մյուս կողմում, սարդինկա, կիլկի, անշուռ և այլն: Հետո զատոյկի վրա կշարենք տապակած գառ, խոզի ճուռ, հնդուհավ, հորթի միս, տեսակ-տեսակ ձկներ, խավյարներ, կարբաներ, տեսակ-տեսակ պանիրներ—շեստեր, ոտկփոր, ժերվե և այլն և այլն: Հետո հատակի վրա տոպրակներով ու արկղներով չոր պտուղներ, շաքարեղեններ, քաղցր խմորեղեններ: Ա՛յ, թե ինչպիսի մադագին կունենամ: Բաղկացի դուքա՞ն. չե՛ չախկալի դուքան, վոտ յեշչո...

— Որական քանի՞ ոուբլու ապրանք կծախենք, քե՛ռի, —կամեցավ իմանալ Վարդանը յեռանդուն վաճառականի ապագա ձեռնարկության եյականը:

— Նիլիզա սկագայտ: Աջողությունից և կախված: Իմ ասած մադագինի պես մադագին դեռ չկա Բագվում: Յեշչո, բրատեց մոյ, նարոդ նե աբրազովանիյ: Յես մեծ հույս ունիմ

մարյակների վրա: Մարյակները, բրատեց տի մոյ, ուտել-խմելում ընկերներ չունին: Նովորոստիյսկումն եմ տեսել: Հենց այս պատճառով ել մադագինս ծովի ափումն եմ բաց անում, վոր նրանց աչքի առաջ լինի: Իմ հաշվով, առաջին տարի գուրսով որական ամենաքիչը հիսուն ոուբլու ապրանք կծախենք: Հետո բրատեց մոյ, տորդովկին բաշիրիցա կլինի, կարող ենք հասցնել որական հարյուր, յերկու հարյուր ոուբլու, ադնիմ ալովով նիլիզա սկագայտ...

— Բաս յես գնացի Բագու, մայրեկ, — գոչեց Վարդանը միանգամայն վոգեորգված:

— Մի քանի տարի դու ի՛մ մոտ կլինես դործակատար, իհարկե, ոոճիկով: Հենց վոր տոռուտուրը սովորեցիր, պոլնիյ կամպանիոն կշինեմ: Հորիցդ մոտ հինգ հազար ոուբլի յեմնացել: Քիչ փող չե խելոք տղայի ձեռքում: Այս շաբաթ յես կզնամ Բագու, մադագինը կսարքեմ: Դու դեռ ուսումդ վերջացրու: Աշխատիր ոուսերեն գրել-կարդալը լավ սովորել, ևս առավել խոսելը: Ո՛ո, բրատեց մոյ, ոուսերեն լեզուն մեր ժամանակում մի կտոր հաց ե: Հայրս շատ տղետ եր, չհասկացավ այս բանը, ինձ ուսում չտվեց: Բայց հետո, փառք աստծու, ինքս սովորեցի: Հիմա յես խոսելում վարժապետիդ վարժապետիցն ել լավ եմ: Սամիյ պերվի սորք խոսողներից իմացիր ինձ: Շատ ել գաղեթ կարդացող եմ, այս ել իմա-

ցիր: Վաճառականը, վոր գազեթ չի կարդում,  
հենց մի ղըուշ: Յես վոր գազեթ չկարդայի,  
իսկի կիմանայի, վոր ոռուը թուրքմենի հետ  
վայնա ունի ու կդնայի փողբաթ վերցնելու:  
Հա, յես Բագվից քեզ համար կուղարկեմ մի  
շավ գիրք: Այնտեղ ամեն բան կա վաճառա-  
կանի համար, կկարդաս, անդիր կանես...:

## XVI

Այդ յերեկոյից Վարդանի յերազների ու  
ցնորքների կենտրոնը դարձավ Բագուն: Արդեն  
այդ քաղաքի անհուն հարստության վերաբեր-  
մամբ նա շատ բան եր լսել և շատ անդամ եր  
մտածել այնտեղ տեղափոխվելու մասին: Այժմ  
յերեակայությամբ ապրում եր այնտեղ և  
պատկերացնում յուր քեռու մազաղիան և յուր  
գործունեյությունը: Ահա նա, մուշտարինե-  
րով շրջապատված, հազիվ կարողանում ե կա-  
տարել նրանց պահանջները: Դրամարկղի մոտ  
կանգնած ե քեռին, ուրախ ու զվարթ և կու-  
րատում ե ոռուերեն: Հարյուրանոցներ ե, վոր  
ստանում ե, մանրացնում ու զցում դրամարկղի  
մեջ: Յերեկոները նրանք հաշիվ են անում  
որվա յեկամուտը և միասին ուրախանում:  
Վերջապես Վարդանն ընկերանում ե քեռո-  
հետ, և այլն և այլն...

— Մա՛յրիկ, — դարձավ նա մի անդամ  
յուր մորը յերեակայության բորբոքուն պա-

հին, — հիշում ես Հայրիկն ինձ վրա ի՞նչ պարտք  
դրեց:

— Ի՞նչ պարտք:

— Նա ասաց. «Ոու պետք ե Հարստանաս  
և Արքահամ աղայից ու նրա վորդիներից վրե-  
ժըս առնես»: Հիշում ես: Ասաց. «անիծվես,  
յեթե խոսքս չկարտարես»:

— Ախ, այդ խոսքերն անեծք եյին, վո՛ր-  
դի, հայրդ սիրուց ցավելուց եր ասում: Մոռա-  
ցիր...

— Մոռանա՞մ: Հորս զրկեցին, սպանե-  
ցին, փողերս կլանեցին. յե՞ս մոռանամ Արքա-  
համ աղայի ովլդիներին: Ամեն անդամ փողո-  
ցում այդ Արշակին կամ Դանիելին տեսնելիս,  
արյունս գլխովս ե տալիս. ուզում եմ քարով  
նրանց քիթ ու պոռունգը ջարդեմ: Բայց պոռշ-  
ներս կծելով, ինձ պահում եմ ու ինքս ինձ  
ասում. «սպասի՛ր, սպասի՛ր», ժամանակը  
կդա»:

— Ա՛խ, վորդի, դու վատություն անելու  
մասին ես մտածում: Այդ լավ չե: Սովորիր  
մարդկանց զավություն անել, միայն լավու-  
թյուն, թե չե ամենքը քեզ կանիծեն: Դու կար-  
ծում ես փողից ավելի հարստություն չկա՞---  
կա: Լավ անունը փողից շա՛տ շա՛տ թանգ ար-  
ժէ: անուն աշխատիր:

— Վոր փող ունենամ, անունն ել յետելոց  
կդա:

Այս եր տասնուչորս տարեկան պատանու

դավանանքը և հանուն այս դավանանքի, նա  
պատրաստ եր անել ամեն ինչ:

Շուտով նա Բագվից ստացավ քեռու խոս-  
տացած գիրքը: Այս ուրիշ վոչինչ եր, յեթե  
վոչ առետրական տարրական կանոնների ու  
հաշվեգիտության ձեռնարկ: Մի գիրք, վոր  
Վարդանի ժամանակավոր ավետարանը դար-  
ձավ: Նա կարգում ե և ուսումնասիրում, անդիր  
անում մուրհակների, պայմանագրերի և առե-  
տրական նամակների որինակները:

Մի որ նա հայտնեց ընկերներին, թե չու-  
տով գնալու յե Բագու: Յերեաց, վոր մենակ  
ինքը չի յեղել ավետյաց յերկրի մասին յերա-  
դողը, այլ համարյա թե բոլոր աշակերտները:

— Դո՞ւ ինչ պիտի անես այնտեղ, — կես  
տրհամարանքով հարցրեց նա Մինասին:

— Պիտի մտնեմ ուեալական ուսումնարա-  
նը ուսումն շարունակելու:

— Ոհո՛, գիմնազիա՛: Բա՛րեկամ, լավ  
կանես, վոր հորդ արհեստը սովորես գլուխդ  
քաշ: Արհեստավորի վորդու համար առած  
ուսումդ ել շատ շատ ե:

— Հայրս ել այդպես ե ասում, — պատաս-  
խանեց հեղ պատանին ամենայն հեղությամբ՝  
բայց հորյեղբայրս չի թողնում: Դու տեսե՞լ  
ես հորյեղբորս: ԶԵ՞՛: Վեց տարի յե նա Բագ-  
վումն ե: Վարժապետություն ե անում: Ամեն  
շարաթ յես հորս կողմից նրան նամակ եմ  
դրում: Շատ հավանել ե նամակներս: Գրում ե

հորս, վոր թույլ տա՝ ինձ ուսումն շարունա-  
կելու:

— Յերկի, շատ հարուստ մարդ ե, — ծաղ-  
րով նկատեց Վարդանը:

— Հա՛րուստ չե, բայց ինձ շատ ե սիրում:  
Ինքը պսակված չե, ուզում ե ինձ վորդեգրել:

— Յես ել գնում եմ Բագու, — մեջ մտավ  
զանգրահեր լեռնը:

— Քե՞զ ով ե տանում:

— Մենք ընտանիքով ենք գնում:

— Դուք կարծում եք, յես այստեղ կմնա՞մ,  
ասաց քառ Մարտիրոսը, վոր վոչ մի բանում  
չեր ուզում հետ մնալ ընկերներից, — հորս կա-  
զաչեմ, վոր ինձ ել ուզարկի:

— Պակասը գո՞ւ եյիր, — գոչեց Վարդանը,  
միանգամայն կատաղելով բոլոր ընկերների  
դեմ, վորոնք կարծես խոսք մեկ եյին արել  
նրա հացը ձեռքից խլելու: — Մկիչ մենակ դու  
յես մնում այստեղ:

— Իսկի ել չեմ մնա, — լրացրեց շարաճը-  
ճին, ինչո՞ւ պիտի մնամ, ձեզանից պակա՞ս եմ,  
ինչ...

Հետո ընկերները խոսեցին իրանց ապա-  
գայի մասին, յուրաքանչյուրը պարզեց յուր  
փափագն ու ձգտումները:

Մինասն ասաց, թե կկամենար այնքան  
ուսում առնել, վոր իմանար, թե որացույց  
կազմողներն ինչպես են գուշակում լուսնի և  
արեգակի խավարումը:

Լեռնը խոստովանեց, թե ցանկանում ե  
ամբողջ աշխարհը ճանապարհորդել և բոլոր  
լեզուներով խոսել:

Մկիչը փափագ հայտնեց գոնե մի անդամ  
գնալ Դաղստան, տեսնել Շամիլի ծննդավայրը  
և այն տեղերը, ուր նա պատերազմել ե:

Մարտիրոսը ջերմ ցանկություն արտա-  
հայտեց ոկոլողոջնի նադզիրատել դառնալու:

Մարտին Բաղդանիչը հիշելով Բաղդասա-  
րի նվերները, մինչև վերջը հավատարիմ մնաց  
յուր հասմկրության մեջ և Վարդանին տվեց  
ընտիր ուսումնավարտի վկայական: Զվշտաց-  
րեց և մյուս նրա ընկերներին, յուրաքանչյու-  
րին տալով լավ թվանշաններ: Վերջին որը  
պատկառելի տեսուչը մի խրատական ճառ  
ասաց ուսումնավարտներին:

Աշխատեցեք մարդ դառնալ, —ավարտեց  
նա յուր խոսքը, —վոր յերեսս պարզ անեք ձեր  
ծնողների առջև: Զմոռանաք Մարտին Բաղ-  
դանիչին, հա՞, թե չե ձեր բոլորի հերը կանի-  
ծեմ: Լավ միտներդ պահեցեք, վոր ինչքան ել  
մեծ մարդ դառնաք, պատճառը յես եմ: Յես  
եմ ձեզ նման ավանակներից մարդ շինել: Դե,  
հայդա, գնացեք. բարի ճանապարհ: Եհե՞,  
չե՞ղավ, չե՞ղավ, կացեք, կացեք.. Այս հենց  
իսկույն ցույց տվեցիք ձեր եշությունը...  
Հենց այդպես, դուզ-դուզ գնո՞ւմ եք ե՞լի...

— Սմիռնո՞ւ, —աղաղակեց Մկիչը, —աղա-  
կանդնեցեք շարքով: Այդպես: Կերցրեք գդակ-

ներդ: Այդպես: Ուազ, դվա, տրի, հուռուս՝,  
կեցե Մարտին Բաղդանիչ... յերեք անդամ...  
Դե, բավական ե...

Յեվ, կանգնելով տեսչի առջև, ձեռը զին-  
վորականի ձեռվ պահեց քոնքի մոտ, շուռ  
յեկավ և «ուազ, դվա» ասելով հեռացավ:

— Այ չար սատանա, —գոչեց Մարտին  
Բաղդանիչը ծիծաղից թուլանալով:

Մի ամիս անցած Վարդանը գնաց Բագու-



№	№	Գ ի ն Ե
1.	Հ. Թումանյան — Պոհմեր	1—2 — 55
2.	Դեմյան Բեղմի — Վասանավորներ և առակեր	3 — 35
3.	Գ. Սունդուկյան — Պեպո	4—6 1 —
4.	Մ. Շոլխով — Հերկած խոպան	7—14 3 40
5.	Մուրացան Նոյի ագռավը	15—16 — 55
6.	Նարդոս — Աննա Սարոյան	17—18 — 65
7.	Շեխափիր — Վենետիկի Վաճառականը	19—21 1 15
8.	Հ. Թումանյան — Սասունցի Քաղիթը	22 — 35
9.	Հ. Թումանյան — Կոտկի շապիկը	23—24 — 65
10.	Օբրկի Սարկովիչ — Բորովարկա	25—28 1 60
11.	Հ. Թումանյան — Լեզնդներ, բալադներ, իրպեր	29, 33, 39 1 15
12.	Յոհ. Բելիքը — Քորչ շարքեր	30 — 25
13.	Շիրվանզադե — Արտիստ	31—32 —
14.	Աստ. Զորյան — Գրադարանի աղջիկը	34—35 — 70
15.	Հ. Պարսիյան — Քաղաքագրության պատ-	36—38 1 20
16.	Շեխափիր — Մակութը	40—42 1 15
	Մամուլի տակ են	
17.	Հ. Պարսիյան — Մեծապատիկ մուրացկան-	43—45
	ներ	
18.	Շիրվանզադե — Վարդան Ահրումյան	46—47
19.	Հ. Թումանյան — Թարգմանություններ փոխադրություններ	48—49
20.	Շիրվանզադե — Զար վոգի	
21.	Նարդոս — Ըստիր պատմվածքներ	
22.	Շիլիք — Վելչելի Տելլ	
23.	Շեխափիր — Ոթելլո	
24.	Շեխափիր — Համեստ	

ՀՀ Ազգային գրադարան



NL0356093

48376

ԳԻՒԾ 65 Կ.

ԿՈԶՄԱ 25 Կ.

ШИРВАНЗАДЕ  
ВАРДАН АЙРУМЯН

Гиз. ССР Армения, Эревань, 1931